# ԱՌԱԿՔ ԵԶՈՊՈՍԻ ՓՌԻՒԳԻԱՑՒՈՅ ։

Թարգմանեալ յԱնգղիացւոյ բար-
բառոյ 'ի հայս յԱղայ Մարգա-
րա Շեհրիմանեանց՝ առ 'ի պա-
տիւ [illegible] բարեկամի իւրոյ Ա-
ղայ Շամիրի Շամիրեանց, և
'ի յօգուտ և 'ի զբօսանս Հայկա-
կեան բարեաց ընթերցողաց ։

*Արտագրեալ 'ի [illegible] խաղաղական օրինա-
կէն 'ի Հ. Կամիլոսս վրդպէ Կարա-
պետեան Կոստանդնուպօլսեցւոյ 'ի
Միաբանութենէ Աբբայապատին Հօր
Մխիթարայ [illegible] և Աբ-
բայի ։*

Տպագրեալ ծախուք Նորին Ա-
ղայ Մարգարայ ։

Ո ✣ Կ
✣ ✣ ✣
Կ ✣ Ա

Ի ԹՐԻԵՍՏ.
Յամի տն 1784.
'Ի Տպարանի Հարց Մխիթարեանց ։
Հրամանաւ Մեծաւորաց ։

Ի վ՟ր Իմաստասիրութեան Դէմահամբաւն
Եզովբոսի:

ԵԶովբոս ծնաւ յԱմորեայ քաղաքին, որ է ՚ի մեծ Փռիւգիոյ անուանեալ գաւառին: Ըստ բաղդին էր ծառայ արծաթագին, յորում եկաց բազում ժամանակս: Մարմնովն էր յոյժ տգեղ և անհեթեթ, գլուխն երկայն գգմաձև նման չերտաւոր սեխից. սեագոյն. ունչքն տափարակ. ստուարաշուրթն. սապատողն. մեծափոր. սրունքն թիւր և կարճ: Այլ թէպէտ ըստ արտաքին կերպարանացն էր հրէշ իմն այլանդակ, սակայն ըստ ներքին կարողութեանցն էր իմաստուն յոյժ և հանճարեղ: Տեսեալ տ՟ն ն՟ր զայլանդակ և զանյարմար կազմուածոյն մարմնոյն, եդ զնա յայգին գործել զերկիր: Յաւուր միում ծառայք տ՟ն ն՟ր կամեցան խայտառակել զնա զրպարտութ՟բ: Տէրն Եզովբոսի ընկալաւ ՚ի պարգև զպատուական թուզս, և

եբեր ՚ի տուն, և ինքն գնաց ՚ի բա-
ղանիս. երկուք ՚ի ծառայից նորա տես-
եալ զայն, ցանկացան ուտել. և առ
՚ի զերծանել ՚ի յանդիմանութենէ և ՚ի
պատժոց տն իւրեանց, խորհեցան ար-
կանել զայն յանցանս ՚ի վր Եզոբոսի,
որ դիպուածով իմն գտաւ ՚ի տան վս
երեք հարկաւոր գործոյ իւրոյ. զի ծան-
րախօս և թլուատ եւ գոլով ասեն, ոչ
ինչ պատասխանի կարասցէ տալ տն
իւրում առ ՚ի ջատագովութեն իւր, և
այսպէս զերծցուք մեք ՚ի պատժոց:
Օ այս խորհուրդ հաստատեալ ՚ի մէջ
իւրեանց, կերին զթուզն բովանդակ:
Իբրև դարձաւ տրն ՚ի բաղանեաց, և
եգիտ կերեալ զթուզն, եհարց ցծա-
ռայսն իւր, թէ ո՞վ զայն արար. և
նոքա պատասխանի ետուն, թէ Եզո-
բոս եկեր զնմ: Բարկացեալ Նմա
տրն՝ կամեցաւ գանել. այլ Եզոբոս ոչ
կարելով բարւոք խօսել, նշանացի ա-
ղաչեաց զնա փոքր մի համբերել, և
իսկոյն գնացեալ ՚ի խոհանոցն. եառ
սափոր ինչ ջուր գաղջ. և բերեալ ա-
ռաջի տն իւրոյ, էարբ զայն, և
ապա արկեալ զմատն ՚ի բերանն՝ փս-
խեաց. և ոչ այլինչ էր, բայց միայն
ջուր:

ջուր ։ Խնդրեաց 'ի նմանէ, զի և ծառայիցն ասասցէ առնել այնպէս. որք երբև արարին 'ի բռնադատել նմին իւրեանց, ետուն արտաքս զնորոգ կերեալ թուզսն, որով և յամօթ եղեն, և պատուհասեցան ըստ արժանեաց ։

Յետ այսորիկ վաճառեաց զնա տէրն նոր վաճառականի ումեմն ասիացւոյ, և նա առեալ տարաւ զնա յԷփեսոս ընդ այլ գերիսն իւր ։ Զայլսն վաճառեաց անդ, և մնացին երեքին միայն, որոց մինն էր երգեցիկ, երկրորդն քերթող, և երրորդն Եզոպոս. զորս, ըստ ազդելոյ նմա ուրումն բարեկամի իւրոյ, առ 'ի առաւել բարւոք վաճառել, տարաւ 'ի Սամոս ։ Էր յայնժամ 'ի Սամոս Քսանթոս փիլիսոփայն, որ ուսուցանէր անդ զիմաստասիրութիւն ։ Յաւուր միում 'ի շրջելն ընդ աշակերտաց իւրոց, ետես 'ի հրապարակի զորսա, և մատուցեալ առ երգեցիկն՝ եհարց թէ ուստի՞ իցէ, և զի՞նչ գիտիցէ առնել. Նա ետ պատասխանի, թէ է 'ի Կապպադովկիոյ, և գիտէ առնել զամ ինչ. Մատեաւ առ քերթողն, և եհարց նմա նոյնպէս. Նա պատասխանի ետ, թէ է 'ի Լիդիոյ, և գիտէ առնել զամ ինչ ։ Ապա եկն առ

Եզոբոս, և եհարց ցնա ևս՝ թէ զի՞նչ
գիտէ, նա ետ պատասխանի, թէ ոչ
ինչ: Ասէ Քսանթոս կարի իմն նուաղ
է ոչինչն. Եզոբոս ասէ, որովհետև
ընկերքն իմ գիտէին առնել զամ ինչ,
թողին ինձ նոքա և ոչինչ: Եհարց
Քսանթոս, կամի՞ս, զի գնեցից զքեզ.
պատասխանի ետ Եզոբոս, զի՞ հարցա-
նես զիս, արա որ ինչ հաճոյ է քեզ, զի
ոչ ոք բռնադատէ զքեզ. յիշխանութե
քում է առնել զայս ծախս, կամ ո՛չ
առնել: Ասէ Քսանթոս, եթէ գնեցից
զքեզ, փախիցե՞ս յինէն: Ասէ Եզոբոս,
եթէ կամիցիմ առնել զայդ, ո՛չ եկից
առ. քեզ հարցանել խորհուրդ, որպ դուդ
առնես 'ի գնելդ զիս: Ասէ Քսանթոս,
արդարև բարւոք ետուր զպխեդ. այլ
ա՞վ թէ զիա՞րդ տգեղ և գարշելի ես.
և նա ասէ, փիլիսոփային ո՛չ պարտի
հայել 'ի գեղեցկութի երեսաց, այլ
մանաւանդ դիտել զգեղեցկութի հոգւոյ
և մտաց: Յայնժամ հաճեցեալ Քսան-
թոսի ընդ պատասխանին նր, գնաց առ
վաճառականն, և եհարց թէ զի՞նչ խնդրէ
վ՞ն նր. ասէ վաճառականն. եկիր դու
սատ ծաղր առնել զիս, և արհամար-
հել զվաճառս իմ. թողեալ զարժա-
նիսն

նխան գնելոյ, զհրեշդ զայդ ընտրեցեր. արդ ասեմ քեզ, զի եթէ զմինն յերկուցս գնեցես, զայլանդակդ զայդ տաց քեզ ձրի : Ասէ Քսանթոս, խաբիս դու. եթէ կամիս վաճառել, ասա ինձ թէ զի՞նչ խնդրես, զի զսա միայն կամիմ ես գնել. և վաճառականն վաթսուն դենար պահանջեաց վ՟ն ն՟ր, զոր վճարեալ իսկոյն Քսանթոս, եառ զնա յիւր ծառայ : Յաւուրն երկրորդի առեալ ընդ իւր Քսանթոս զԵզովբոս գնաց 'ի պարտէզ մի գնել անդ բանջար. պարտիզպանն քաղեալ զայն ետ ցԵզովբոս. և 'ի վճարել ն՟ն ն՟ր զփողսն, ասէ պարտիզպանն, փոխանակ փողոյ խնդրեմ, զի տացես ինձ, թէ ընդէ՞ր բանջարքն զորս ես բազում խնամով սերմանեմ և հոգամ, պեղելով զերկիր, ռոգանելով, և յոյժ փութակար իրաց որք շուրջ զնովաւ բուսանին՝ մաքրելով, այսու ամենայնիւ անագան բուսանին քան զխոտն վայրի, զոր երկիրն առանց գործելոյ ինքնին բուսուցանէ : Պատասխանի ետ Եզովբոս՝ յանձնարկել ն՟ն իւրում խօսիլ, և ասէ. սերմանք բանջարոցն զորս դու սերմանես՝ են իբր խորթք նկատմամբ երկրի, իսկ վայրի բոյսքն են հարա-

զաւք նր . արդ ուր մայրն խնամով հո_
գայ զհարազատ որդիս իւր , իսկ զխորդ_
որն ոչ այնչափ , զի է մօրուն , նոյն_
պէս և երկերն :

Յետ քանի ինչ աւուրց Քսանթոս կա_
մեցաւ առնել ճաշ աշակերտաց իւրոց ,
և հրամայեաց Եզոբոսի գնել զլաւագոյն
միս՝ զոր կարիցէ գտանել , և պատ_
րաստել նոքօք զհամադամ կերակուրս .
և նա երթեալ գնեաց զբազում լեզուս , և
նոքօք հանդերձեաց զնամ՛ , զանազան տե_
սակօք յօրինեալ : Իբրև ժամ եղև ,
բազմեցան յուտել : Տեսեալ Քսանթոսի՝
զի ամ կերակուրքն 'ի սկզբանէ մինչև
ցվերջն էին լեզուք , բարկացաւ յոյժ ,
և ասէ . ո՞չ ասացի քեզ գնել զլաւա_
գոյն և զընտիր միս , և արդ զի՞է զի
զմի միայն լեզուս պէսպէս կազմեալ եդիր
առաջի մեր : Պատասխանի ետ Եզոբոս՝
և ասէ , և զի՞նչ է լաւագոյն քան զլե_
զուս կամիս դու : Քսանթոս խռովեալ
'ի ցասմանէն՝ ասէ , զխո՞րդ մարթ է լինել՝
թէ ոչ գտցի 'ի քաղաքիս ազնուագոյն
ինչ քան զլեզուս : Ասէ Եզոբոս , ես ըստ
իմում դատման ոչ կարէի գտանել ինչ
լաւագոյն քան զլեզուս : Արդ սա՛ ինձ
աղաչեմ , միթէ գտանի՞ յաշխարհի ես
պա_

պատուականագոյն , օգտակարագոյն , և ազնուագոյն քան զլեզուն՝ որ է բանալի 'ամ գիտութեց , և հմտութեց · Նմին երբ թուի ինձ թէ լիով կատարեալ եմ զհրաման տէրութեդ՝ դնելով առաջի իմաստասիրացդ զայս : Քսանթոս ասէ · բարւոք է · բայց պատուիրեմ քեզ , զի վ՛ա ընթրեաց զոր կամիմ առնել առ վաղիւ սոյն հրաւիրելոցս , գնեսցես զեւ յուեգոյն և զանարգ միսս՝ զորս կարես գտանել , և նոքօք պատրաստեսցես մեզ ընթրիս : Գնաց Եզօբոս , և արար ոչ յառաջն , և եդ դարձեալ առաջի նց զլեզուս : Իբրև ետես զայն Քսանթոս , ասէ ցասմամբ ցԵզօբոս : Այս մին է զոր պատուիրեցի քեզ գնել զյուեգոյն և զանարգագոյն միս : Ասէ Եզօբոս , և իցէ՞ն չարիք և յոռութիք յաշխարհի , որք ոչ գայցեն յառաջ 'ի լեզուէ , ապա ըստ 'ամի կատարեցի զհրամանս քո : Զայս լուեալ բազմականացն , արդարացուցին զնա :

Գտաւ երբեմն Քսանթոս 'ի կռչունս ինչ , ընդ իւրոց աշակերտաց , և իբրև 'ի գինեբրբուս եղեն , տեսեալ ուրումն յաշակերտաց Քսանթոսի , թէ նա էր կարի յոյժ արբեալ , եհարց թէ արդեօք

կարէ՞

կարէ՞ք դք ըմպել բովանդակ զջուրս ծո-
վուն. և պատասխանի իմաստասէրն,
թէ ոչ միայն է կարելի, այլև թէ ինքն
յօժարութբ ըմպել կամէր զայն՝ մինչև
ոչ թողուլ և ոչ կաթիլ մի. 'ի Հակա-
ռակին նմ աշակերտքն, բաստս արկին.
Քսանթոս խոստացաւ կորուսանել զտուն
իւր, եթէ ոչ կարասցէ ըմպել. և յայն
սակս եդ 'ի գրաւ զմեծագին մատանին
իւր, զոր կրէր 'ի գիշ՟: Զկնի գինեբրուացն
գնացին այլ իւրաքանչիւր 'ի տեղի իւր-
եանց. և Քսանթոս դարձաւ 'ի տունն իւր.
'ի վաղիւն անդր երբև թափեցաւ 'ի գինւոյ
յարեաւ յանկողնոյ, և գնաց 'ի լուա-
նալ զձեռս իւր, տեսեալ զի չէր մա-
տանին առ իւր, եհարց ցԵզոպոս, թէ
գիտիցէ՞ արդեօք, թէ ո՞ւր իցէ թողեալ
զմատանին, պնի ետ Եզոպոս. կորուստ
մատանւոյդ չէ ինչ, այլ դու Հոգա զկո-
րուստ տանդ բովանդակ. և զայս ասացեալ
պատմեաց նմա զիրսն զորս արարեալ էր
նր 'ի կոչունսն: Լուեալ զայն Քսան-
թոսի, 'ի մեծ վարանս եմուտ, և խնդ-
րեաց յԵզոպոսէ եթէ ինչ գտանել. որ ետ
նմ խրատ, զի զայս օրինակ եղծցէ զբաստն
իւր. յորժամ գան ամենեքեան ընդ ա-
շակերտօքն այնմիկ 'ի պաՀանջել զկա-

տա-

տարումն խոստմանն , ասասցէ ցնա ընդ որում եդ զդաշն . արդարև խոստացայ ես ըմպել զՋուրս ծովուն բովանդակ . և կամ հաստատուն 'ի վերայ խոստմանս , այլ զի ոչ խոստացայ ըմպել և զՋուրս գետոցն 'ի միասին . որք հոգ հոսեն անդ , Նախն երբ խնց դու Նախ զամ գետս աշխարհի զի մի հոսեսցեն 'ի ծովն , և յայնժամ ես արբից զբովանդակ ջուրս ծովուն : Հաճոյ թուեցան յոյժ Քսանթոսի այս բանք Եզոբոսի , և այնպ արարեալ , զերծաւ 'ի վտանգէ անտի :

Յայնմ ժամէն եղև 'ի քաղաքին Սամոսի նշանաւոր ինչ դիպուած . և էր այս . Ըմ ըստ ամէ կատարէր յայնմ կղզւոջ տօն ինչ հրապարակական , յորում ամ մեծամեծք և գործակալք քաղաքին մեծաշուք զգեստուք զարդարեալք հանդերձ բազմութբ ժողովրդոց՝ տանէին զմատանի մի մեծագին , զոր 'ի Նուագելն ժողովրդոց 'ի պատիւ չաստուծոց իւրեանց զներբողեանս և զերգս՝ արկանէին 'ի ծով : Դէպ եղև 'ի միում Նուագի , զի յորժամ Նախարարք Սամոսի արկին զմատանին զայն 'ի ծով զարմանալի իմն հանդիսիւ , արծուի մի

յանկարծակի խոյացեալ անդ, էառ զմա-
տանին, և ամբարձեալ սակաւ ինչ ՚ի
բարձունս, տարաւ ընկէց ՚ի ծոց գեր-
ւոյ միոյ ։ Տեսեալ իշխանացն Սամոս
կղզւոյն, տրտմեցան յոյժ. և ՚ի կաս-
կածի եղեն՝ թէ ձախողակ ինչ երաց
իցէ այն գուշակ. նմին իրի իսկեւիսկ
գնացին առ Քսանթոս, որ յայնմ ժամի
էր առաւել քաջ, և իմաստուն հա-
մարեալ քան զամենեսին. և աղաչէին
զնա ասել նց զմեկնութ՟ի անցիցն ։ Քսան-
թոս գլխովին տարակուսեալ, թէ զինչ
պէսի տացէ նց. խնդրեաց ՚ի նոցանէ ժմկ
խորհելոյ զայնմանէ. և ՚ի դառնալն նր
՚ի տուն տրտում և վարանեալ, եհարց ցնա
Եզոպոս զպատճառ տրտմութեն. և նա
պատմեաց նմա զայն ։ Ասէ Եզոպոս. մի
ինչ հոգար վնկ, այլ ՚ի վաղիւն յոր-
ժամ յանդիմանն լիցիս առաջի բազմու-
թեն ժողովրդոց և իշխանաց, ասասցես.
թէ ես ոչինչ ինք պակաս գտայ յու-
սուցանել ձեզ, զորինչ ընթերցմամբ,
և քննութբ կարացի գիտել զընութէ,
որ յերկրի աստ գործի. այլ զկենդա-
նեաց, և զթռչնոց ոչինչ գիտեմ. զի
նք արտաքոյ կարգի բզմ ինչ գործեն,
որոց ոչ եմ ես մտեդեալ ։ Ունիմ ես

զար-

զարծաթագին ծառայ մի, որ Հնդկ պարա-
պի յայտնիկ․ զնա կոչեսջիք, և պատ-
մեսցէ ձեզ զնմ․ և յորժամ կոչեսցեն
զիս, ես ասացից նոցա զմեկնութիւն անցիցն :
Դաձոյ եղեն Քսանթոսի բանքն Եզոբոսի․
և արար նոյնպէս : Իբրև լուան ժողո-
վուրդքն, կոչեցին զնա նոյնժամայն․ Եւ
Եզոբոս և եկաց 'ի մէջ ամբոխին․ յա-
ռաջ քան զնմ ձոռոմ և զօրաւոր բանիւ,
խնդրեաց 'ի նոցանէ ազատ առնել զինքն
'ի գերութենէ յորում էր․ առ այս բան
իշխանքն և ժողովուրդք ստիպեցին ան-
դէն զՔսանթոս ազատ առնել զնա․ որ
թէպէտ և կարի դժկամակ եղև, այլ
ո՛չ կարացեալ հակառակ կալ նոցա, պար-
գևեաց զնա իշխանացն, ազատ առնելով
'ի գերութենէ :

Եզոբոս յետ ազատութեան իւրոյ սկսաւ բա-
ցատրել զանցս արծուոյն, և ասէ : Պի-
տասջի՛ք բնակք Սամոսի, զի արծուին
որ յափշտակեաց զարքունական մատանին
տարեալ եարկ 'ի ծոց գերւոյ միոյ, նշա-
նակէ զիշխան ոք կամ զթագաւոր, որ կամի
և հնարի արկանել ընդ լծով ծառայու-
թեան զքաղաքս ձեր․ և 'ի գերոյ ազատ,
առնել զձեզ ծառայ և գերի․ և զօրէնս
զսահմանադրութի՛ս և զկառավարութի ձեր
եղ-

եղծանել, և ջնջել։ Զայս լուեալ բնակ-
չացն Սամոսի յահի մեծի և 'ի տրտ-
մութե եղեն։ Այլ յետ ոչ բազում ժամուց
Կրեսոս արքայն Լիդիոյ առաքեաց առ նոսա
զդեսպանս հանդերձ գրով, պահան-
ջելով 'ի նոցանէ զծանր հարկս. զորս
եթէ ոչ կամիցին տալ, սպառնայր մտել
ընդ նոսա պատերազմ, և կործանել զկղ-
զին. զոր հաւրեալ բնակչաց քաղաքին, 'ի
խորհուրդ ժողովեցան. և մեծամեծք նոյ
հաճեցան տալ զհարկն առ 'ի զեր-
ծանել 'ի պատերազմէն. բայց առաջին
կոչել նախ զԻզոպոս, և առնուլ խոր-
հուրդ 'ի նմանէ. և նա եկեալ առ նոսա,
ասէ, բարւոք է, բայց խորհեցարուք, զի
երկու ճանապարհս աշխարհիս ունին զդժուա-
րութիւս. ազատութիւնն 'ի սկզբանն է
դժուարին, և աշխատալի. այլ 'ի վախ-
ճանի է օգտակար, դիւրին, քաղցր, և
սիրելի. իսկ ստրկութիւն զորին հա-
կառակն 'ի սկզբանն է դիւրին, անար-
գել, և ոչ թէ հաճելի. այլ յետոյ,
է խիստ, տաղտկալի, և լի թշուառութ̃
և խռովութ̃. ընդ որ և հաճիք զայն-
ընտրեցէք։ Իբրև լուան զայս քաղաքա-
ցիքն, առ հրոկ ազդակեցին, թէ մեք
գոլով ազատ, ոչ կամիմք այսպ դիւրաւ

լի-

լինել ստրուկ, և ծառայ. և զայս ա-
ռացեալ արձակեցին զհրեշտակսն զլա-
նալով արքային զհարկն պահանջեալ :
Հրեշտակքն դարձ արարեալ առ արքայն
իւրեանց, եդին առաջի զպատասխանիս
բնակչացն Սամոսի, և ասացին, Թէ ունին
նք խորհրդատու Եզոպոս զոմն անուն,
որում և անսան. ցորչափ նա ընդ նս
է, ո՛չ ոք կարէ յաղթել նց. զի քաջ
խորհրդով իւրով առաջնորդէ նց : Արդ
եթէ հանցես 'ի նոցանէ զայրն, կարող
ես նուաճել զկղզականսն. և արկանել
ընդ լծով ծառայութե քո : Յայնժամ
Կրեսոս արձակեաց զհրեշտակսն դար-
ձեալ առ բնակիչսն Սամոսի, և խնդրեաց
'ի նոցանէ, զի տայցեն նմ զԵզոպոս. և
խոստացաւ նց, զի եթէ տայցեն զնա 'ի
ձեռս նր, հաշտութի արասցէ ընդ նս, և
ազատ կացուսցէ զքաղաքն : Քաղաքացիքն
յերկիւղէ հարկին և մարտին Կրեսոսի՝
հաճեցան տալ զԵզոպոս 'ի ձեռս նր, առ
ազատութի իւրեանց : Եհաս լուր խոր-
հրդոյ նց յունկն Եզոպոսի, որ ժողո-
վեալ զնս 'ի միասին՝ խօսեցաւ և ասէ.
Ես վս սիրոյ զոր ունիմ առ անզուգա-
կան քաղաքս այս, ոչ միայն պատրաստ
եմ մատնել 'ի ձեռս Կրեսոսի, այլ մե-
ռա-

առնել բիւր անգամ սակս ազատութեան ձե_
րոյ . այլ ոչ զի մի խաբիցիք . և լաւ ևս
ծանիջիք զդիտաւորութի՛ն Կրեսոսի . և ական
յայտնի տեսջիք զհարկաւորութի՛ն մնալոյ
իմոյ 'ի ձեզ , ասացից ձեզ զառակս զայս :
Դէպ եղև՝ զի գայլքն և ոչխարքն յար-
եան 'ի պատերազմ՝ ընդ միմեանս . 'Ի
նպաստ ոչխարացն շունքն այնչափ անհնա_
րին կատաղութի՛ք մարտնչէին , մինչև ոչ-
ինչ վնաս կարէին առնել նց գայլքն .
և թէպէտ ոչ դադարէին նք դարա_
նակալ լինել նց , բայց տքնութի՛ն շանցն
ընդունայն գործէր զդարանս նց : Ա-
ռաքեցին գայլքն հրեշտակս առ ոչխարսն
ասել ցնս , թէ եթէ ցանկան հաշտութի՛
առնել ընդ գայլոցն , և դադարել 'ի
պատերազմէ , տացեն զշունսն 'ի ձեռս
նց : Ոչխարքն գոլով պարզամիտք ,
ագէտք , և անխորհուրդք , հաւա_
տալով հաշտիլ , և անկասկած արածիլ ,
և յանդորրու կեալ , ետուն զշունսն 'ի
ձեռս գայլոց , որք զկնի սպանանելոյ զնս
և պատառելոյ , դարձան դարանակալ
լինել ոչխարաց . և չունելով նց պաշտ_
պանս , համարձակ կալան զնս և սպա_
նին : Վաղ ծանեան քաղաքացիքն զի-
մաստ առակին , և այնուհետև կամէին

ունել զնա առ ինքեանս, բայց Եզոպոս ոչ կամեցաւ մնալ, այլ առեալ առաւել դիւրաւ ազատութին նց, ել և գնաց ընդ գեսպանսն Կրեսոսի, և իմաստութե և ճարտարութե իւրով զիջոյց զնա գթալ ՚ի վր բնակչացն Սամոսի, և հաշտել ընդ նմ :

Յետ այսորիկ կամեցաւ Եզոպոս շրջել ՚ի զանազան տեղիս : Ուստի յետոյ գնաց ՚ի Դելփիա քաղաք մեծագանձ, և վն լինելոյ աթոռ Ապողոնի նոյն, մեծահռչակ յոյժ. իսկ քաղաքացիքն էին կծծի և անարգ, նմին իրի եւ անտի երթալ այլուր, և ՚ի հարցանել քաղաքացւոցն զնա, թէ որպէս թուեցաւ նմ քաղաքն, օրինակաւ իւիք եցոյց զանարգութին նր, և նք կակածեալ զի մի երթեալ այլուր վատահամբաւ արասցէ զնս, խորհեցան հնարիւք ինչ սպանանել զնա զրպարտութբ. և գնացեալ ՚ի ծածուկ, եդին ՚ի մախաղի նր զգեղեցիկ անօթ մի ոսկւոյ, որ էր ՚ի տաճարին Ապողոնի : Իբրև չուեաց ՚ի քղքէն Եզոպոս, նոյն հետայն առաքեցին զկնի նր սպասաւորս դատաստանի զի կալցեն զնա, սեղանակապտութ յանցանաց պարտաւոր գտեալ, որում չէր գիտակ ամենևին Եզոպոս. այլ նք

ո՛չ անսացին նմ՛ , Թէպէտ և բզմ՛ ան_
գամ երդուաւ , թէ ինքն չէ արարեալ
զայն. ապա մնռեցին սպանանել զնա գա_
հալածելով ՚ի բարձրաբերձ ինչ ժայռէ :
Եզոփոս բզմ՛ առակօք , և օրինակօք հնա_
րեցաւ ապրել ՚ի ձեռաց նց , ցուցանե_
լով նոքօք զանմեղութի իւր , այլ իբրև
եանս թէ անհնարին է , անէծ զնս .
որում ոչինչ փոյթ արարեալ , արկին
զնա ՚ի ժայռէ անտի ՚ի վայր , որով
ջարդեալ ոսկերաց նր մեռաւ անդէն :
Այլ յետ այնորիկ քաղաքացիքն ըն_
կալան զպատուհաս մեծի եղեռնութե
իւրեանց տարաժամ ժանտախտիւ , որք
հարցեալ զ՚ածոն զպատճառս հարուա_
ծոցն , ընկալան պխէ , թէ է վ՛ս մեղաց
անպարտ արեանն Եզոփոսի , յորոյ ՚ի
քաւութի զղջացեալ նց յոյժ յոյժ , հրա_
կալ շիրիմ յօրինեցին ՚ի վր ջախեալ
մարմնոյ նր , առ ՚ի մշտնջենաւոր գովուի
՚նր. և ՚ի պատիւ նր կանգնեցին զգեղազանց
արձան նր անդ . այլ և ոչ այսուիկ դա_
դարեաց պատուհաս նց , զի ՚ի հասանել
լրոյ սպառման նր ՚ի Յունաստան , եկին
բազում իշխանք , և մեծամեծք ՚ի քա_
ղաքն Դեղփեայ . և առուգեալ հաւաս_
տեաւ զճշմարտու ՚ի անցիցն մի ըստ միոջէ ,

կա_

կալան զգլխաւոր սպանօղս նր , և չա-
րաչար մահուամբ սատակեցին զնս ։
Որդ այսպիսի իմն օրինակաւ մեռաւ
Ուգոբոս , որ արար զբզմ իմաստալիր , և
հանճարեղ առակս , զորոց զսակաւն 'ի
բազմաց առաջի արասցուք առ 'ի
զբօսանս և 'ի խրատ նորա-
վարժից ։



# ԱՌԱԿՔ ԵԶՈՎԲՈՍԻ

## ՓՌԻՒԳԻԱՑՒՈՅ։

### ԴՎԵՐԱՑ ԱՔԱՂԱՂԻ.

Աքաղաղն 'ի պեղելն զաղբանոցն եգիտ զակն մի մեծագին. և ասէ այսմ. եթէ գտաներ զքեզ ակնավաճառ ոք՝ փարթամանայր. զի ճանաչէր՝ թէ որչափ ինչ արժես դու, այլ ինձ չես այնչափ շահաւէտ, և ոչ մեծ ինչ համարիմ զքեզ, զի առաւել կամէի զհատ մի գարւոյ, քան զա՟մ ականս պատուականս աշխարհի։

Իմաստ առակիս.

Մեծագին ակամբ նշանակի իմաստութին, և աքաղաղաւ այր չարամիտ. զի

չար մարդիկ ոչ սիրեն զառաքինութիւս, և ոչ գիտեն մէ առ ինչ 'ի գործ ածին։

## Ի վր̃ Գայլոյ և Գառին։

Գայլն ըմպէր ջուր 'ի գլխոյ հեղեղատի իրիք, և տեսեալ զԳառն մի զի ըմպէր 'ի ստորև այնր հեղեղատի, ասէ ցնա՝ թէ պղտորես զջուրն։ Գառն սաստնեալ յահէն, աղաչէր զգայլն ներել ինքեան. իբր զի էր անմեղ. և թէ ինքն ըմպեալ էր 'ի կարի խիստ ստորին վայրէ. և այսպ ոչ էր կարող պղտորել զվայրն յորմէ ինքն ըմպէր։ Այսու նմին բարկանայր գայլն։ Ոչ գիտես դու անօրէն, ասէ. զի վնասես ինձ հանապազ. հայր քո և մայր քո հնգ թշնամի եղեն ինձ, և դու կրեսցես զպատիժ նոցա իրաց։

Իմաստ առակիս։

Առակ է վաղնջական. Դիւրաւ գտանի ցուպ 'ի հարկանել զշունն։ Եթէ կարող ոք կամի վնասել քեզ, դիւրաւ գտցէ զպատճառ։ Կարի խիստ վրիպեցաւ նա, որ չէ կարող զդէմ ունել։

Ի

## Ի վր Շան, և Պատկերի նորա։

Անցանէր շունն ընդ գետն ունելով ՚ի բերան իւր զկտորակ մի մսոյ, և վ՟ զի միսն առնէր զստուեր ՚ի ջուրն, տեսեալ՝ թէ այն էր մեծագոյն, եթող զայն զոր ունէր ՚ի բերանն, և զհետ եղև ստուերին։ Շրտուցեալ ՚ի կորստենէ մսոյն, և գտեալ զինքն արտաքոյ յուսոյ, սկսաւ ասել։ Թշուառական դու, պ՛րտէիր դնել սահման բաղձանաց և ախորժակի քո. եթէ չէիր յիմար, շատ էր քեզ այն զոր ունէիր, այժմ վ՟ անմտութե՛ քո չունիս ինչ ամենեին։

Խրատ առակիս։

Առակաւս խրատեմք չթողուլ զստոյգս սակս անըստուգից։

## Ի վր Առիւծու և այլոց կենդանեաց։

Առիւծն արար զդաշնադրութի ընդ ոչխարի, և ընդ այլոց կենդանեաց, զի երթեալ յորս՝ որ զինչ և որսայցեն հասարակաց լինիցի։ Կալան զեղջերու մի և մասնատեցին. ամենեքեան պահանջէին

զբաժին իւրեանց ։ Զարմացեալ առիւծն ասէ․ առաջին մասն իմ՛ է, զի արժա-նաւոր եմ քան զձեզ․ երկրորդն ևս է իմ, զի զօրագոյն եմ քան զձեզ, և զի աշխատ եղէ առաւել քան զձեզ․ զերրորդն և զչորրորդն ևս պահանջեմ․ և եթէ դուք ո՛չ տայցէք՝ կորնչի բարե-կամութի՛ւն ։ Լուեալ զայս ընկերացն, գնացին 'ի բաց լռեալք․ ոչինչ բանս խօսելով ամենեքին ։

Իմաստ առակիս ։

Հաւատարմութիւնն հանապազ եղև դժուարագիւտ, ևս առաւել յայսմ ժա-մանակի․ և ևս դժուարաւ գտանի առ կարօղս․ և միշտ եղև այսպէս․ վ՟ն այ-սորիկ լաւագոյն է կեալ ընդ հաւասարից իւրոց․ զի որ վարի ընդ զօրաւորաց քան զինքն, միշտ պարտի թողուլ զիւրսն․ և ընդ հաւասարի իւրում միշտ փաստն է հաւասար ։

## 'Ի վր՟ ընտանի և վայրենի Էշան ։

Ընտանի մուկնն գնաց 'ի գեօղն զբօ-սանել․ և մուկնն շինեին հրաւիրեաց, և արար նմա ընթրիս․ եդ առաջի նր՟ զոր ինչ պահեալ էր 'ի ձմերան առ 'ի առ-

տանել նմա պատիւ ։ Ընտանի մուկնն արհամարհեալ զչքաւորութիւն գեղջն, գովէր զառատութիւն քաղաքին ։ 'Ի դառնալն եւս ընդ իւր զգիւղական մուկնն, առ 'ի ցուցանել նմա իրօք զայն զոր ասէր, և արար նմա զպատուական հանդերձանս կերակրոց. և մինչդեռ ուտէին նք, լուեալ զշռնչիւն բանալեաց փականին, երկուցեալ փախեան ։ Գիւղական մուկնն ոչ գոլով սովորեալ, հազիւ կարաց թաքչել ։ Իբրև գնաց 'ի բաց ծառայն, դարձաւ անդրէն ընտանի մուկնն 'ի սեղանն, և կոչէր զգիւղական մուկնն, որ յերկիւղէն նուաղէր. և ասէ ցընտանին, թէ ա՞րդեօք այս վտանգ իցէ միշտ. նա պատասխանի ետ՝ թէ այո՝ բայց պարտ է արհամարհել ։ Յայնժամ ասէ գիւղական մուկնն, կերակուրք քո այս լեղւոյ քան մեղու տան զճաշակ. ես առաւել ընտրեմ զչքաւորութիւն իմ ընդ ապահովութեան. քան զմեծութիւն քո ընդ այսչափ տառապանաց ։

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ, թէ մեծութիւնք երևին զուարճալիք. այլ բարիք նկատեմ, զի ունին յինքեանս զվտանգս և զդառնութիւնս ։

Ի

## Ի վր Գայլոյ և Կռնկան:

Գայլն յուտելն զոչխար մի ըստ պատահման ոսկր մի կառուեցաւ ՚ի փող նր. և որոնելով զոք որ օգնեսցէ նմա, զոչ ոք եգիտ որ փոյթ տարցի այնմ: Յա հուսկ յետոյ բազում խոստմամբ աղաչեաց զկռունկն. որ երկայնաձիգ կտցաւ իւրով եհան զայն ՚ի փողէն: Յետ հանելոյն. երբ պահանջեաց ՚ի նմանէ զխոստացեալն իւր. ասէ գայլն. անմիտ. ոչ շատ է քեզ. զի կեաս. դու պարտական ես շնորհս մատուցանել ինձ. զի եթէ կամեցեալ էի, կարող էի հատանել զպարանոց քո, յորժամ դու մխեցեր զայն ՚ի փող իմ:

Իմաստ առակիս:

Լաւ է նախնի, թէ զոր ինչ արարեր ապերախտին՝ ընդ վայր կորուսեր:

## Ի վր Շինականի և Օձի:

Շինական ոմն գտեալ զկիսամահ օձ մի ՚ի մջ ձեան, տարաւ մերձ առ հուրն: Օձն իբրև ստացաւ զոյժ՝ և զթոյնն, ոչ կարելով հանդուրժել ջերմութեան հրոյն,

Թիւնաւորեաց զոտանն ոչխոյն ։ Եւ շի-
նականն յարեաւ 'ի վր նր մահակաւ, և
եհար զվրէժ անիրաւութեան, ասելով.
Այս այն է զոր հատուցեր ինձ. զի
կամեցար բառնալ զկեանս նորա, որ
փրկեացն զքեզ ։

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ, թէ բազում անգամ
նոքա, որոց դու օգտեցեր, վնասեն
քեզ ։

### Ի վր ծերացեալ Առիւծու ։

Առիւծն 'ի մատաղութե իւրում բա-
զում թշնամիս ստացաւ ինքեան. և 'ի
ծերութեանն պատահեցաւ 'ի նո-
ցանէ. քանզի անասունքն առին զվրէժս
իւրեանց. խոզն հարկանէր զնա ատա-
մամբք. ցուլն եղջերբք. և նախքան զա-
մենեսեան էշն, կամելով բառնալ զվա-
ղնջական անունն հեղգութե իւրոյ. նա-
խատէր զնա բանիւք. և աքացէր ։ Յայն-
ժամ առիւծն լալով ասաց ։ Նոքա
որք վնասեն ինձ, առնեն զպարտս իւր-
եանց. զի և ես խոցեցի զնոսա. բայց
նոքա ևս որոց բարիս արարի, ոչ միայն
ոչ օգնեն ինձ, այլ և վնասեն ։ Եւ
եղէ յիմար, զի արարի թշնամի զբա-
զումս ։

զուամ․ այլ ես առաւել յիմար․ զի ապստամբեցայ 'ի սուտ բարեկամէն:

Իմաստ առակիս:

Առակս խրատէ․ թէ 'ի բարեբախտու-թեան ոչ պարտիս ամբառնալ զանձն, և ո՛չ լինել հպարտ․ զի եթէ բաղդն փո-փոխեսցի, ամենեքին նոքա որոց արարեր վնաս՝ խնդրեսցեն զվրէժ․ և նոյն բաղդն փոփոխեալ, գործէ զերջանկութիւն 'ի բարեկամս․ ;քզի սոյն իմն է, թէ չեն բարեկամք քո, այլ սեղանոյ քում, և բաղդի քում․ որ 'ի փոփոխելն, նոքա ևս դարձուցանեն զթիկունս:

## ԻԷ Առիւծու և Այծեան:

Առիւծն գոլով քաղցեալ՝ ննջէր ընդ հովանեաւ ծառոյ միոյ․ և բազում մկունք գնային 'ի վ'ր նր․ և նա զար-թուցեալ կալաւ զմինն: Մուկնն աղա-չէր զնա զի մի՛ դիցէ 'ի բաղդատութե զմեծութի իւր ընդ նուաստուե փոքրիկ կենդանւոյ: Եւ նա եթող երթալ ա-ռանց ինչ վնասու: Յետ այսորիկ դէպ եղև, զի առիւծն կալեալ եղև 'ի թա-կարթ ինչ․ և գոչէր, և ո՛չ կարէր զերծանիլ: Մուկն ընթացաւ առ ձայն

գործմանն. և կարեկից եղև նմա, և որոնեալ զկապս դաժիցն, կրծեաց ատամամբք, և առիւծն ել և զերծաւ ։

Իմաստ առակիս ։

Առակս ուսուցանէ մեծամեծաց զգթութի. զի մարդկային իրք գոլով անհաստատք, երբեմն մեծամեծք ունին պիտոյս զնուաստ և զանարգ մարդկանէ ։

## Ի վ՛ր Ծիծեռան և այլ Թռչնոց ։

Երբև սկսեալ եղև սերմանելն վշոյ, ծիծեռն ասաց այլ Թռչնոց, զի կերիցեն զսերմն. ծիծաղեցան 'ի վ՛ր Նր ամենեքեան, և յիմար կոչեցին զնա ։ Յաճել վշոյն՝ դարձեալ ծիծեռն խորհուրդ ետ ն՛ց ապականել զայն. և նոքա նոյնպէս ծաղր առնէին զնա ։ Հասուննացաւ վուշն, և նա երրորդ անգամ խրախուսեաց զն՛ս անպիտանացուցանել զայն. յայնժամ ևս ոչ անսացին նմ ։ Ապա ծիծեռն Թողեալ զա՛մ Թռչունս, յարեցաւ 'ի մարդիկ, և արարեալ բարեկամութի ընդ ն՛ս, դաշն եդ բնակել առ ն՛ս, և բերկրեցուցանել զն՛ս երգելովն ։ Վ՛ն այնորիկ ամ Թռչունքն ըմբռնեցան 'ի վարմն. և ծիծառն Թողաւ յազատութե ։

Ի-

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ , թէ բազումք են , որք ոչ ինքեանք կարող են խորհուրդ տալ , և ոչ այլոց խորհրդոց անսան . բայց յորժամ են 'ի վտանգս , սկսանին ճանաչել , և բասրեն զանմտութիւն իւրեանց , և ասեն . զայս . և զայն ինչ պարտ է առնել :

## 'Ի վր̃ Գորտոյ , և Թագաւորի իւրեանց :

Գորտքն գոլով ազատ , խնդրեցին 'ի Դիոսէ , զի տացէ նոցա Թագաւոր : Դիոս ծիծաղէր զանմտութիւն նոցա : Նոքա դարձեալ աղաչեցին . հուսկ յետոյ Դիոս կատարելով զկամս նոցա՝ առաքեաց նոցա զգերան մի , որ անկանելով ահագին շառաչմամբ 'ի գետն , նոյն գորտքն զարհուրեցան : Այլ պատուելով զԹագաւորն իւրեանց , սակաւ առ սակաւ մերձեցան առ նա . և տեսեալ զնա այնպէս անշարժ , սկսան արհամարհել զնա . այնչափ , մինչև վերստին աղաչեցին զԴիոս , զի տացէ նոցա զԹագաւոր մի աժխոյժ և զօրաւոր : Դիոս առաքեաց նոցա զարագիլն , որ շրջելով ընդ ճախինս զնոյն գորտունս զորս և գտանէր՝ ուտէր :

տէր ։ Վ՟ն այսր անգթութե՛ գանգատեցին գորտունքն . և մինչև ցայսօր ժամանակի սակաւին գանգատեն . և ՚ի գիշերի յորժամ՝ արագիլն գնացեալ է ննջել , բողոքեն առ Դիոսն . որ վ՟ն զի ո՛չ կամեցան զբարերարն և զհեզն , կամի՛ զի ունիցին զանգութն , և զանհամբոյրն ։

Իմաստ առակիս ։

Նարոյականութիւն ։ Պէտք լինի ժողովրդեան , ոպ գորտանց , զի յորժամ ունին զթագաւոր հեզ , ասեն , թէ է անհամբոյր , և գովեն զբարութիւն առաջնոյն ։ Այս յառաջ գայ , զի հանապազ ասեն զառաջինկայն , և փափաքին նորութեց ։

## ԻԶ Աղաւնեաց և Բազէի ։

Աղաւնիք պատերազմեցան ընդ ցնոյ , և թագաւորեցուցին իւրեանց զբազէն ։ Նա իբրև թագաւորեաց , վարեցաւ ընդ նն իբրև թշնամի , և ո՛չ իբրև թագաւոր . զի սպանանէր զնո՛ և յանխնայ քան ըզցինն ։ Վ՟ն այսորիկ ցաւեցան՝ զի արարին զնա իւրեանց թագաւոր , և ասացին . լաւ ևս էր տանել պատերազմի ցնոյ , քան բռնաւորիս այսմ՝ ։

Իմաստ առակիս:

Ոչոք պարտի կարի իմն տրտնջել զմի_ ձակէ իւրմէ ոմ ասէ առակս: Բազումք զհետ լինելով նորոյն, վերստին փափա_ քեցին հնոյն:

## Ի վր Գայլոյ և Խոզի:

Խոզն մերձ էր 'ի ծնանել, և գայլն մատեաւ լինել պահապան նորա: Ասէ խոզն, չունիմ ինչ պէտս զծառայութե քումդ, եթէ կամիս առնել ինձ հա_ ճոյս, 'ի բաց գնա յինէն. զի բարեկա_ մութիւն գայլոյ 'ի հեռաստանէ լաւա_ գոյն է, քան 'ի մօտոյ:

Իմաստ առակիս:

Բարոյականութիւն, Չէ պարտ հաւա_ տալ 'ամ երաց. զի բազումք ընծայեն զանձինս առնել քեզ բարի, ոչ առ դիւրութիւն քո, այլ առ իւրեանց:

## Ի վր Եղջերուի, Գայլոյ, և Ոչխարի:

Պատահեցան միմեանց 'ի սաստիկ ձմե_ րան եղջերուն, գայլն, և ոչխարն 'ի դաշտի միում. գայլն սկսաւ շողոքորթել զոչխարն վն բրդեայ հանդերձի իւրոյ. որով ջեռնոյր, և ասէ ցնա, արժան

էր զքեզ ես առաւել զարդուք զարդարել , զի ես հեզ բնութբ և անմեղ . և ոչ իբրև զիս չար , և վատաշնորհ . այլ Թէպէտ և այսպէս եմ ես , այլ ցնծամ և զուարճանամ 'ի տեսանելս զնա որք բնութբ բարի են : Զայս ոչ առ այլ ինչ ասէր , բայց եթէ առ 'ի առնուլ 'ի նմանէ սակաւ ինչ բուրդն , քանզի դողայր 'ի ցրտոյ : Եղջերուն ես կացեալ 'ի միւս կողմն՝ սաստկէն 'ի ցրտոյ խնդրեաց 'ի նմանէ բուրդն : Ոչխարն ըստ հեզ բարուց իւրոց գթացեալ , ետ նմա սակաւ ինչ բուրդն յողանց իւրոց . և ապա դարձեալ առ գայլն , ասէ . կարծեմ Թէ դու ես պէտս ունիս , տաց և քեզ . այլ զգո՛յշ լեր , զի մի՛ յայլ ինչ մտաբերեսցես . ապա Թէ ոչ , գիտեա՛ հաւաստեաւ , զի որպէս նենգաւոր դատապարտեալ կախեսցիս :

Իմաստ առակիս :

'Ի դիպելն քո նենգաւոր արանց , 'ի պատրողական բանից նց լեր յառաջատես հանդերձեալ վնասուն ,
և զգուշասցիր :

## Ի ԼԷ Նապաստակաց, որք երկնչէին անդադար:

Շնչէր հողմն սաստիկ յանտառի միում. և երկչոտ Նապաստակք սկսան փախչել. 'ի փախչելն իւրեանց պատահեցան ձախնի միոյ, և զկոյ առին անդ կասկածեալ յերկուց վտանգաց տեսանելով զգորտունս զի անկանէին 'ի նա: Մինն 'ի Նապաստակաց որ քան զայլս իմաստուն էր, ասէ. ընդէ՞ր երկնչիմք մեք առանց ինչ պատճառի, մեք արագ եմք 'ի վազս, բայց պակասի մեզ քաջասրտութի. 'ի վտանգէ սատի հողմոյ ոչ է պարտ երկնչել, այլ արհամարհել զայն:

Իմաստ առակիս:

Բարոյականութի. Յամ դիպուածի քաջասրտութն պէտք են. առաքինութին անկանի առանց վստահութե. և վստահութին է առաջնորդ և իշխան նմ առաքինութեց:

## Ի ԼԸ Շան և Ոչխարի:

Շունն կոչեաց 'ի դատ զոչխարն, անդելով թէ պարտի նմա զհացն, զոր

ինքն

ինքն էր տուեալ նմա ՚ի փոխ . ՚ի գլանալ ոչխարին , ցինն , գայլն , և անգղն վկայեցին թէ ճշմարիտ է . վ՟ս այսորիկ ոչխարն պարտաւոր գտաւ , և շունն եկեր զնա :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն : Աղքատք բազում անգամ հարստահարին ՚ի մեծատանց սուտ վկայութ՟ք :

## Ի վր Ագռաւու :

Ագռաւն պճնեաց զինքն բոլորովին փետուրք սիրամարգի . ապա համարելով թէ է գեղեցիկ , եթող երթալ առ իւրսն , և գնաց առ սիրամարգսն . որք իբրև իմացան զխաբէութիւն նր , մերկացին ՚ի նմանէ զն՟մ փետուրսն , և բազում խոշտանգանօք հանին արտաքս :

Իմաստ առակիս :

Առակս ուսուցանէ զն՟ս՝ որք կամին ամբառնալ առաւել քան զնոսա , ընդ որս կեան :

## Ի վր Ճանճի :

Ճանճ մի նստեալ ՚ի վ՟ր կառաց , որ ուժգին ընթանայր , և բազում փոշիս

յօդս ցնդէր, ասէր, ով թէ որչափ փոշիս վերառնում ես յերկրէ:

Իմաստ առակիս:

Առակս յանդիմանէ զնա, որք են 'ի ստորին աստիճանի, և պանծան թէ են մեծազգի:

## 'Ի վ՟ր Ճանճի, և Մրջնոյ:

'Ի վիճելն 'ի միմեանս ճանճն և մրջիւնն, ասէր ճանճն. ես ազնուական եմ, և դու վատազգի. ես թռչիմ, և դու յափի-թերս գնաս 'ի վ՟ր երկրի. ես վարեմ ընդ ազնուականաց, և դու կաս թաքուցեալ 'ի խոռոչս երկրի. դու ուտես զհատս և ըմպես զջուր. և ես համադամս ուտեմ անաշխատ, և հեշտութեամբ: Ընդ հակառակս պատասխանէր մրջիւնն. ես եմ վատազգի, այլ եմ գոհ զսերնդենէ իմմէ. դու ես թափառական և ես հաստատուն. լաւագոյն են ինձ ջուրն և ունդք, քան զգինի և զքաղցրաճաշակ կերակուր քո. ես կեամ շատացեալ, յապահովս և հաճելի ամենեցուն. և եմ օրինակ վաստակոց, և դու ես միշտ յերկիւղի, թշնամի ամենեցուն, և ատելի. ես ապրիմ 'ի ձմերան վ՟ն ամբարելոյ զպաշարս իմ. և դու

կեաս

կեաս առօրեայ կենօք . և 'ի ձմերան մե-ռանէին 'ի քաղցուէ :

Իմաստ առակիս :

Լաւագոյն է աղքատին կեանքն և ա-պահով, քան զմեծաշուքն , յորում կեայ հանդերձ վտանգաւ :

Ի Վ՛ր Մանկան միոյ, և Աւազակի :

Այր մանուկ ոմն մերձ ջրհորոյ միոյ և լայր, և աւազակ ոմն եհարց զնա թէ ընդէր լայ : Նա պատասխանի ետ և ասէ , թէ խզեցաւ պարանն , և անկաւ 'ի ջուրն ոսկէ անօթ ինչ : Հաւատաց աւազակն , և մերկացեալ զհանդերձսն , ընկէց զինքն 'ի ջրհորն . և չգտեալ անօթ ինչ , ել արտաքս . և ոչ եգիտ , ո՛չ զմանուկն , և ո՛չ զհանդերձս իւր :

Իմաստ առակիս :

Խարդախականութ'ի . Երբեմն խաբին նոքա , որք սովոր են խաբել զայլս :

Ի Վ՛ր Գորտոյ, և Եզին :

Գորտն ցանկանալով հաւասարել եզին , այտնոյր . և զաւակն իւր ասաց ցնա չաւ-նել . զի անմարթ էր նմանել եզին : Այլ նա երկրորդ անգամ զփորձ էառ . զաւակն գոչեաց և ասէ . մա՛յր իմ՛ մի

մի՛ առներ զի մի՛ ձայթեցիս. և երրորդ անգամ յորժամ կամեցաւ զփորձ առնուլ, անդէն ձայթեցաւ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ իւրաքանչիւրոք ունի զպարգևս իւր. ոմն զգեղեցկութի՛, ոմն զզօրութի՛ մարմնոյ. ոմն զհարստութի՛, և ոմն զհզօր բարեկամս. իւրաքանչիւրոք պարտի լինել շատացեալ զոյնմանէ որ է իւր. և մի՛ ձկտեսցի նախանձիլ վերնագունին. և հակառակիլ նմա: Առաջինն է թշուառութի՛, և երկրորդն խակական յիմարութի՛.

## Ի վ՛ր Թռչնոց, և Չորքոտանեաց:

Մարտնչէին ընդ միմեանս թռչունքն և չորքոտանիք. և ՚ի լինել մարտին երկբայական, չղջիկն թողեալ զընկերս իւր, գնաց առ թշնամիս թռչնոց: Իսկ յետոյ իբրև յաղթեցին թռչունքն օգնութ՛բ արծուոյն, դատապարտեցին զչղջիկն՝ զի մի՛ երբեք կարող լիցի թռանիլ ՚ի տուընջեան: Ո՛ւ այսր պատճառի չղջիկն ոչ թռչի՝ բայց եթէ ՚ի գիշերի:

Իմաստ առակիս :

Բարոյականութ՛ի : Որ թողու զընկերն 'ի ձախորդութե , ոչ պարտի հաղորդ լինել նմա 'ի յաջողութե :

## Ի վր Օձի և Հողագործի :

Օձն խայթեաց զորդի հողագործի ուրումն , յորմէ մեռաւ մանուկն : Հողագործն բարկացեալ՝ եառ զտապար մի , առ 'ի սպանանել զօձն , և 'ի փախչել նր , եհատ զտուտն : Յետ այսորիկ կամելով շինականն հաշտիլ ընդ նմա , խնդրեաց զներումն . ասէ օձն . ընդվայր աշխատիս հաշտիլ ընդ իս . զի 'ի յիշելն քո թէ դու ես անորդի , և ես անտուտ , ոչ երբէք կարեմք լինել բարեկամ :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ յորժամ անիրաւութ՛ին է մեծ , չէ հնար բառնալ զատելութիւնն :

## Ի վր Ձիոյ և Իշոյ :

Ձին զարդարեալ մեծագին զարդուք՝ խնդրէր . և յարշաւելն ընդ ուղիս , պատահեցաւ բեռնաւորեալ իշոյ միոյ . և

ասէ ցնա հպարտութիւն : Դու գոլով
յամր և ծոյլ, ընդէ՞ր երևեցար առաջի
իմ. 'ի բա՛ց լեր յաչաց իմոց, ապա թէ
ո՛չ, առաւօտուր կոխեցից զքեզ : Իշն ոչ
իշխեաց ինչ տալ նմա պատասխանի,
այլ լռեալ, տեղի ետ նմա : Ապա ձին
'ի կարի իմն արշաւելոյն տկարացաւ. և
տէրն նր տեսեալ, թէ չէ այլ ևս պիտանի
յընթանալ, եհան զնա՛մ զարդուն, և
վաճառեաց առ 'ի պէտս սայլի. Իշն տե_
սեալ զնա զի ձգէր զսայլն, ասէ ցնա :
Ո՞ւր զարդք են սոքա. ո՞ւր է ոսկե_
հուռն բազմականն քո. և շքեղ զանգա_
նաւանդն. այսպէս հանդիպի հպարտի :

Իմաստ առակիս :

Նազումք են՝ որք 'ի յաջողութիւնս ո՛չ
յիշեն ամենեւին, ո՛չ զանձինս, և ո՛չ
զզգօնութի. և մա՛ զի 'ի յաջողութիւնս
լինին անընտելք, դիւրաւ անկանին 'ի
ձախորդութիւնս : Նմին իրի նոքա որք
են 'ի յերջանկութեան զգո՛յշ լիցին. զի
թէ բաղդն փոփոխեսցի, և անկցին 'ի
դժբաղդութի, լինելն յառաջագոյն բա_
րեբաղդ, ածէ առ ծայրագոյն թշուա_
ռութի. մինչզի լաւագոյն լինէր նոցա
չլինել երբեք երջանիկ, և հանգիստ :

## Ի վերայ Օձի, և Խարտոցի :

ՕՁն եգիտ զխարտոց մի . և սկսաւ կրծել զայն . Խարտոցն ծիծաղելով ասէ ցնա . յիմար ես դու . զի մինչև բեկեալ է քո գլխ, մանրեսցես զատամունս քո զամ . զի ես սովոր եմ յաղթել կարծրութեանց ամ հանքաց :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն : Հայեաց յոյժ բարւոք որում դու կամիս վնասել, զի եթէ ընդհարկանիցես ընդ հզօրագունի ումեք, ոչ նմ, այլ քեզ վնասեսցես :

## Ի վերայ Գայլոյ, և Շան :

Գայլ մի եգիտ զշուն մի, և ողջունեաց զնա . ապա եհարց ցնա, թէ զիարդ կեայր՝ զի էր այնչափ պարարտ . ասէ շունն . ես կամ ՚ի տան ուրումն ան, որ ոչ թողու զիս երբէք քաղցեալ : Ասէ գայլն, արդարև երջանիկ ես դու որ ունիս զայսպիսի բարի տէր . ես ևս յօժարութբ ծառայէի նմա : Ասէ շունն . եթէ դու կամիցես թողուլ զազատութիւն քո, ես առնէի՝ զի տէր իմ ընկալցի ըզքեզ :

քեզ : Ասէ գայլն . արարից զայդ : Ապա հայեցեալ գայլն 'ի շունն , ետես զի լերկացեալ էր պարանոց նր . և ասէ ցնա . զի՞նչ զի լերկ է պարանոց քո . և պատասխանի շունն . զայս առնէ կապանքն , զի ես 'ի տունջեան կապեալ կամ : Ասէ գայլն , եթէ այդ այդպէս է , ես ոչինչ մեծ համարիմ զբարեկամութիւն քո . որովհետև զրկիմ ես յազատութենէ իմմէ :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ ազատութիւն է մեծագին քան զամ ինչ , և սիրելի :

'Ի վերայ առն Անդրամոյ ծառայոյ , և Առիւծոյն :

Ձեռք և ոտք ամբաստան եղեն զորովայնէ , զի զամ վաստակս նոցա նա ուտէր . և պատուիրեցին նմա , զի կամ վաստակեսցէ , և կամ մի ևս յաւելցէ խնդրել զկերակուր : Որովայնն բազում անգամ խնդրեաց ուտել . և նոքա զլացան նմա : 'Ի նուաղել որովայնի , նմ անդամքն սկսան պակասել . Յայնժամ ձեռքն և ոտք կամեցան տալ կերակուր . այլ անագան . զի տկարացաւ որովայնն ուտել . և այսպէս անդամքն մախալով որովայնին , 'ի միասին մեռան ամենքեին :

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն ․ Միաբանութիւն անդամոց և որովայնի է մարդկային ընկերութիւն ։ Մի անդամն պէտս ունի զմիւս անդամոյ ․ բարեկամն զբարեկամէն ․ վ՛ն այն պարտիմք օգնել միմեանց ․ զի փարթամութիւքն և պատիւք չեն բաւական մարդոյ , այլ ունի պէտս և զբարեկամաց ։

### Ի վ՛ն Աղուեսու , և Այծի ։

Աղուէսն քաղցեալ և վտտեալ , եմուտ 'ի փոքրիկ պատուհանէ ինչ 'ի համբար իմն , ուր կարի բարիոք պարարեցաւ ։ Յետ այսորիկ կամելով ելանել արտաքս , խճողեալ որովայնն արգելոյր զնա ։ Այծն տեսեալ զի տառապէր , ազդ արար նմա և ասէ ․ եթէ կամիս ելանել արտաքս , վտտեա՛ց , ո՛պ էիրն յորժամ մտեր 'ի ներքս ։

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն ։ Տեսանեմք զբազումս զի 'ի միջակամ վիճակի էին ուրախ , և առանց յուզման խորհրդոց , այլ յորժամ մեծանան , լինին տժգոհ , և լի տաղտկութ՟բ և հոգովք ։

### Ի վր Աղուեսու և Որսորդաց :

Աղուէսն փախչելով յորսորդաց, ըստ պատահման եգիտ գշինական ոմն որ գործէր զփայտ. և խնդրեաց 'ի նմանէ ժտութք, զի ցուցցէ նմա զտեղի ինչ թաքչելոյ. և նա եցոյց նմա զայր մի, յոր եմուտ. Եկեալ որսորդացն հարցին գշինականն, թէ տեսեա՞լ իցէ զաղուէս մի անցանել ընդ այն. և նա ասէ ոչ. այլ ձեռօքն ցուցանէր զտեղին ուր կայր թաքուցեալ. որսորդքն ոչ իմացեալ զայն, մեկնեցան անտի. և 'ի ցաւելն շինականին վն չուէլոյ աղուէսուն առանց ինչ շնորհակալ լինելոյ զնմանէ, ետ պատասխանի աղուէսն. եթէ դու ունէիր զձեռսդ համգոյն բանիցդ, շնորհակալ լինէի զքէն:

Իմաստ առակիս :

Առակս վերաբերի առ չարս, որք խօստանան առնել բարիս, և զհակառակն գործեն :

### Ի վր Առիւծոյ, և Աղուեսու :

Առիւծն հիւանդացեալ էր, և 'ամ կենդանիք գնացին տեսանել զնա բաց յաղուեսու. առաքեաց առիւծն զդեսպան մի առ նա թղթովք, աղաչելով

զի

զի գնասցէ 'ի տեսութիւն նր, և հաճեցուսցէ զնա . և թէ մի ինչ կասկածեսցի , զի բարեկամ իւր է . և յոյժ ցանկայ խօսել ընդ նմա : Նա պատասխանի աղուէսն , թէ կարի բաղձամ առողջութե նր . և թէ հանապազ պաղատիմ առ ածն վ՟ս նր . բայց ոչ կամիմ գնալ 'ի տեսութի . զի հետք ոտից կենդանեաց երկեցուցանեն զիս , տեսանելով զընթացս ուղղեալ առ այր նր , և ոչ ուրուք յետս դարձեալ . զի այս նշան էր՝ թէ բազում կենդանիք մտանէին անդ , և ոչ ոք ելանէր անտի :

Իմաստ առակիս :

Բարոյականութի. Մ՛ի փութասիր 'ի խօսս, և հայեաց 'ի գործս նր , որ խօսանայ քեզ :

## Ի ՎՐ ԻՇՈՅ . և ԳԱՅԼՈՅ :

Էշն յոյժ հիւանդացեալ մերձ էր 'ի մեռանել : Գայլքն և շունքն գնացին յայցելութի . և բախէին զդուռնն : Յաւանակն 'ի պատուհանէ եհարց ցնոսա , թէ զինչ խնդրեն . նոքա պատասխանի ետուն . կամիմք գիտել , թէ զիարդ կեայ հայրն քո . և նա ասէ ցնս . բարւոք կեայ , զոր ոչ կամէիք դուք :

Ի-

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ ոմանք կեղծեն, թէ մահն ուրուք ոչ է հաճոյ ինքեանց, թէպէտ կարի իմն ցանկան այնմ :

## Ի վր̃ Աղուեսու :

Աղուէսն ետես զքանի ինչ ողկոյզս խաղողոյ, որք գրեթէ հասունացեալ էին. եւ բազում հնարեցաւ ունել զայնս, այլ ոչ կարաց վայելել : Յուսկ յետոյ ասաց, ոչինչ իւիք են տակաւին հասունացեալ :

Իմաստ առակիս :

Ցուցանէ առակս, թէ խոհեմ մարդն պարտի կեղծել՝ թէ ոչ կամի զայնս, զորս ոչ կարէ ստանալ :

## Ի վր̃ Շան, և Նկին :

Շունն ննջէր 'ի մսուր ինչ լի խոտով. եւ եկեալ եզն առ 'ի ուտել, շունն ոչ կամէր առ նախանձու զուտել նր. Ասէ եզն, ած պատուհասեսցէ զքեզ, զի դու ոչ ուտես զխոտն, եւ ոչ որոց ուտենն թողուս ուտել :

Իմաստ առակիս :

Ցուցանէ առակս, թէ բազումք են որք առ նախանձու ոչ թողուն այլոց առնել զայն, զոր ինքեանք ոչ կարեն առնել :

## Ի Վր Աղուէսու Եւ Այծու :

Աղուէսն և այծն երբեմն ծարաւեալ, իջին ՚ի ջրհորն ըմպել ջուր : Իբրև արբին, չգտանելով զճանապարհ ելանելոյ արտաքս ՚ի ջրհորոյն, ասէ աղուէսն ցայծն . անհոգ լեր, զի ես խորհեցայ թէ զիարդ կարասցուք մեք ելանել աստի արտաքս : Դու կաց ուղղորդ, և առաջին ոտիւքդ յեցիր յորմն, և խոնարհեցուցեալ զգլուխդ՝ ցածո զեղջիւրդ. և ես ելեալ ՚ի վր թիկանցդ և եղջերացդ, ոստեայց արտաքս ՚ի ջրհորոյ . և ապա զքեզ ես հանից աստի : Հաւատալով այծն խորհրդոյ աղուէսուն, արար որպ ասացն : Իբրև ել նա արտաքս ՚ի ջրհորոյ, ՚ի խնդալոյն ոստոստելով առ ջրհորովն՝ ծաղր առնէր զնա, անփոյթ եղեալ հանել զնա անտի : Իսկ ՚ի ստգտանելն զնա այծուն վս պակասելոյ ՚ի խոստմանէն, պատասխանեաց . ով այծ դու . եթէ ունէիր զայնչափ իմաստ որ-

որչափ են հերք մորուացդ, ո՛չ արդեօք իջանէիր 'ի ջրհորդ նախ քան զխոր-հելդ, թէ ուստի՛ ունէիցիս յետոյ ելա-նել 'ի վեր:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ մարդն պարտի յոյժ բարւոք խորհել զվախճանն մինչև արարեալ ինչ իցէ:

## Ի վ՛ր խորհրդոյ Մկանց:

Մկունքն տեսանելով թէ բովանդակ կործանումն իւրեանց յառաջ գայր 'ի կատուէ. և թէ ո՛չ կարէին հնարս ինչ գտանել այսմ, խորհուրդ խորհեցան, թէ չիք այլ ինչ դարման, բայց եթէ դնել 'ի պարանոց նր զբոժոժս, ոպ զի լսելի լիցի: Գովեցին ամենեքեան զայս որոշումն. այլ ամենեքեան երկն-չէին արկանել զայն բոժոժ 'ի պարանոց նր. նմին իրի նանրացաւ որոշումն, և խորհուրդ նց եղև անպտուղ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ բազումք գովեն զայն որ է առնելի, այլ սակաւք գտա-նեն, որ բուռն հարկանեն առնել:

### Ի վր Ուղտու ։

Ուղտն ցաւէր յանձն իւր, և տրտնջէր, տեսանելով զեղջիւս պանծալի ընթանալ երկոքումբք եղջերօք, և զինքն անզէն նշաւակ այլոց կենդանեաց ։ Աղաչեաց զԴիոս պարգևել ինքեան զեղջիւրս ։ Ծիծաղեցաւ Դիոս զանմտութիւն նր. այլ ոչ անսեաց արար զաղերս նր, զի յապաւեաց զականջս նր ։

Իմաստ առակիս ։

Իւրաքանչիւրոք շատացի վիճակաւ իւրով. զի ոմանք զհետ պնդելով լաւագոյն բաղդի, անկանին 'ի յոռեգոյնն ։

### Ի վր Փայտագործի, և Հերմէսի ։

Փայտագործ ոմն, 'ի գործելն զփայտ յեզր գետոյ միոյ, որ նուիրեալ էր Հերմէսի, դիպուածով անկաւ տապարն 'ի գետն. 'ի ցաւելն նր վս այնորիկ, երևեցաւ նմա Հերմէս, և եհարց զպատճառ տրտմութեն. և նա ասաց թէ վս անկանելոյ տապարին ։ Հերմէս եհան 'ի գետոյ զտապար մի ոսկեայ, և ասէ ցնա,

Թէ սա՞ իցէ, տառապեալն այն ասէ. ոչ: Եհան 'ի գետոյ զարծաթի տապար մի, և եհարց, թէ ա՞յն էր, նա ետ պատասխանի նոյնպէս, թէ ո՛չ: Յուսկ ապա Հերմէս եհան 'ի գետոյ զնորայն՝ որ էր երկաթի. և եհարց թէ ա՞յն էր, և նա ասէ այո՝. յայնժամ տեսեալ Հերմէսի զարդարութ̇ի աղքատառնն, ետ նմա զերեսինն ևս: Փայտագործն գնաց և պատմեաց ընկերաց իւրոց զդիպուածն որ դիպաւ նմա. և մի ումն 'ի նոցանէ կամելով զփորձ առնուլ այսմ, ընկէց զտապարն իւր 'ի գետն, և առ եզերբ ն՛ր նստաւ լալ, երևեալ նմա Հերմէսի, ուր արարեալ էր առաջնոյն, եհարց զպատճառս ցաւելոյ ն՛ր. և նա ասէ. վ՛ն անկանելոյ տապարին: Հերմէս եհան 'ի գետոյ զոսկեայ տապար մի, զո՛ր օրինակ արարեալ էր յառաջնում նուագի. և եհարց զնա, թէ ա՞յն իցէ. և նա ասէ այո՝: Հերմէս տեսեալ զյայտնի ստութ̇ին, ո՛չ ետ նմա, ո՛չ զոսկի տապարն, և ո՛չ զերկաթին:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ մեզ, թէ զո՛րօրինակ ա՛ծ է առաւել բարեկամ բարեաց՝ նոյնօրինակ է առաւել թշնամի չարաց:

Ի

## 'Ի վ՜ր Որդւոյ, և Մօր։

Մանուկ ոմն 'ի դպրոցի գողացաւ յըն-
կերէ իւրմէ զթուղթ մի այբուբենից,
և եբեր առ մայր իւր. և յոյժ պատու-
հասելն նր զնա վ՜ն այնորիկ, յամում
աւուր առաւել ևս գողանայր. և հա-
նապազ մեծամեծ գողութիւս առնէր.
հուսկ յետոյ ըմբռնեալ 'ի գողութե 'ի
դատաւորէն, ածեալ եղև 'ի կախաղան։
Մայրն երթայր զհետ նր լալով. աղա-
չեաց մանուկն դահճաց առնել նմ շնորհս,
և թողուլ զի խօսեսցի ընդ յականջս
մօրն։ Իբրև թոյլ ետուն նմա, եխած
զականջս մօր իւրոյ, և եհատ։ 'Ի ստ-
գտանելն իւրում յամենեցուն, թէ ոչ
միայն գող է, այլև անգութ առ մայրն
իւր; ետ պատասխանի։ Սա եղև պատ-
ճառ մեռանելոյ իմոյ. զի եթէ պատ-
ժեալ էր զիս յորժամ զառաջինն գողա-
ցայ զպլտակն այբուբենից, ես ոչ ևս
իշխէի գործել, և ոչ լինէի ածեալ 'ի
կախաղան. այլ նա ընկալաւ զիս համ-
բուրելով։

Իմաստ առակին:

Առակս ցուցանէ, թէ նոքա որք 'ի ըս-կզբանն ոչ պատուհասեցան յանելն ըզ-չար, և ես մեծագոյն չարիս գործեն հանապազ:

'Ի վէ Երկուց Բարեկամաց, և Արջոյ միոյ:

Երկու բարեկամք 'ի գնալն զճանա-պարհ 'ի միասին, դիպեցան արջոյ միոյ: Մինն 'ի նոցանէ զարհուրեալ՝ ել 'ի վեր ծառոյ. և միւսն իբրև ետես թէ ոչ կարէ մարտնչիլ ընդ արջոյ, անկեալ յերկիր, կեղծեաց թէ է մեռեալ: Ե-կեալ արջոյն հոտոտէր զականջս և զունչս նր, որ անկեալ կայր յերկիր. և կալ-եալ էր զշունչ իւր, զի մի՛ շնչեսցէ, և համարեալ զնա մեռեալ՝ գնաց զճանա-պարհ իւր. զի ասեն՝ թէ արջն ոչ մեր-ձենայ 'ի մարմին մեռեալ: Միւս ըն-կերն որ էր թագուցեալ 'ի մէջ տերևոց ծառոյ, իջեալ անտի եհարց ցբարե-կամն, թէ զի՞նչ խօսեցաւ յունկն նր արջն: Նա պատասխանի, թէ ազգ ա-րար ինձ՝ զի յայսմհետէ մի՛ ես եր-թայց զճանապարհ ընդ բարեկամի որ է նման քեզ:

Ի-

Իմաստ առակիս :

Յառակէ յայսմանէ խրատիմք փախչել 'ի բարեկամաց որք 'ի վտանգս փախչին առ 'ի ոչ օգնել մեզ :

### Ի վր Աղուէսու. և Ինձոյ :

Աղուէսն և ինձն վիճէին ընդ միմեանս վն գեղեցկութե : Ինձն գովէր զմորթն իւր , թէ էր պէսպէս երանգօք խայտ · իսկ աղուէսն ոչ կարելով գովել զիւրն , ասէր : Ո՞վ թէ որչափ գեղեցիկ եմ ես քան զքեզ · զի թէպէտ ոչ զմարմինս , այլ զոգի իմ ունիմ բազմապիսի զօրութեամբք զարդարեալ :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ թէ յոյժ առաւել գեղեցիկ է գեղեցկութի հոգւոյն քան զմարմնոյն :

### Ի վր Շինականի , և Որդւոց Իւրոց :

Շինական ոմն տեսանէր զորդիս իւր հանապազ մարտնչել ընդ միմեանս. և ոչ կարացեալ խաղաղել զնս , հրամայեաց բերել զխուրձ մի ցպոյ ( մինչդեռ կային նմ որդիքն Նր առաջի իւր · ) և երբև բերին , կապեաց զամենե-

սեան 'ի միասին . և հրաման ետ , զի ի-
րաքանչիւրն 'ի նոցանէ առեալ խորտա-
կեսցէ զկապեալ խուրձն զայն . և իբրև
ոչ կարացին խորտակել , քակեալ զայն ,
ետ 'ի ձեռս միոյ միոյ 'ի նոցանէ զմի
մի ցուպ առ 'ի խորտակել , և նք իսկոյն
խորտակեցին : Յայնժամ ասէ հայրն ,
այսպէս և դուք որդեակք , եթէ խաղա-
ղասէրք , անվանելի և անպարտելի 'ի
թշնամեաց ձերոց լինիջիք . ապա թէ
ոչ՝ այս մարտ ձեր և երկպառակութիւն
մատնէ զձեզ 'ի ձեռս նց :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ մարդկային իրք ,
որպ ասէ Սաղուստիոս , միաբանութբ յա-
ռաջ ընթանան , և երկպառակութբ
աւերեալ կործանին :

Ի վ՜ր Կնոջ միոյ , և Հաւոյ :

Կին ոմն ունէր զհաւ մի , որ յամ
աւուր ածէր զմի ձու . յուսալով կինն
ընդ միոյ ունել զերկուս , եթէ տայր
նմա ուտել աւելի եւս , սկսաւ սնուցանել
զնա առատութբ : Այլ հաւն 'ի պա-
րարելն՝ ոչ եւս յաւել ածել ձու :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ մարդիկ անառակութիւ և շռայլութիւ խամրանան , և կասին 'ի գործելոյ զբարիս :

## 'Ի վր̃ Երկուց Պատանեաց :

Պատանիք երկու գնէին 'ի միասին զկերակուր 'ի խահարարէ ․ և մինչդեռ խահարարն յայլ ինչ գործս պարապէր՝ մինն 'ի նոցանէ եառ զմասն ինչ մսոյ ․ և ետ ցմիւսն : Դարձաւ խոհակերն , և խնդրեաց 'ի նոցանէ զպակասեալ մասն մսոյ : Նա՝ որ գողացեալ էր , երդնոյր՝ թէ չէ առ իւր ․ և նա որ ունէր , երդնոյր՝ թէ ինքն չէր առեալ : Խոհակերն իմացեալ զխորամանկութի նց՝ ասէ ․ թէպէտ ծածկեալ է յինէն այս գործ ․ այլ ոչ ծածկի 'ի նմանէ յորոյ անունն երդուայք դուք :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ թէպէտ և մեք թագուցանիցեմք զմեղս մեր առ 'ի մարդկանէ , այլ ոչ կարեմք թագուցանել առ Այ̃ , որ միայն տեսանէ զամ̃ :

## Ի վր Եղեգան, և Ձիթենւոյ:

Պարծէր երբեմն ձիթենին ՚ի վր ամրութե՛ զօրութե՛ և հաստատութե՛ իւրոյ, և արհամարհէր զեղէգն, որ տկար գոլով տատանէր յամ հողմոյ: Եղէգն լռեալ կայր: Յետ ոչ բազում ժամանակաց շնչեաց հողմ սաստիկ. եղէգն բերբեր աստ անդ, և խոնարհէր. այլ ձիթենին կամելով զդէմ ունել բռնութե հողմոյն՝ խորտակեցաւ:

Իմաստ առակիս:

Առաւել խրատիմք, թէ նոքա որք տեղի տան հզօրագունից երբեմն՝ լաւ ես առնեն, քան զնս որք ոչ տան զտեղի:

## Ի վր Փողահարի ուրումն:

Փողահար ոմն որ հարկանէր փող ՚ի պատերազմի, կալեալ եղև ՚ի թշնամեաց, և աղաղակէր առ կալանաւորս իւր ասելով, մի սպանանէք զիս, զի եմ անմեղ. և զամ ժամանակս կենաց իմոց ամենևին ոչ սպանի զոք. և չունիմ ես ինչ բաց ՚ի փողոյ աստի: Պատասխանի ետուն նոքա: Ա՛ն այսորիկ արժանի

ժանի մահու ես դու, զի ոչ կարելով պատերազմել, կամեցար գրգռել զայլս 'ի պատերազմ ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ նոքա առաւել քան զայլս մեղանչեն, որք հաւանեցուցանեն զիշխանս առնել չար ։

## 'Ի Վ՟ն Իշոյ, և Գայլոյ ։

Էշն տառապէր 'ի փշոյ որ մտեալ էր յոտս նր. և տեսեալ զգայլն՝ ասէ ։ Ո՛վ գայլ՝ ես մեռանիմ 'ի ցաւոյ, և կերիցեն զիս ագռաւք, արդ շնորհս ինչ խնդրեմ 'ի քէն, հան զփուշս յոտիցս, զի գոնէ առանց ցաւոց մեռայց ։ Եւ գայլն ատամամբք որ յառաջոյ մեղմով իմն կալեալ զփուշն, եհան յոտից նր. էշն մոռացեալ զցաւն, աքացի եհար ընդ երեսս նր, և ջախեալ զծնկատն, զատամունս և զունչս գայլոյ՝ փախեաւ ։ Գայլն ասէ առ ինքն. յիրաւի դիպաւ ինձ այս. զի ես գոլով ուսեալ զմսագործութիւն անասնոց, այժմ կամեցայ լինել վիրաբոյժ նց ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ նոքա որք թո-

ղուն

ղուն զսովորական արուեստս իւրեանց, և կամին առնել զայն զոր ոչ գիտեն, ծաղր լինին, և բազում անգամ անկանին 'ի վտանգս :

Ի վէպ Հովուի, և [illegible] :

'Ի տեղի ինչ մերձ 'ի ծով՝ հովիւ ումն արածէր զխաշինս. և տեսեալ զծովն անդորր, կամեցաւ նաւել : Ապառեաց զխաշինս իւր, և գնեալ արմաւենիս բազումս յոյժ, նաւեաց 'ի ծով. Յարեաւ ալեկոծութիւն մեծ 'ի ծովուն, մինչև մերձ յընկղմել նաւին. սաստի զամ բեռինս նաւին արկին 'ի ծով, որով թեթևացեալ հազիւ զերծաւ : Յետ քանի ինչ աւուրց զարմացեալ ընդ խաղաղութիւն ծովուն, որ իսկապէս կայր հանդարտեալ, ասէ : Ոչ կարծեմ ես, յայնակս կաս խաղաղացեալ և հանդարտ, զի միւսանգամ կամիս ունել արմաւենիս :

Խրատ առակիս :

Առակս ակնարկէ մեզ, թէ մարդիկ զգօնանան վնասու և վտանգաւ իւրեանց :

## Ի վէ Աղուէսու, և Առիւծու ։

Աղուէսն չէր ընաւ տեսեալ զառիւծն ։ Յաւուր միում՝ երբև եկ նմա ընդ առաջ, այնպէս զահի հարաւ, զի փոքր մնա ևս և մեռանէր. և յայլում նուագի հանդիպեալ նմա, զահի հարաւ, այլ ոչ որպէս յառաջն. իսկ յերրորդ անգամ՝ երբև ետես զնա, ոչ միայն ոչ չփոթեցաւ, այլև համարձակութեամբ սկսաւ խօսել ընդ նմա, և զրուցաբանել ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ հանապազորդ վարելն առնէ՝ զի երբեմն յորոց յոյժ երկնչէաք երևեսցին հաճոյական ։

## Ի վէ Աքաղաղի, և Կաքաւու ։

Այր ոմն ունելով 'ի տան զաքաղաղս ինչ, գնեաց զկաքաւ մի. և եդ զնա 'ը նս̃ պարարել 'ի միասին. իսկոյն նմ՝ աքաղաղքն յարուցեալ 'ի վ̃ը, չխթէին զնա. և կաքաւն տառապէր յանձն իւր, զմտաւ ածեալ, թէ աքաղաղքն առնէին զայս վ̃ն լինելոյ իւրոյ յօտար տեսակէ. այլ յոր-

յորժամ ետես թէ ընդ միմեանս եւ մարտնչէին, և կոցաւ հարկանէին զմիմեանս, մխիթարեցաւ 'ի վ'ր ցաւոց իւրոց, և ասէ. այսուհետև ես ո՛չ վշտացայց, զի տեսանեմ թէ սոքա ընդ միմեանս եւ մարտնչին:

Իմաստ առակիս:

Առակաւս ուսանիմք, թէ այր իմաստուն պարտի տանել զրկանաց, որք գան յոչ արենակցաց, յորժամ տեսանէ զի նոքա զրկեն զմիմեանս եւ:

## 'Ի վ'է Աղուեսու, և մարմարեայ գլխոյ գայլոյ:

Աղուէսն եմուտ 'ի տուն մի քարակոփի, և խառնէր անդ զ'ամ գործիսն, և զ'ամ կահս տանն. եգիտ զգլուխ մի գայլոյ ճարտարութ՛բ և քաջարուեստ քանդակեալ, և առեալ զնա 'ի ձեռս իւր ասէ. Ով գլուխ մեծաւ իմաստութ՛բ արուեստակեալ, որ չունիս ինչ բնաւ զիմաստ:

Իմաստ առակիս:

Առակս վերաբերի առ նոսա որք մարմնով են գեղեցիկ. և չունին զիմաստ հոգւոյ, և ոչինչ ճարտարութ՛ի:

## Ի վր Ոսկեգործի , և Թափչի :

Ոսկեգործ ոմն բնակէր 'ի վարձու կալեալ տան միում , հրաւիրեաց զթափիչ ոմն որ բնակէր առ նմա , բնակել ընդ իւր : Ասէ թափիչն . այր դու . այս չէ ինձ օգուտ , զի զոր ինչ ես մաքրեմ , դու փոշւովքդ աղտեղես :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ , թէ ոչ պարտիմք առնել բարեկամութիւն ինչ ընդ անզգամաց , և եղեռնագործաց :

## Ի վր մեծապարծ Առն միոյ :

Այր ոմն գնաց 'ի նժդեհութիւն ժամանակս բազումս . և իբրև դարձաւ 'ի տուն , պարծէր , թէ մեծամեծս արարեալ իցէ 'ի զանազան մասունս աշխարհի . և ընդ այլոց , թէ յաղթեալ իցէ 'ի Ռոտոս Ռոտոսացւոց ամ̃ն , յարձակմամբ . և թէ այսմ կարեն վկայել ամենեքին նոքա , որ եղեն անդ առաջիկայ : Պատասխանի ետ նմա մի ոմն և ասէ : Այր դու . եթէ ճշմարիտ է զոր ասես , ոչ են պիտոյ վկայք . ահա աստ Ռոտոս .

տոս․ ահա պատերազմ․ և ահա ասպարէզ յարձակման ։

Իմաստ առակիս ։

Առակս ծանուցանէ, թէ այնք զորս մարթ է ցուցանել գործովք, ոչ ունին պէտս բանից ։

## Ի վր Ձկնորսի ուրումն, և փոքրիկ Ձկան ։

Ձկնորս ոմն արկեալ ուռկանս ՚ի ծով կալաւ զձուկն մի փոքրիկ, որ աղաչեաց զնա թողուլ երթալ և աճել, որպէս զի առաւել բարւոք վայելեսցէ յայլում նուագի ։ Պատասխանի ետ ձկնորսն ։ Յիմար լինէի ես, եթէ ունելով ՚ի ձեռին զորսն, թէպէտ և փոքր, թողուի երթալ յուսով բարւոյն որ հանդերձեալ է գալ, որչափ և մեծ իցէ ։

Իմաստ առակիս ։

Առակս ուսուցանէ մեզ, թէ յիմար է նա, որ յուսով մեծագոյն շահու, թողու ՚ի բաց զայն՝ զոր ունի ՚ի ձեռին, թէպէտ և փոքր իցէ ։

## Ի վր՛ Ձիոյ, և Իշոյ ։

Ձին և էշն գոլով ծանրաբեռնեալ ՚ի ճանապարհի, ասաց էշն ցձին. եթէ դու ոչ կամիս զմեռանելն իմ, թեթևացո զմասն ինչ բեռին զոր ունիմ բառնա-նեալ ։ Յոչ կամելն ձիոյն առնել զայն, էշն ՚ի ծանրութենէ բեռին անկաւ մե-ռեալ ։ Յայնժամ տէրն զբովանդակ բեռնն զոր տանէր էշն, եւս և զմորթն զոր եղերծ յիշոյն, եդ ՚ի վր՛ բեռին ձիոյ. յորմէ նեղեալ յոյժ՝ ասէ. յիրաւի կրեմ ես զայս ծանրութի. զի ոչ կամելով տա-նել զմասն ինչ բեռին իշոյ, այժմ զնա տանիմ, նաև զմորթ նր ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ մեծամեծքն պար-տին մասնակցիլ աշխատանաց փոքունց, ոչ զի ամենեքեան ապրեսցին ։

## Ի վր՛ Այծամարդի ուրումն, և Առն միոյ ։

Այր ոմն արարեալ էր բարեկամութի ը ուրումն այծամարդի. և մինչդեռ ու-տէին ՚ի միասին, այրն ցրտացեալ էր. և մերձեցուցեալ զձեռս ՚ի բերանն, շն-չելով

չելով ջեռուցանէր զայնս։ Ո՛ այս տեսեալ այծամարդին, եհարց ցնա՛ թէ ընդէ՛ր առնէ այնպէս։ Նա պատասխանի ետ, և ասէ. ջեռուցանեմ զձեռս իմ շնչովս։ Յետ ոչ բազում ժամանակի՝ բերաւ առաջի նորա կերակուր ջերմ առ ՚ի ուտել. և այրն դարձեալ մերձեցոյց զկերակուրն ՚ի բերանն զովացուցանել զայն. և այծամարդն եհարց ցնա՛ թէ ընդէ՛ր առնես զայդ. նա պատասխանի ետ, թէ շնչովս զովացուցանեմ զկերակուրն։ Յայն ժամ ասէ այծամարդն. և ես ոչ կամիմ լինել ընդ քեզ բարեկամ, զի ՚ի նմին բերանոյ հանես զջերմ, և զցուրտ. երթ ողջամբ։

Իմաստ առակիս։

Առակաւս ազդիմք, թէ պարտ է փախչել ՚ի բարեկամութենէ մարդկան որոց վարքն է երկդիմի. և բանքն երկասայրի։

## ՚Ի վէ Շինականի. և Շանց Նորա։

Շինական ոմն ՚ի ժամանակի ձմերան լինելով ՚ի դաշտի, պակասեցաւ կերակուր նորա. և զենեալ զամենայն ոչխարսն՝ եկեր զնոսա. և ապա զամենայն այծսն. հուսկ յետոյ զենեալ և զեզինս,

որովք վարէր զերկիր, կերակրէր զանձն ։ Զայս տեսեալ շանցն, սկսան փախչել ասելով ցմիմեանս, եթէ տէրն մեր ոչ խնայեաց յեզինս իւր որովք վարէր զերկիր, և 'ի մեզ ևս ոչ խնայեսցէ ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ պարտիմք փախչել 'ի նոցանէ, որք չարաչար վարին 'ի մերձաւորս և ընդ ընտանիս իւրեանց,

'Ի վ՛ը Առն մ՛ոյ խածելոյ 'ի շանէ ։

Այր ոմն լինելով խածեալ 'ի շանէ, գնաց հարցանել զամենեսին ցուցանել նմա զդեղ ինչ ։ Եգիտ զոմն որ տեսեալ զորպիսութիւն ախտին, ասէ ցնա ։ Այր դու. եթէ կամիս բժշկիլ, առ զկողինձ հացի, և տուր շանն որ եխած զքեզ ։ Պատասխանի ետ նմա այրն ծիծաղելով, և ասէ ։ Որդարև եթէ զայդ առնէի, լինէի արժանի խածանելոյ յամ՛ շանց տեղւոյս ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ չար մարդիկ որչափ և լիցին համեցուցեալ, այնչափ քաջալերին առնել զչար ։

Ի վր Գոմն և Դլփինն ձկանց։

Գոմն հալածեալ 'ի դլփինէ 'ի փախչելն ուժգին՝ անկաւ յեզր ինչ ծովու, և մնաց 'ի ցամաքի, յորում և դլփինն ես մնաց։ 'Ի մեռանել գոմին, ետես՝ զի և դլփինն մեռանէր, ասէ։ Ոչ է ինձ ծանր մեռանելն իմ․ զի տեսանեմ՝ թէ և նա մեռանի, որ եղև պատճառ մահուան իմոյ։

Խրատ առակիս ։

Առակս նշանակէ, թէ պարտիմք համբերութեամբ տանել չարեաց, յորժամ տեսանեմք թէ և նա որ եղև պատճառ, կրէ զչար։

Ի վր Հաւորսի ուրուքն, և վայրի Աղաւնոյ․

Հաւորս ոմն առեալ զվարմն, գնաց որսալ զթռչունս, և տեսեալ 'ի կատար ծառոյ ինչ զվայրի աղաւնի մի, պատրաստեաց զվարմն իւր, և մեղմով իմն մերձենայր առ թռչունն ակնունելով ունել զնա, յայսմ որսորդութեան այնինչ յարդարէր զվարմն, և հայէր միշտ 'ի վեր․ եդ զոտն իւր 'ի վր իժի, որ նեղեալ 'ի ցաւոցն, խայթեաց զհաւորսն, որ 'ի մեռա-

առնել խորում առէր ։ Ուա՜յ ինձ , զի 'ի պնտելն իմ որսալ զայլս՝ ես մեռանիմ ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ , թէ բազում անգամ որք ակնունելով ունել զայլս՝ ինքն կալեալ լինի ։

## Ի վ՛ր Գուշակի առակս ։

Գուշակ ոմն կայր 'ի Հրապարակի և խօսէր ։ Յայնժամ եկն մին՝ և ասէ ցնա , թէ դուռն տան ն՛ր եղև խորտակեալ . և որ ինչ էր 'ի տան 'ի բաց բարձեալ ։ Լուեալ զայս գուշակին , ընթանայր ողբալով 'ի տուն իւր ։ Այր ոմն ել ընդառաջ ն՛ր և ասէ ․ դու որ գուշակէիր զայլոց դիպուածս , զիա՞րդ տկարացար գուշակել զքոյն ։

Իմաստ առակիս ։

Առակս վերաբերի առ ն՛ս որք ո՛չ գիտեն կառավարել զգործս իւրեանց , և կամին հոգալ զայնս որք ոչ են նոցա անկ ։

### Ի վր̃ Հաւորսի, և Սարեկի, (որ է, ղարաթավուլ :)

Հաւորս ումն եղեալ էր զվարմն իւր առ 'ի որսալ զթռչունս, տեսեալ զայն սարեակ մի 'ի հեռաստանէ, եհարց զնա, թէ զինչ գործէ. Նա պատասխանի ետ, թէ կամիմ շինել զքաղաք մի. և մեկնեալ անտի՝ թագեաւ : Յայնժամ սարեակն գնաց առ խայծն, որ էր մերձ վարմին, և կալեալ եղև. ընթացաւ իսկոյն հաւորսն. առ որ ասաց սարեակն. այր դու, եթէ զայդպիսի քաղաք շինեսցես, սակաւ բնակիչս ստասցիս :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ հրապարակն և մասնաւոր իրք եղծանին, յորժամ իշխանքն 'ի գործ ածեն զանգթութիւն :

### Ի վր̃ Դիոսի, և Ճանապարհորդի արբումն :

Երժեհ ումն ճանապարհորդեալ 'ի տար աշխարհ, ուխտս եդ, զի եթէ գտանիցէ ինչ 'ի ճանապարհի՝ տացէ զկէսն Դիոսի : Գտեալ զկողով մի լի արմաւով և նշով.

նշով. զճամ արմաւոյն և զնուշոյն եկեր, իսկ զկորիզսն և զփեճեկսն եդ առաջի սեղանոյ ինչ Դիոսի, և ասէ ։ Ով Դիոս ահա այն զոր խոստացայ քեզ. տամ քեզ զկորիզսն և զփեճեկսն. և ինձ զուղեղսն այնր զոր գտի ։

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ, թէ ագահն ագահութեամբ իւրով խաբէ նաև զԱծ ։

## Ի վր Որդւոյ, և Հօր ։

Ծեր ոմն ունէր զորդի մի իւր աժխոյժ, և յորս երէոց նահատակ ։ Ետես հայր նորա յերազի, թէ որդին իւր սպանաւ յառիւծու. և երկուցեալ թէ մի գուցէ երազ իւր կատարեսցի, կառոյց բզհօյակապ տուն մի, և անդ եդեալ զորդին իւր, քաջ պահպանութեամբ պահէր զնա, և առ ևս զուարճութիւն նորա, նկարեալ էր 'ի նմին տան զզանազան ազգս կենդանեաց, ՚ի որս և զառիւծ մի. և թէպէտ պատանին հայէր երբեմն 'ի պատկերսն, բայց այսու ամենայնիւ տառապէր. յայնժամ յաւուր միում կացեալ առ նկարեալ առիւծու, ասէ. ով անագորոյն գազան, ես վասն քո, և վասն

երագոյ Հօր իմոյ փախեալ կամ յայսմ տան իբր 'ի բանտի. Եւ յասելն զբանս զայսոսիկ, եհար ձեռամբ ընդ որմն առ 'ի հանել զաչս առիւծուն. և զարկեալ ընդ բևեռն որ անդէն ցցեալ կայր, և պատառեաց վէրս մեծամեծս, յորմէ չալ-եալ եղև սաստիկ տենդիւ, և յետ սա-կաւուց մեռաւ. և այսպէս առիւծն սպան զպատանին. ոչինչ օգտելով հնարից հօրն։

Իմաստ առակիս։

Առակաւս խրատիմք, թէ ոչ ոք կարէ խորշիլ յայնմանէ որ պարտի դիպիլ։

## 'Ի վ՜ր Կնտակի ուղևորին։

Կնտակ ոմն տանէր զպխտակ ծամ, և 'ի գնայն հեծեալ 'ի ձի, հողմն վերացոյց զծամն 'ի գլխոյն, որով գրգռեաց 'ի ծիծաղ զամենեսեան որք էին անդ. Նա ինքն ևս ծիծաղելով ասաց. Մ՛է զար-մանայք, թէ անկան հերքն որք ո՛չ իմ էին. զի և այնք որք իմ՝ էին սեփական՝ թօթափեցան։

Իմաստ առակիս։

Առակս ուսուցանէ մեզ, թէ ո՛չ պար-տիմք տխրել 'ի կորուսանելն զմեծութիւն, որով-

որովհետեւ զորս 'ի բնէ եւս ունիմք, ոչ կարեն կալ հանապազ ընդ մեզ:

Ի վր՛ առնն որ խոստանայր ածոյ զանկարելիս:

Այր ոմն աղքատ հիւանդացեալ էր այնչափ մինչեւ յուսահատիլ բժշկաց. արար սա ուխտս ածոց, թէ եթէ տայցեն նմա զառողջութիւն, տացէ հարիւր եզինս առ 'ի զոհ: Զայս լուեալ կնոջն իւր, ասէ. եթէ առողջասցիս դու, ուստի՞ ունիս զայնչափ եզինս: Նա պատասխանի ետ. կարծես դու, թէ եթէ ես յարեայց աստի, ածքն ունիցին ինչ պահանջել յինէն:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազումք 'ի մարդկանէ խոստանան դիւրաւ, զոր երբէք ոչ կարեն տալ:

Ի վր՛ երկուց Գորտանց:

Գորտք երկու արածէին 'ի ճահճի միում, որ յամառան ցամաքեցաւ. եւ նոքա թողեալ զայն՝ գտին այլ իմն. ապա դիպեցան ջրհորոյ միոյ, եւ իբրեւ տեսին

գայն, մինն ասաց ցմիւսն, իջցուք 'ի ջրհորս յայս. պատասխանի ետ միւսն, եթէ մացուք աստ, և ցամաքեսցի ջուրն, զիա՞րդ ելցուք արտաքս:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ ոչ պարտ է առնել ինչ առանց խորհելոյ:

## Ի վր Շան, և Աքաղաղի:

Շուն մի և աքաղաղ մի երթային 'ի միասին զճանապարհ: Եւ երբև եղև գիշեր, աքաղաղն ել 'ի վր ծառոյ միոյ առ 'ի ննջել. և շունն ննջեաց 'ի ներքոյ ծառոյն որ էր փապարեալ. իսկ 'ի գիշերի մինչ խօսէր աքաղաղն ըստ սովորութեան իւրում, լուեալ աղուեսուն, ընթացաւ առաջ. և կացեալ 'ի ներքոյ, աղաչէր զնա իջանել 'ի վայր. զի կամէր գերկսարկանել նմա վն քաղցրաբարբառ նուագելոյն: Ասաց ցնա աքաղաղն զարթուցանել զպահապանն որ ննջէր 'ի ստորոտ ծառոյն: Աղուէսն ձայնեաց առ նա. և շունն ելեալ արտաքս վաղվաղակի, սպան զաղուէսն:

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ խոհական մարդիկ խորագիտութեամբ առաքեն զթշնամիս իւրեանց առ զօրաւորագոյնս :

## Ի վր Առիւծոյ, Արջոյ, և Աղուեսու :

Առիւծն և արջն սպանեալ զուլ մի, մարտնչէին ընդ միմեանս, և այնքէն հարուածս, մինչև ՚ի յուժգին մարտնչելոյ էին պարտասեալք, և տապաստ յերկիր անկեալք : Աղուէս մի անցեալ ընդ այն, ետես զնոսա տապաստ անկեալ, և զուլն ՚ի մէջ նոցա. եմուտ ՚ի մէջ, և գողացեալ զուլն, փախեաւ : Տեսանէին նոքա զայն, այլ ոչ կարելով զհետ պնդել նր. ասէին. մեք տառապեցաք վն աղուեսուն :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ ոմանք շահին աշխատութեամբ այլոց : Եւ ՚ի մէջ երկուց վիճողաց, եթէ ոչ միաբանեսցին, վայելէ երրորդն :

## Ի վր Չղջկան, Փշոյ, և Ձկնկլ :

Չղջիկն, փուշն, և ձկնկուլն ընկերացեալ, խորհեցան առնել վաճառականութիւն : Չղջիկն էառ փոխ արծաթ, փուշն բա-

բազում հանդերձս, և ձկնկուլն դրամս. և նաւեցին: Յարեաւ մրրիկ մեծ 'ի ծովուն, մինչև նաւին ընկղմել. և կորեան ամ վաճառք նց, և ինքեանք փախեան: Վասն այսորիկ ձկնկուլն կայ միշտ յեզր ծովուն առ 'ի գտանել ինչ ինչ 'ի դրամոց իւրոց. չղջիկն երկնչելով 'ի պարտատեարց իւրոց, ոչ երևի երբէք 'ի տուընջեան. և փուշն հանապազ կառուի հանդերձից առ 'ի տեսանել թէ իւր իցէ:

Իմաստ առակիս:

Առակս ազգ տանէ չանկանել վերստին յայնս, զորոց միանգամ զփորձ առեալ եմք:

Ի վր Սիրամարգի, և Կաչաղակի:

Սիրամարգն աղաչեաց զթռչունսն առնել թագաւոր զին. և վասն իւրոյ գեղեցկութեն առնել զինքն: Խօսել սկսաւ կաչաղակն և ասէ, զինչ լիցիս դու թագաւոր, եթէ արծուին սկսանիցի հալածել զմեզ, ո՞վ մեզ 'ի թիկունս հասցէ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ չէ պարտ ընտրել զթագաւորս վս գեղեցկութե, այլ վասն զօրաւորութե և խոհականութեան:

Ի

## Ի Վ ՎԱՐԱԶԻ, ԵՒ ԱՂՈՒԵՍՈՒ :

Վարազն կալով 'ի վ ծառոյ միոյ սրէր գատամունս իւր . և աղուէսն եհարց ըզպատճառն, թէ ընդէր սրէր գատամունսն՝ որով հետև չունէր յայնժամ պէտս : Նա ետ պատասխանի . Զայս վ՟ այն առնեմ, զի յորժամ պէտք լինիցին ոչ կամիմ թարթափել 'ի սրել գատամունս, այլ կամիմ կալ յարդարեալ :

Իմաստ առակիս,

Առակս ազդ առնէ, թէ մարդն պարտի կալ պատրաստեալ վասն 'ամ հարկաւորութեան որ կարէ դիպել :

## Ի Վ ԱՐՏՈՒՏԻ .

Արտուտն ըմբռնեալ յորոգայթի, ասէր . վա՜յ տարաբախտ թռչնոյս . ես ոչ գողացայ, ոչ ոսկի, ոչ արծաթ . և ոչ այլ ինչ մեծագին . և սակայն հատ մի ցորենոյ է պատճառ մահուան իմոյ :

Իմաստ առակիս :

Առակս է ընդդէմ նոցա, որք վ՟ փոքր ինչ շահու դնեն զանձինս 'ի մեծ վտանգս :

## Ի վր Մտրուկ Եղջերուի:

Մտրուկն եղջերուի ասաց միանգամ հօր իւրում: Դու մեծ ես և երագոտն քան զշունն, և ունիս եղջիւրս մեծա-մեծս որովք կարող ես նուաճել զնա. ապա ընդէ՞ր կարի խիստ երկնչիս ՚ի նմանէ: Նա պատասխանի եղջերուն: Ճշմարիտ ասես որդեակ. գիտեմ արդեօք և ես. այլ յորժամ լսեմ զհաչել շան, առժամայն ստիպիմ ՚ի փախուստ դառնալ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ զերկչոտն չէ մարթ քաջալերել զիարդ և իցէ խրատու:

## Ի վր Ագահի:

Ագահ ոմն վաճառեաց զինչս իւր զամ, և գնեաց զձոյլ մի ոսկւոյ. և թաղեաց զայն ՚ի տեղւոջ ինչ, ուր եդ և զսիրտ և զմիտս իւր. և երթայր հանապազ տեսանել: Ծանուցեալ ուրումն զայս, եբարձ զայն անտի: Ագահն ոչ գտանելով զոսկին, սկսաւ ողբալ և փետել զմազս իւր. տեսեալ այլոց զկոծել նր. և իմացեալ զպատճառն. ասացին ցնա: Մի՛ այնչափ տրտմիր.

տրտմիր, զի յունելն քո զոսկին, ոչ ունէիր զայն. այժմ՝ փոխանակ ոսկւոյ դիր զվէմ՝ մի. և համարեա՛ թէ ոսկի է այն. և զոր առնէիր ՚ը ոսկին, կարես առնել և ընդ այն. զի յորժամ՝ ունէիր զոսկին, ոչ ՚ի գործ ածէիր:

Խրատ առակիս:

Առակս ուսուցանէ, թէ եթէ դու ունիս ինչ զոր ոչ ՚ի գործ ածես, այնպէս է, որպէս թէ ոչ ունիս զայն:

## Ի վր̃ Սագից, և Կռնկանց:

Սագք և կռնկունք արածէին ՚ի միասին ՚ի դաշտի միում: Ի գալ որսորդաց՝ կռնկունքն թեթև գոլով, իսկ և իսկ փախեան. և սագքն վասն լինելոյ ծանր, և մնեղի, ոչ կարելով թռանել, կալեալ եղեն:

Խրատ առակիս:

Առակս նշանակէ, թէ յառեալ լինելն քաղաքի իրիք, աղքատքն փախչին առժամայն. իսկ մեծատունքն կալեալ լինին:

## Ի վ՛ Կրայի, և Արծուոյ:

Կրայն աղաչէր զարծուին ուսուցանել նմա թռանել. և արծուին ասէր ցնա, թէ այս է արտաքոյ բնութեան քո: Այլ յաղաչելն ն՛ր ստէպ, արծուոյն կալեալ զնա ճիրանօքն, ամբարձ 'ի վեր. և ապա եթող անկանել. և նա անկեալ 'ի վ՛ր քարանց ջախջախեցաւ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազումք մ՛ծ ոչ հնազանդելոյ իմաստուն, և խոհական անձանց. վնասեցին անձանց իւրեանց:

## Ի վ՛ Եղին Միոյ:

Եղն մի կուրացեալ միով ականբ՝ արածէր յեզր ծովու. և զառողջ ակն իւր ունէր 'ի ցամաքակողմն առ երկիւղի որսորդաց, և զմիւսն 'ի ծովակողմն ուստի ոչ ինչ երկնչէր: Անցեալ ընդ այն ոմանք 'ի նաւորդաց, հարին զնա նետիւք. և նա լալով ասէր. ուստի երկնչէի, ոչ ինչ չար ընկալայ, և ուստի ոչ երկնչէի, պատահեաց ինձ այն. և եղէ մատնեալ:

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ երբեմն այնք որք երեւէին վնասակար, են օգտակար, և որք երեւէին օգտակար՝ են վնասակար։

'Ի վր Աղէն, և Առիւծու։

Աղուէսն փախուցեալ յորսորդաց՝ եմուտ յանձաւ ինչ, ուր եգիտ զառիւծ մի, յորմէ սպանաւ. և 'ի մեռանելն ասէր. բա՜բէ թշուառացելոյս, որ փախչելով 'ի մարդկանէ՝ անկայ 'ի ձեռս նր, որ անգութ է քան զամ՝ գազանս աշխարհի։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ բազումք փախչելով 'ի փոքր վտանգաց, անկանին 'ի մեծամեծս։

'Ի վր Աղէն, և Որթոյ։

Աղուէսն փախուցեալ յորսորդաց՝ թաքեաւ ընդ որթով։ Իբրեւ սակաւ ինչ անցին որսորդքն, համարելով թէ է թագուցեալ, սկսաւ ուտել զտերեւս որթոյ. լուեալ որսորդացն զշրշիւն տերեւոց, դարձան յետս, խորհելով թէ անասուն ինչ թագուցեալ իցէ ընդ այն տերեւովք, և նե-

Նետիւք սպանէին զեղն, որ ասէր. յի-
րաւի կրեմ՝ զայս, զի ես ո՛չ պարտէի
առլ վնաս այնմ՝, որ պաշտպանէր զիս:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ նա որ տրտմե-
ցուցանէ զնո՛ յորոց ընկալաւ զբարիս,
պատուհասի յոյ:

## Ի վ՛ր Իշոյ, Առիւծու, և Աքաղաղի:

Արածէին աքաղաղն և էշն: Առիւծ
մի յարձակեցաւ 'ի վ՛ր իշոյ. և աքա-
ղաղն կարկաչեաց մեծաձայն. փախեաւ
առիւծն 'ի ձայնէ նորա. զի ասեն, թէ
առիւծն երկնչի 'ի ձայնէ աքաղաղին: Իշն
կարծելով թէ փախչի յիւրմէ, պնդեցաւ
զհետ առիւծուն, և երբև այնչափ պնդե-
ցաւ մինչև ո՛չ եւս լսել առիւծուն զձայն
աքաղաղի, դարձաւ յետս, և եկեր զնա
բովանդակ. որ 'ի մեռանելն գոչէր աղա-
ղակելով: Ո՛վ տարաբախտ և յիմար.
դու որ չէիր ծնեալ 'ի զօրաւոր և 'ի կո-
րովի հօրէ, առի՞մէ իշխեցեր 'ի մարտ
մտանել:

Իմաստ առակիս:

Իմաստ առակս է, թէ մարդիկ յառաջ
քան զմարտնչելն ընդ ումեք, պարտին
ճանաչել զզօրութիւնս իւրեանց. Նոյն-

պէս և յայլ ամենայն գործողութիւնս:

### Ի վր Շան, և Պարտիզպանի:

Շունն պարտիզպանի ուրումն անկաւ 'ի ջրհոր մի, և պարտիզպանն առ 'ի հանել զնա անտի՝ էջ 'ի ջրհորն. և շունն համարելով, թէ իջանէ առ 'ի հեղձուցանել, խածաւ զնա. և նա դարձեալ 'ի վեր, ասէ. ես կամեցայ ազատել զքեզ, և դու կամեցար սպանանել զիս:

Իմաստ առակիս:

Առակս է ընդդէմ ապաշնորհաց և ապերախտից:

### Ի վր Հովուի, և Գայլոյ:

Հովիւ ումն գտեալ զփոքրիկ գայլ մի, էառ զայն. և սնոյց 'ի միասին ընդ շանց: Իբրև աճեաց նա. յորժամ երբեմն գայլ գայլն և գողանայր զոչխար մի, հալածէր նա զնա ընդ շանց, և յորժամ շունք ոչ կարելով ժամանել դառնային յետս, նա զհետ լինէր տակաւին, զի երբև հասանէր նմա, ինքն ևս մասնակից լինէր որսոյն: Եթէ երբէք գայլն ոչ սպանանէր զոչխարն, նա ինքն սպանանէր, և ու-

տէր 'ի շանց. գայս այնչափ արար մինչև հովիւն ծանեաւ զնրան, նմին երի և կախեաց զնա զծառոյ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ չար բնութիւն ինչ ոչ երբէք ուսուցանէ զբարի սովորութիւն:

## Ի ԼԷ Առիւծու, և Գայլոյ:

Առիւծն ծերացեալ էր, և հիւանդ անկեալ յայրի միում. ամենայն կենդանիք գնային յայց առնել նմա բաց յաղուեսու: Գայլն գտեալ պարապ՝ ամբաստան եղև զաղուեսու առաջի առիւծուն, ոյ թէ նա առ ոչինչ համարէր զտրն ամ՛ կենդանեաց, և յայնմանէ չէր եկեալ յայցելութիւն նր, այլ նա ասաց: Ո՞ 'ի սոցանէ որք եկին յայցելութիւն քո, օգտեաց քեզ այնչափ, որչափ ես, որ գնացի յորոնել վն քո զդեղ, և ահա գտի: Առիւծն հրամայեաց նմա ասել զդեղն. և նա ետ պատասխանի. զերծ զմորթն կենդանի գայլոյ, և ջերաջերմ արկ զքև: Առիւծն նոյնհետայն սպան զգայլն. որ այն ինչ անկեալ էր յերկիր մեռեալ, ասէ աղուէսն ծիծաղելով. չէ պարտ գրգռել զտրն յառնել չար, այլ առնել բարի:

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ նա որ հանապազ նիւթէ զչար, բազում անգամ՝ անկանի 'ի նոյն յիւր որոգայթ :

## Ի վերայ Կարապի, և Սագի :

Մեծատուն ոմն ունէր զկարապ մի, և զսագ մի, զմինն վ՟ս երգելոյ, և զմիւսն վ՟ս ուտելոյ : Կամելով 'ի միում գիշերի զենուլ զսագն, և ոչ տեսանելով թէ որն իցէ սագն, փոխանակ նորա կալաւ զկարապն, և 'ի լինելն զենեալ, երգելովն ծանուցեալ եղև, և զերծաւ 'ի մահուանէ :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ առաքինութիւնն օգտէ ևս 'ի վտանգի մահուան :

## Ի վերայ Սեաւ Հնդկի :

Մեծատուն ոմն գնեաց զսեաւ ոմն. և կարծելով, թէ սեւութիւն այն իցէ յանհոգութ՟է նր՟, ամ՟ օրինակաւ գուն գործեաց լուանալ զնա. այլ ոչ երբէք կարողացաւ փոխել զգոյնն :

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բնութիւն նախկին կայ միշտ հաստատ, և է անկարելի փոխել զայն:

### Ի վերայ Ծիծառան, և Եղջերուի:

Ծիծառն և եղջերուն մարտնչէին ի միմեանս վ՟ն գեղեցկութե. եղջերուն ասէր. գեղեցկութիւն քո ծաղկի միայն ի գարնան. այլ գեղեցկութիւն իմ մնայ ևս և ի ձմերան:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ կորովութիւն մարմնոյ լաւագոյն է քան զգեղեցկութիւն:

### Ի վեր Թռչնոյ և Չղջկան:

Թռչուն լինելով կախեալ զպատուհանէ միոջէ, չղջիկն եհարց ցնա, թէ ընդէր ի տունջեան կաս հանգուցեալ, և ի գիշերի երգես: Նա պատասխանի ետ, թէ յայն սակս զայն առնեմ. զի յաւուր միում յերգելն կալեալ եղէ: Յայնժամ ասէ ցնա չղջիկն: Այժմ չէ ինչ կարևոր զգուշ. զի օգտէ քեզ և ոչինչ. զի պայտ պարտ էիր առնել մինչև էիր կալեալ:

Ի–

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ ՚ի տարաբախտու-
թե անօգուտ է ապաշաւն :

## Ի վր Կողղնջոյ :

Որդի շինականի ուրումն եփէր առ հրով զկողղինջս, և լուեալ զձայնչիւն նոցա. ասէ. ով չուառական և չարագործ գեռունք, այրին տունք ձեր, և դուք նուագէք :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ. թէ նա որ գործէ ինչ արտաքոյ ժամանակի, անգոսնելի է :

## Ի վր Այրի կնոջ ուրումն, և Աղախնայց նր :

Այրի կին ումն ունէր զաղախնայս, զորս սովոր էր յամ գիշերի զարթուցանել ՚ի ձայն հաւուն : Տառապեալ աղախնեայց յոյժ, խորհեցան ՚ի միասին սպանանել զընտանի աքաղաղն. իբր զի ՚ի գիշերի զարթուցանէ զտիկինն իւրեանց : Զայս իբրև արարին, եւ առաւել չարի դիպան, զի տիկինն ոչ գիտելով զժամ հաւուն. վաղ քան զսովորական ժամանակն զարթուցանէր զնոսա :

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ. թէ բազմաց 'ի մարդկանէ խորհուրդք իւրեանց են պատճառ չարեաց:

## Ի վ՟ Շինականի ուրումն, և Բաղդին:

Շինական ոմն 'ի պեղելն զհողն, եգիտ զբազում ոսկիս. և յամենում աւուր պատուէր զհողն, վ՟ այն բարեաց, զորս ընկալեալ էր: Բաղդն երեւեալ նմ՟, ասէ. Ո՛վ դու, ընդէ՞ր գրես հողոյ ըզպարգեւս իմ, զորս ես ետու քեզ առ 'ի մեծացուցանել զքեզ: Եթէ 'ի փոփոխել ժամանակին, ոսկին անկցի 'ի ձեռաց, գիտեմ ես, զի դու ունիցիս բամբասել զբաղդն:

Իմաստ առակիս:

Առակս ուսուցանէ, թէ պարտ է ճանաչել զերախտաւորն, և զնմանէ շնորհակալ լինել:

## Ի վ՟ Երկուց Պանդխտաց:

Որք երկու երթային 'ի միասին զճանապարհ, մի ոմն 'ի նոցանէ եգիտ զտապար մի. և միւսն ազդ առնէր նմա զի

մի

մի ասացէ, թէ գտի, այլ թէ գտաք: Յետ սակաւ ժամանակի յարեան ՚ի վ՛ր նորա որք կորուսեալ էին զտապարն. նա որ գտեալ էր, ասէ ցընկերն իւր. մեռաք. և նա ասէ. ասա՛, թէ մեռայ, զի յորժամ գտեր զտապարն, ասէիր թէ գտի, և ոչ եթէ գտաք:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ նոքա, որք ոչ եղեն բաժանորդք բարւոյ և չարի, ոչ համարին հաստատ բարեկամք:

## Ի Ձէ Երկուց Գորտանց:

Գորտք երկու բնակէին մերձ միմեանց, մինն արածէր ՚ի լճի միում հեռի յուղւոյն. և միւսն ՚ի ճանապարհի ուր կայր սակաւ մի ջուր: Նա որ կայր ՚ի լճին, ազդ արար միւսոյն զի եկեսցէ առ ինքն, վ՛ս առաւել ևս յապահովն կերակրելոյ: Այլ նա ոչ կամեցաւ հնազանդել նմա ասելով, թէ ՚ի բազում ժամանակաց հետէ սովորեալ էր անդ: Մինչդեռ խօսէին զայս էանց ընդ այն կառք մի, և ճմլեաց զնա:

Իմաստ առակիս

Առակս ցուցանէ, թէ մարդիկ որք ունին զվատթար սովորութիւն, առաւել կամին մեռանել քան փոխել զբնութիւն իւրեանց:

## Ի վերայ Մեղուաց:

Գնաց ոմն 'ի փեթակս մեղուաց ինչ մինչ չէին անդ, ոչ տէրն, և ոչ մեղուքն, և եառ զմեղր: Իբրև եկն տէրն, և ետես զփեթակսն ունայնս, հիանայր ընդ սակաւութիւն մեղուն, որ էր մնացեալ, և հայէր թէ որչափ ինչ պակասեալ իցէ: Դարձ արարեալ մեղուացն յարածելոյ, իբրև տեսին զտէրն առ փեթակն իւրեանց, խայթեցին զնա խայթոցիւք իւրեանց: Տէրն դարձաւ առ նա և ասէ. Ա՛ չար կենդանիք, նա որ գողացաւ զմեղր ձեր, թողէք երթալ ողջանարատ, և զիս որ խնամ տանիմ ձեզ, խայթէք:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ ոմանք 'ի մարդկանէ առ անգիտութեան իւրեանց թոյլ տան թշնամեաց իւրեանց գնալ, և հալածեն զսիրելիս իբր մտանիչս:

Ի

### Ի վր Ծովածի:

Ծովածն կմ ձկնկուլն է թռչուն ինչ մենացեալ, որ հանապազ կեայ 'ի ծովու, և երկնչելով յորսորդաց, առնէ զբոյնս 'ի ժայռս ծովու: Միանգամ յանելն ըզձագս իւր, եղև ալէկոծութիւն մեծ 'ի ծովուն, մինչ ինքն գնացեալ էր գտանել զկերակուր. այն ինչ ալիքն ծփէին 'ի վր բունոյ, և ընկղմէին զայն, դարձ արարեալ նր, և տեսեալ զայս, ասաց. Ո՜վ տարաբաղդիս, որ փախչելով 'ի ցամաքէ, իբր յանքոյթ տեղի ապաւինեցայ աստ, որ է յաւէտ վտանգաւոր:

Իմաստ առակիս:

Ուսուցանէ մեզ, թէ բազում մարդիկ զգուշանան 'ի թշնամեաց. և գտանեն բարեկամս, որք են չար քան ըզթշնամիս:

### Ի վր Ձկնորսի ուրումն:

Ձկնորս ոմն յորսալն 'ի գետ ինչ, սփռեաց զուռկանս իւր, և կալեալ զերկու չրճանն, յորս կապեալ էր զվէմ մի, հարկա-

կածէր ուժգին զջուրն՝ որզի ձկունքն անկցին յուռկանսն։ Այր ոմն որ կայր մօտ առ նմա, տեսեալ զայն, յանդիմանեաց զնա ասելով, թէ ընդէ՞ր պղտորէ զգետն, զի ոչ կարէ ինքն ըմպել զջուր յստակ։ Նա պատասխանի ետ և ասէ. եթէ ոչ առնէի զայս, մեռանէի ես ՚ի սովու։

Իմաստ առակիս,

Առակս ցուցանէ, թէ արք քաղաքի իրեք յայնժամ առնեն շահս մեծամեծս, յորժամ մուծանեն երկպառակութիւնս ՚ի նմա։

## Ի վ՜ր Կապկի, և Դելփինի։

Սովորութի՛ էր աթենացւոց՝ զի յորժամ նաւէին, տանէին ընդ ինքեանս վ՜ն զբօսանաց փոքրիկ շունս, և զկապիկս։ Ոմանք ՚ի սոցանէ նաւէին ունելով ընդ իւրեանս զկապիկ մի, և եկին ՚ի Սունիօ դերասպն, ուր մրրիկ իմն մեծ ընկղմեաց զնաւն, և ամենեքեան լողային ընդ կապկի։ Դելփին մի տեսեալ զկապիկն զի լողայր, համարեցաւ թէ է մարդ ոք. և հանեալ ՚ի ծովէ էած ՚ի ցամաք։ Յորժամ հասին ՚ի Փիրէօ, եհարց զնա, թէ

յոր-

յորմէ ցեղէ աթենացւոց իցէ. պատասխանի ետ կապիկն, թէ է յազնուական զարմէ. և հարցեալ ցնա, թէ ճանաչէ՞ զՓիրէօ, համարեցաւ կապիկն, թէ իցէ մարդ ոք, և ասէ, թէ է մեծ բարեկամ իւր. և ընտանի։ Յայնժամ դլփինն վ՟ այսր ստութեն զայրացեալ՝ ընկեց զնա 'ի ծով, և հեղձոյց։

Իմաստ առակիս ։

Առակս է ընդդէմ նց. որք ոչ գիտելով զճշմարիտն, խորհին խաբել զայլս։

## Ի վ՟ն Ճանճից ։

Ի տեղւոջ ուրեք կայր մեղր տարածեալ, և ճանճքն թռանէին. յորժամ ուտէին, կռուեալ ոտից նոցա յայն, ոչ կարէին թռանել, այնչափ մինչև 'ի մին հեղձնուլ, և ասել։ Ով տարաբաղդութեն մերում, որք վ՟ դոյզն ինչ ուտելոյ մեռանիմք։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ որկորն է պատճառ բազում չարեաց ։

## Ի վր Հերմէսի և Անդրիագործի։

Հերմէս կամելով գիտել, թէ որպէս համարեալ իցէ 'ի մարդկանէ, գնաց 'ի տուն անդրիագործի ուրումն կերպարանու մարդոյ, և տեսեալ զարձանն Դիոսի, եհարց. թէ քանի՞ վաճառի. նա պատասխանի ետ, թէ հարիւր սկուտաց. ապա ասէ, քանի՞ իցէ Կռոնոսինն և Յունոնին. և նա ասէ. առաւել քան զԴիոսին։ Ապա տեսեալ և զիւր արձանն, խորհեցաւ, թէ լինելով դեսպան աստուծոց, առաւել քան զշահն մեծագին վարկցի առ մարդկան. եհարց և զայնմանէ. Յայնժամ անդրիագործն պատասխանի ետ և ասէ։ Եթէ դու կամիս գնել զերկոսին զայսոսիկ, զՀերմէսինն պարգևեցից քեզ.

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ սնափառ մարդիկ փոքր համարեալ լինին։

## Ի վր Երկուց Շանց։

Ունէր ոմն զերկու շունս. միոյն ուսոյց երթալ յորս, և միւսոյն պահել զտունն։ Յորժամ որսն որսայր ինչ, հանէր մասն պա-

պահապանին. մին այսորինի որսորդ շունն տրտմէր, և ասէր, թէ ինքն հանապազ երթայր յորս 'ի մեծամեծ աշխատանս. իսկ միւսն ոչինչ վաստակեալ յիւրոց վաստակոցն ուտէր : Պատասխանի ետ պահապան շունն, և ասէ. յայսմ՝ չեն իմ ինչ յանցանք, այլ տեառն, որ ո՛չ ուսոյց ինձ տանել աշխատանաց, այլ ուտել ըզվաստակս այլոց :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ պատանիքն որք ո՛չ գիտեն առնել ինչ, ինքեանք ոչ են արժանի կշտամբանաց, այլ ծնօղք իւրեանց, որք ո՛չ ուսուցին նոցա :

'Ի վր Գառին, և Գայլոյ :

Գառն թողեալ արտաքոյ հօտի իւրոյ, հալածեալ լինէր 'ի գայլոյ, և դարձեալ առ նա ասէ : Գա՛յլ դու, որովհետև ես ունիմ՝ լինել կերակուր քո, ա՛յդ զի մեռայց շատացեալ, հա՛ր սակաւ ինչ զուրինգ քո : Գայլն սկսաւ հարկանել, և գառնն կաքաւէր. զայս լուեալ շանցն, սկսան զհետ պնդել. և նա դարձաւ առ գառնն և ասէ. արժան է ինձ այս. զի ես եմ՝ խոհակէր, և կամեցայ լինել երաժիշտ :

Ի-

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ նոքա որք թողուն զայնս առ որ են ընդունակք, և կամին այլ ինչ առնել, յիրաւի կրեն զընդդիմակս :

## Ի վ՛ր Խաշափառի, և Ագռաւու :

Խաշափառն ծուլային էր արտաքս ՚ի ծովէ, և արածէր ՚ի ցամաքի : Ագռաւս մի քաղցեալ տեսանելով զայն, կալաւ առ ՚ի ուտել. և նա ասէ. ըստ արժանեաց դիպաւ ինձ այս, զի ես եմ ծովային, և կամեցայ լինել ցամաքային :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ մարդիկ որք թողուն զվարժմունս իւրեանց, և մտադրեն այնց, որք ոչ պատշաճին ինքեանց, իրաւամբք են տարաբաղդք :

## Ի վ՛ր Գողոց :

Գողք ոմանք մտին ՚ի տուն ինչ գողանալ. և չգտեալ զայլ ինչ բայց եթէ զաքաղաղ մի, գողացան զայն, և ՚ի բաց գնացին : Իսկ երբև կամէին սպանանել զնա, ասէ ցնոսա. մի սպանանէք զիս, զի ես պիտանի եմ մարդկան, և զարթուցանեմ

զնա ՚ի գործ : Պատասխանի ետուն գողքն. վ՜ն այսորիկ և մեք սպանանեմք զքեզ, զի դու զարթուցանես զնոսա, և մեք ոչ կարեմք գողանալ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ այնք որք են պիտանի բարեաց, երկբայական և անպիտան են չարաց :

## ՚Ի վ՜ր Հերմէսի, և Զևսեայի,

Զևս Հրամայեաց Հերմէսի, զի ամ՛ արուեստաւորաց տացէ զդեղ իմն ստութե : Եւ նա արար զսուփ մի մեծ. իբր զի տացէն ամենեքեան զբաժին իւրեանց. ետ ամենեցուն. դերձակքն եղեն յետինք նոցա. և վ՜ն զի ՚ի ափին մնայեալ էր մեծ իմն բաժին, զբոլորն ետ ն՜ց. ուստի զի մի ինչ յաւելցի. ուստի այսօրիկ ամ՛ արուեստաւորք են ստասաց. այլ դերձակք ոչ երբէք ասեն զճշմարիտն :

Իմաստ առակիս :

Առակս է ընդդէմ ստասաց արուեստաւորաց :

## Ի վր Պիսոսի, և Կենդանեաց:

Պիսոս արարեալ կոչունս՝ հրաւիրեաց զամ՝ կենդանիս: Արջն կարի իմն յամեաց: Պիսոս զարմացեալ ընդ յամել նր. եհարց ցնա զպատճառն, թէ ընդէ՞ր անագանեալ էր գալ յընթրիս: Նա պատասխանի ետ, և ասէ. սիրելի և պատուական տունն իմ յամեցոյց զիս: Զայրացեալ Պիսոսն ընդ այս, պատուհասեաց զնա տանել հանապազ զտունն իւր բատանձնեալ.

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազումք 'ի մարդկանէ, ընտրեն մանաւանդ կեալ առանձինն աղքատօրէն, քան ընդ այլոց շքով:

## Ի վր Գայլոյ, և Ոչխարի:

Գայլն խածեալ 'ի շանց, այնպէս կոշկոձեալ էր, մինչև տապաստ անկանել յերկիր: Տեսեալ զոչխար մի խնդրեաց 'ի նմանէ ջուր, և ասէ. եթէ դու տացես ինձ ըմպել, ես ինքնին գտից զկերակուր իմ: Ոչխարն ծանուցեալ զչա-

բամատութ՝ին իւր , ասէ . եթէ ես տաց քեզ ըմպել . ես եղէց կերակուր քո :

Իմաստ առակիս :

Առակս յանդիմանն առնէ զեղեռնագործն, որ խորամանկութեամբ կամի կորուսանել զպարզամիտս :

## Ի ձէ Նապաստակաց :

Նապաստակք մարտնչէին ընդ արծուոյ, և կոչէին յօգնութիւն իւրեանց զաղուէսսն, որք պատասխանի ետուն և ասեն . մեք օգնէաք արդեօք, եթէ ո՛չ գիտէաք, թէ ո՛ էցէք դուք, և ընդ ո՛ւմ մարտնչիք :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ նոքա որք մարտնչին ընդ հզօրագունի քան զինքեանս, վտանգեն զառողջութիւն իւրեանց :

## Ի ձէ Մրջնոյ :

Մրջիւնն յառաջագոյն եղև շինական, որ ո՛չ շատացեալ վաստակօք իւրովք, յափշտակէր զարդիւնս այլոց : Դիոս ցասուցեալ ընդ ագահութ՝ին նր, փոխեաց զնա յայս կենդանի : Այլ նա ՚ի փոխելն զմարմին իւր, ո՛չ փոխեաց զբնութ՝ի . զի տակա-

ւէին գնայ ընդ արտօրայսն , և գողացեն
զվաստակս այլոց , Թաքուցանէ :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ , թէ նոքա որք բնութեամբ են չար , եթէ փոխեսցեն զվիճակ իւրեանց , ոչ փոխեն զսովորութիս :

## Ի վր Զղջիկանի , և Կզէ :

Զղջիկանն անկեալ յերկիր , կալեալ եղև ՚ի կզէ , որ կամէր ուտանել զնա . և նա խնդրէր ՚ի նմանէ շնորհս չսպանանել զինքն . Պատասխանի ետ կուզն , և ասէ . ոչ կարեմ առնել զայս շնորհ , զի թշնամի եմ ամ՛ թռչնոց . և նա ասէ . ես ոչ եմ՛ թռչուն , այլ մուկն . վն այսորիկ եթող զնա երթալ : Յայլում՛ նուագի ևս անկաւ յերկիր . և կալեալ եղև յայլմէ կզոյ . և աղաչէր զնա չսպանանել զինքն . և նա պատասխանի ետ , և ասէ . թշնամի եմ ես ամ՛ մկանց . և յաւել ասել ցնա , թէ ինքն ոչ է մուկն , այլ թռչուն . և այսպէս զերծաւ , և ապրեցաւ վն փոխելոյ զանունն :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ , թէ մեք ոչ պարտիմք լինել միշտ նոյն . զի նոքա , որք փոփոխեն , զեր_

վերծանէին բազում անգամ 'ի վտանգաց ։

Ի վս Պանդխտաց ։

Պանդուխտք ոմանք երթային զծանապարհ առ ծովեզերբ. տեսին 'ի բարձր վայրէ ինչ, բազում շորացեալ ուռս որթոյ, զի ծածանէին 'ի վերայ ծովու. և նոքա համարեալ թէ իցէ մեծ ինչ նաւ, մինային թէ հասցէ անդ ուր էին նոքա: Իբրև ուռքն մերձ եղեն, վարկան թէ ոչ իցէ մեծ նաւ, այլ նաւակ ինչ ։ Հուսկ յետոյ իբրև հասին անդ, ծանեան թէ էին ուռք որթոյ. և ասացին ցմիմեանս. որչափ սպասեցաք այնմ, որ էր չնչին ինչ ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ մարդիկ որք յանկարծակի երևին աշխարհօք, յառնուլն զչափ նց, ոչ այնչափ ինչ արժեն ։

Ի վս Ցլոյ ։

Ցլուն տեսեալ զէշն, գնաց առ նա. և նկատեալ 'ի կերպարանս մարմնոյն, և 'ի կերակուրն զոր ուտէր. երջանիկ կարծայր զնա ։ Այլ իբրև ետես զբեռն, և զյաճախ հարկանելն զնա տեառն, ասէ.

այսուհետև ո՛չ ևս կոչեսցես զքեզ երջանիկ, զի տեսանեմ՝ թէ երջանկութիւնս այս լի է չարեօք:

Իմաստ առակիս:

Առակս ուսուցանէ մեզ, թէ ո՛չ պարտիմք զհետ լինել շահուց յորժամ լի են վտանգօք, և թշուառութեամբք:

## Ի ՎՐ ԻՇՈՅ, Ե ԱՂՈՒԷՍՈՒ:

Էշն երթայր 'ի զբօսանս արկեալ զանձամբ զմորթ մի առիւծու, և երկեցուցանէր զայլ կենդանիսն. իբրև ետես զաղուէսն, զնոյն գործեաց ահաբեկ առնել զնա: Այլ նա պատահման զանչեաց: Լուեալ զայն աղուէսուն՝ ասէ. ստուգիւ եթէ ես ո՛չ լուէի զձայն քո, ահաբեկ լինէի:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազում տգետք երևելին գիտել ինչ առ նմա որ ոչ ճանաչէ զնա. բայց 'ի խօսելն յայտնեն զանձինս:

## Ի ՎՐ ԻՇՈՅ, Ե ԳՈՐՏՈՑ:

Էշն ծանրաբեռնեալ փայտիւք, յանցանելն ընդ ճախին ինչ, անկաւ թշուառաբար.

ռաբար. և ոչ կարելով ելանել, ցա_
ւէր, և հառաչէր: Գորտքն որք էին 'ի
ճախճին անդ՝ լուեալ զհառաչանս եզոյ.
ասացին ցնա. զի՞նչ առնէիր դու եթէ
կայիր աստ այնչափ ժամանակս որչափ
կացաք մեք:

Իմաստ առակիս:

Զբանս զայսոսիկ մարթ է ասել անար_
ժէն ուրուք. որ վ՝ն դոյզն ինչ աշխա_
տանաց տխրի:

## 'Ի վ՝ Իշոյ, և Ագռաւու:

Էշն ունէր վէրս 'ի թիկունս իւր. և
յանցանել 'ի դաշտէ ինչ, ագռաւ մի
իջեալ 'ի վ՝ր նր, կտցէր, և էշն զռնչէր,
և ստոստէր: Տեսեալ գայլոյ զի տէրն
նր ծիծաղէր, ասաց: Աւաղ մեզ տա_
րաբախտեցս. զի ընդ տեսանելն զմեզ,
ցասնուն. և 'ի հալածելն նրն ծիծաղի:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ չարագործքն տե_
սութ՝բ միայն են ծանուցեալ:

## 'Ի վ՝ Իշոյ, և Առիւծու.

Էշն և աղուէսն երթային 'ի միասին
յորս, և մարտնչէր ընդ նոսա առիւծ
մի:

մի ։ Տեսեալ աղուեսուն զմօտալուտ վտանգն, գնաց իսկոյն ընդ առաջ առիւծուն, և ասէ. եթէ կամիս ներել ինձ, տաց զէշն 'ի ձեռս քո. և նա ասէ, ներեմ՛. և աղուէսն տարեալ զէշն էարկ յորոգայթս ինչ ։ Իբրև ետես առիւծն թէ ոչ կարէ փախչել էշն. կալաւ զաղուէսն. և ապա դարձաւ պատառել զէշն ։

Իմաստ առակիս,

Առակս նշանակէ, թէ նոքա որք մատնեն զընկերս իւրեանց, բազում՛ անգամ՛ վնասեն անձանց իւրեանց ։

'Ի վր̃ ընտանի Հաւու, և Ծիծռան ։

Ընտանի հաւն գտեալ զքանի մի ձուս օձի 'ի թուխս նստաւ ։ Տեսեալ զայս ծիծռան՝ ասէ, ո՛վ յիմար դու. ընդէ՛ր սածես զսոսա, որք ընդ աճելն, առ 'ի քէն սկսանին առնել անօրէնութիւս ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ անգթութիւնն ո՛չ երբէք մարթի լինել հաճոյ ինչ, թէպէտ և լինիցին արարեալ մեծամեծ բարեբարութիւնք ։

## Ի Վերայ Օձի:

Օձն առաւօթուր հարեալ 'ի բաղխմանց, տրտնջեաց առաջի Դիոսի. որ եւ պատասխանի, եւ ասէ: Եթէ դու խայթեալ էիր զառաջինն, որ եդ զոտն 'ի վերա, երկրորդն ոչ իշխէր վնասել քեզ:

### Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ նոքա որք ընդդէմ կան առաջին զրկողացն իւրեանց. յետ այնորիկ ակնածեալ լինին յայլոց:

## Ի Վր Աղաւնոյ:

Աղաւնին ծարաւեալ, ետես անօթ ինչ նկարեալ ջրով. եւ համարելով, թէ իցէ իսկական ջուր, ամբարձեալ 'ի վեր, հարաւ ուժգին ընդ ջուրն նկարեալ, որով թօթափեցան նմ փետուրք նր, և անկեալ յերկիր կալեալ եղև:

### Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ ոմանք առ կարի իմն խնդութեան առնեն ինչ առանց խորհրդոյ, և դնեն զանձինս 'ի վտանգի կործանման:

## Ի վր Աղաւնոյ, և Եղջերուի:

Աղաւնին տածեալ յաղաւնոցի միում, պանծայր ՚ի վր բազմութեն ձագուց իւրոց, զորս ունէր: Եղջերուին ասէ ցնա. լաեմ տառապեալ դու, զի որչափ ձագս հանցես, այնչափ յաւելուցուս զվիշտս քո:

Իմաստ առակիս:

Առակս յայտ առնէ, թէ ՚ի մէջ ծառայից նոքա են յաւէտ տառապեալք, որք բազում որդիս ծնանին ՚ի ծառայութե:

## Ի վր առն ուրումն Մեծատան:

Մեծատունն ոմն ունէր զերկու դստերս. ՚ի մեռանել միոյն ՚ի նոցանէ, կալաւ հայրն ՚ի վարձու կանայս առ ՚ի լալ զնա, ասաց ցնա միւս դուստրն: Մեք որք ցաւագնեալ եմք, պարտիմք առաւել լալ քան զոսա, որք չունին ինչ ցաւս. և չունին ես ինչ առնել: Եւ պատասխանի մայրն և ասէ: Մի՛ զարմանար թէ լան սոքա, զի զայն առնեն վ՛ս դրամոց:

Ի-

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ոմանք ՚ի մարդկանէ շահին վնասուք այլոյ ։

Ի վերայ Հովուին առասպել ։

Հովիւ մի եած զխաշինս իւր ընդ կաղնեաւ. և թողեալ զհանդերձս իւր ՚ի վ՛ր երկրի՝ ել ՚ի ծառն թօթափել զկոզակաղինս ։ Խաշինքն յուտելն զկաղինսն, կերան և զհանդերձս նր ։ Իբրև էջ հովիւն ՚ի վայր, և ետես զոր ինչ արարեալ էին, ասէ. ո՜ խաշինք չարագոյնք քան զայլ խաշինս. զի այլոց տան զասր իւրեանց առ ՚ի առնել հանդերձս. և դուք, զորս սնուցանեմ ես, բարձիք զհանդերձս իմ ։

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ, թէ բազումք ՚ի մարդկանէ առ յիմարութեան հաճին զօտարս, և վնասեն բարեկամաց ։

Ի վերայ Հովուին առասպել ։

Հովիւ մի ունէր զպատուական հօտ մի կովուց. և կորուսեալ զորթ մի, յոչ կարելն գտանել, արար ուխտ

Դիո-

Դիոսի, զի եթէ գտցէ զգողն որթոյ, ընծայեսցէ զգառն մի ։ Գնալով յառաջ՝ եգիտ ընդ կաղնեաւ միով, զի առիւծ մի ուտէր զայն ։ Նա զարհուրեալ, ամբարձ զձեռս իւր յերկինս, և ասէ. Ով Դիոս, ես խոստացեալ էի քեզ զգառն մի, եթէ գտանէի զգողն, այլ այժմ խոստանամ քեզ զցուլ մի, եթէ զերծայց ես 'ի ձեռաց սորա ։

Իմաստ առակիս ։

Առակս է ընդդէմ տարաբաղդից ։

## Ի վերայ Արծուոյ ։

Արծուէին կալով 'ի վ՛ր վիմի միոյ առ 'ի ունել զնապաստակս, խոցեալ եղե նետիւք Թափանցանց 'ի միոյ կողմանէ 'ի միւսն. և իբրև ետես զծայր նետին, ասէ. ցաւ է ինձ յոյժ, զի լինիմ սպանեալ 'ի փետրոց ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ցաւ մեծ է, յորժամ ոք տանջի յիւրոցն ։

## Ի վ՛ր Որդան, և Աղուէսու ։

Որդն ել արտաքս յերկրէ, և ասէ ցայլ ամ կենդանիս. ես եմ բժիշկ, և գիտեմ

զամ

զնամ դեղս որք գտանին. ով բժիշկն աս-
տուծոց Փէոն անուանեալ : Առ որ ա-
սացաւ. զիա՞րդ կամիս բժշկել զայլս,
ոչ կարելով բժշկել դու զքեզ, զի
ես պակասաւոր, և անզգամ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ այնմ որ ասէ, և ոչ կարէ ցուցանել փորձիւ, սակաւ հաւատս ընծայելի է :

## 'Ի վերայ Հաւուն որ ածէր ձու ոսկի :

Կին ումն ունէր զհաւ մի, որ ածէր զձու ոսկի. և համարելով թէ ունիցի 'ի ներքս զզանգուած ինչ ոսկւոյ, եզեն զնա, և եգիտ 'ի ներքս զայն, որ ինչ էր յայլ հաւս. և այսպէս կամելով ունել զմեծ փարթամութիւն, զրկեցաւ 'ի շահուն յայնմանէ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ մարդն պարտի շատանալ առաջիկայ իրօք, և փախչել յագահութենէ :

## 'Ի վերայ Գայլոյ, և Պառաւայ ուրումն :

Գայլն երթայր գտանել զկերակուր. եհաս 'ի տեղի ինչ, ուր նստէր տղայ մի և լայր, և պառաւ ումն ասէր. ընդէ՞ր լաս դու. կամիմ տալ զքեզ գայլոյ ա-

'ի

՚ի ուտել ։ Գայլն վարկաւ թէ ստոյգ ասիցէ. և մնաց անդ յերկար ։ Յուսկ յետոյ լուաւ, զի պառաւն գգուէր զորդայն և ասէր. եթէ գայցէ գայլն, ես սպանից զնա ։ Իբրև լուաւ զայս գայլն գնաց ՚ի բաց ասելով. ՚Ի տան աստ այլ ինչ ասեն, և այլ ինչ գործեն ։

Իմաստ առակիս ։

Առակս է ընդդէմ նց, որք այլ ինչ ասեն, և այլ ինչ առնեն ։

## ՚Ի վր Առիւծու, և Իշոյ ։

Իշուն գնացեալ եգիտ զառիւծն՝ և ասէ ցնա, ոչ ես դու աւելի քան զիս. և չունիմ ես ինչ երկիւղ ՚ի քէն. և եթէ կամիս, մտցուք ՚ի փորձ. և խոյն եմուտ յռնգունս նր, և սկսաւ շիթել ։ Առիւծն ՚ի ցաւոյն ձիրանաւն ցտէր զերեսս իւր ։ Իշուն յաղթեալ առիւծուն. Ձայնէր յաղթութի յաղթութի. և թռռեաւ արտաքս. և պատահեցաւ յոստայն ինչ սարդի. և ՚ի լինելն կերեալ ՚ի նմանէ, ասէր. ես պատերազմեցայ և յաղթեցի մեծագունին քան զամ գազանս աշխարհի. և այժմ լինիմ սպանեալ ՚ի սարդէ.

դէ, որ է աղկաղկ քան զոմն կենդանիս որք գտանին :

Իմաստ առակիս :

Առակս է ընդդէմ նց որք յաղթեն մեծամեծաց. և յաղթին ՚ի փոքունց :

## Ի վր Արծուոյ, և Աղուէսի :

Արծուին եգիտ զկրիա մի, և ոչ կարէր, ոչ ճարտարութբ. և ոչ արուեստիւ ինչ խորտակել զնա : Աղուէսուկն խորհուրդ ետ նմ սլանալ ՚ի բարձունս, և հարկանել զքարի զի խորտակեսցի : Արծուին ընկալաւ զխորհուրդն, և սլացաւ ՚ի վեր առ ՚ի արկանել ՚ի վայր : Աղուէսուկն մնայր նմա ՚ի վր երկրի. և յանկանել կրիայն և ՚ի ջաղջախելն, յափշտակեաց աղուէսուկն զայն. ուստի ցաւ մեծ եղև արծուոյն վն լինելոյ խաբեալ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ ոչ պարտիմք հաւատալ ում և իցէ :

## Ի վր Ագռաւու, և Աղուէսու :

Ագռաւն ունելով զորսն ՚ի բերանի իւրում կացեալ ՚ի վր ծառոյ միոյ կար-

կա-

կաշէր։ Տեսեալ զայս աղուեսուն, եկաց
առաջի նր և ասէ. կեցցես դու. բազում
անգամ լուեալ եմ ես, թէ համբաւն խա_
բերայ է. և այժմ ծանեայ զճշմարտութիւն
զի ըստ պատահման յանցանելն իմ առ_
տի. եկի արհամարհել զհամբաւն, որ
ասէ, թէ դու սեաւ ես քան զկուպր.
և այժմ տեսանեմ զքեզ առաւել սպիտակ
քան զձիւն, և ըստ իմում դատման, յաղ_
թես դու սպիտակութեն կարապաց։ Նւ ե_
թէ նուագաւդ ոնց և փետրովքդ ազ_
նուական իցես, արդարև դու ես թա_
գաւոր թռչնոց։ Ագռաւն հաւատալով,
թէ ճշմարտիւ ասէ, սկսաւ նուագել.
և պանիրն զերծաւ ՚ի բերանոյ նր. եառ
զայն աղուէսն ծիծաղելով յոյժ։ Յայն_
ժամ ագռաւն զամօթի հարաւ, և
զժուարեցաւ ընդ կորուստն, և ընդ
ամօթն։

Խրատ առակիս։

Առակս նշանակէ, թէ են ոմանք որք
բաղձան գովութե. և հանդերձ ամօ_
թով և վնասու խւրեանց սիրեն զմար_
դեկոյս. և գրաւին ՚ի յափշտակութի
նենգաւորաց, և պատառաբուծից։

## ՚Ի ՎԵՐ ՇԱՆ, ԵՒ ԻՇՈՅ։

Շունն շողոքորթէր զտէրն, և տէրն զշունն։ Զայս տեսեալ իշոյն սկսաւ լալ, և ուժգին տժգոհալ զխնամակէ իւրմէ. զի թուէր նմա անիրաւ ինչ՝ լինել շանն ընդունելի ամենեցուն. և ուտել ՚ի սեղանոյ տեառն իւրոյ. և միշտ կալ պարապորդ. և հանգչեալ. և զինքն միշտ կրել զհաւեստ, և հարկանիլ գաւազանաւ, և ատելի լինել յամենեցուն։ Խորհեցաւ՝ թէ շունն շողոքորթութեամբ ստանայ զսէր տեառն, և կնքեաց ինքն եւս վարել նոյն հնարիւք. որ թուէր յոյժ օգտակար, և նուազ աշխատալի։ Աստի ՚ի դառնալ տեառն ՚ի տուն, կամեցաւ փորձել զխնամակ իւր, և տեսանել՝ թէ զիարդ լինի. ընթացաւ ընդ առաջ տեառն իւրոյ, և ամբարձեալ ՚ի վեր, ամբակօքն հարկանէր զգլուխ տեառն իւրոյ։ Սկսաւ տէրն զայրագնիլ, և նոյնժամայն եկեալ ծառայքն հարին զտառապեալ էշն, որ կամէր քաղաքավարել։

Խրատ առակիս։

Առակս ոչ այլինչ ուսուցանէ, բայց միայն թէ մարդն ո՛չ պարտի փորձել

ճել ինչ առ 'ի առնել. յորժամ ճա֊
նաչէ թէ է 'ի բնէ անընտել առ այն:

## Ի վերայ Ցնոյ:

Ցինն հիւանդացաւ, և աղաչեաց զմայրն, երթալ աղաչել զածսն վ՟ մեղաց իւրոյ: Նա պատասխանի մայրն և ասէ. թէ չէ պարտ յուսալ յածոց օգնութիւն ինչ. զի պղծեալ և յափշտակեալ ես զզոհս նց:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ ած լսէ աղօթից կրօնաւորաց բարեպաշտից. այլ ո՛չ չարագործաց:

## Ի վեր Գողոյ. և Շան:

Գող ոմն կամէր տալ հաց շանն որ հաչէր ընդդէմ նր: Ասէ շունն. Ով գող. դու կամիս տալ ինձ հաց, զի մի՛ հաչեցից ես. այլ ո՛չ կամիմ զհաց քո. զի եթէ ես առից զայն, դու բառնաս 'ի տանէ զա՟մ ինչ:

Իմաստ առակիս:

Բարոյականութիւն. Զգո՛յշ լեր զի վ՟ դոյզն ինչ դիւրութեան մի՛ կորուսցես զմեծն. և զգո՛յշ լեր անձին քում

է չհաւա֊

չհաւատալ 'ամ' մարդոյ. քանզի են բազումք, որք առ 'ի խաբել, ոչ միայն խօսին բարեհաճութիւն, այլ և տանին բարեհաճութիւն :

## Ի Վր Ուլոյ, և Գայլոյ :

Այծն կամեցեալ երթալ յարածել, փակեաց զուլն 'ի տան պատուիրելով նմա մի' ումեք բանալ զդուռն մինչև դարձցի ինքն: Գայլն լուեալ զայս, յետ չուելոյ մօրն գնաց 'ի դուռն, և հարկանէր. և բառաչելով հանգոյն այծի, հրամայէր բանալ. ուլն իմացեալ զդաւաճանութիւն, ոչ եբաց ասելով. դու բառաչես իբրև զմայր իմ, այլ ես տեսանեմ 'ի ճեղքուածոյ, զի դու գայլ ես:

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն : Է՛ յոյժ պիտանի որդւոյ հնազանդիլ հօր և մօր. և երիտասարդին անկ է հնազանդիլ ծերոց :

## Ի Վր Աղուէսու, և Արագլի :

Աղուէսն հրաւիրեաց զարագիլն ընդ իւր յընթրիս. և եդ առաջի նր կերակուր հեղուկ տարածեալ յանօթ ինչ, այն-

պէս՝ զի արագիլն ոչ կարէր հաւաքել կտցաւ իւրով, որ է երկայն եւ սուր։ Աղուէսն լեզուաւն լափեաց զբովանդակն, եւ արագիլն չուեաց անօթի ծաղր եւ ծանակ եղեալ վ՞ ընկալեալ անարգանացն։ Յետ աւուրց ինչ արագիլն եւս հրաւիրեաց զաղուէսն ուտել ընդ իւր. եւ եդ զկերակուր յապակի անօթ ինչ, որ էր անձուկ պարանոցաւ, յորում ոչ կարէր աղուէսն մուծանել զգլուխ իւր։ Արագիլն ունելով զերկայն եւ զսուր կտուց, հասոյց մինչեւ ցյատակն անօթոյն, եւ ինքն միայն եկեր զայն. իսկ աղուէսն որ էր սովեալ յոյժ, առ թափանցիկ գոլոյ ապակւոյն տեսանէր զկերակուրն, եւ ոչինչ կարելով ճաշակել անօթի, եւ առաւել սովեալ քան զառաջինն՝ դարձաւ յորջ իւր։

Իմաստ առակիս։

Առակաւս ծանուցանի, թէ ծաղրն արժանի է ծաղու. խաղն՝ խաղու, եւ խաբէութին՝ խաբէութե։

## Ի ՎԷ ԳԱՅԼՆ, Ե ԱՂՈՒԷՍՆ։

Գայլն ունելով կերակուր բաւական, կայր հանգուցեալ։ Եգիտ զնա աղուէսն,

ուէն, և եհարց զպատճառ պաշապորդ լինելոյն: Նա պատասխանի ետ և ասէ. հիւանդ եմ. այլ աղաչեմ զքեզ խնդրել յածոց առողջութի վս իմ: Տեսեալ աղուէսուն, թէ նենգութիւք իւր ոչ յաջողէին, գնաց գտանել զհովիւն, և ասաց ցնա զուրանօր լինելն գայլոյ. զոր դիւրաւ կարէր սպանանել. Հովիւն առժամայն գնացեալ եգիտ զգայլն և սպան զնա. և աղուէսն էառ զորսն բովանդակ, որ կայր յորջն գայլոյ. այլ կարի սուղ տևեաց զուարճութի իւր, զի յետ սակաւուց եկն հովիւն. և զնա ևս սպան:

Իմաստ առակիս:

Բարոյականութի. Նախանձն դատապարտելի է. և բազում անգամ կործանէ զնա որ ունի զնախանձ:

## Ի վերայ Եղջերուին:

Եղջերուն հայէր յաղբեւր ինչ յստակ իբր 'ի հայելի. և պանծայր յոյժ յանձն իւր վս մեծամեծ եղջերացն. այլ ցաւէր, զի սրունք իւր յոյժ նուրբ էին: Յայնժամ վայրի եկն որսորդն, և եղջերուն գոլով սրընթաց քան զհողմն, փախեաւ. ընդե-

ցան զհետ նոյն շուներն, և ըստ պատահման եմուտ յանտառախիտ ինչ. և եղջիւրք իւր ընդհարկանէին 'ի ճիւղս ծառոց. յայնսակս յայնժամ սկսաւ նա գովել զոտսն իւր, և անարգել զեղջիւրսն որք եղեն պատճառ կորեալ լինելոյ 'ի շանց:

Իմաստ առակիս:

Այնմ՝ յորմէ ամ՟ փութով պարտիմք փախչել, զհետ պնդիմք. և այն ինչ յորմէ փախչիմք, է օրինելի 'ի վեր քան զամ՟: Փափաքեմք երանութե, յառաջ քան զգիտելն թէ յորում կայանայ այն: Նմին իրի չեն ինչ զարմանք եթէ զեղծանիցիմք 'ի թշուառութե, և 'ի մահ-ուան արտաքոյ ամ՟ դիտման մերոյ. իբր զի անխորհուրդ վարիմք:

## Ի ՎԷ Առակ. Ն Շինական:

Ի ժամանակին յորում ծառքն խօսէին, եմուտ շինական մի յանտառն, և խնդրեաց թոյլ տալ ինքեան առնել զբուն ինչ կացնոյ. անտառն թոյլ ետ նմա: Շինականն զկնի առնելոյն զբունն՝ սկսաւ հատանել զծառս. և անտառն ցաւեցաւ սակս եղծման իւրոյ, առնլով թէ ինքն եղեալ էր պատճառ չարի իւրոյ:

Ի-

Իմաստ առակիս ։

Բարոյականութե · Բարուոք նկատեա թէ ո՞ւմ տանես բարի · քանզի են բազումք, որք չարիս հատուցանեն այնմ, յորմէ բարիս ընկալեալ են ։

## Ի ՎՐ ԵՂՋԵՐՈՒԻ, ԵՒ ԵԶԱՆՑ ։

Եղջերուն փախուցեալ յորսորդաց եմուտ յախոռ ինչ եզանց · և աղաչեաց զեզինսն թոյլ տալ ինքեան թաքչել · նոքա ասացին ցնա, թէ չէ ապահով, զի տէրն և ծառայն գան, և հային ուր ուրեք ։ Ասէ եղջերուն, դուք միայն մի մատնէք զիս, և ես յապահովի եղէց ։ Ծառայն եմուտ յախոռն, և ոչ ետես զեղջերուն, զի թաքուցեալ էր ընդ խոտովք, և եղջերուն խիստ ոչինչ երկնչէր ։ Յայնժամ ծեր եզն մի ասէ · դիւրին իմն է խաբել զծառայն · այլ գործ մեծ է պատրել զտէրն որ է զգաստ յոյժ, և գիտող ։ Ոչ կնի սակաւուց եմուտ տէրն յախոռն, և նկատեալ զամ ինչ · յարկանել զձեռն իւր ՚ի խոտն, եգիտ զեղջերուն, և ՚ի կոչելն մեծաձայն՝ ընթացաւ ծառայն, և կալան զնա ։

Իմաստ առակիս,

Բարոյականութ՟ի. ՚Ի վտանգի դժուարին եւս է թաքչիլն. զի բաղդն ընդ սկսանիլն հալածել զոք, ոչ երբեք թողու մինչեւ ՚ի վախճան. կա՛մ մարդն խռովեալ՝ անձամբ զանձն յայտնէ :

## ՚Ի ԿԷ. Ձիոյ, և Եղջերուին :

Մարտնչէին ընդ միմեանս ձին և եղջերուն. և արտաքսեալ յարօտից, խնդրեաց նպաստ ՚ի մարդոյ. և առեալ նպաստ ՚ի նմանէ՝ յաղթող գտաւ. այլ հանդերձ այսու ամ՟ի յաղթողն արկաւ ընդ լծով և սանձիւ :

Իմաստ առակիս :

Բարոյականութ՟ի. Բազումք մարտնչին ընդդէմ աղքատութ՟ե. և իբրև յաղթեն, ծառայ լինին փարթամութ՟եց :

## ՚Ի ԿԸ. Աղուեսու, և Արծուոյ :

Կորիւնք աղուեսուն ելեալ արտաքս ՚ի մօրւոյ իւրեանց՝ յափշտակեալ եղեն յարծուոյ. և ՚ի կարդալն յօգնութիւն ըզմայրն, ընթացաւ նա, և խնդրեաց յարծ-

ւոյ թողուլ ազատ զկորիւնս իւր. այլ նա տանէր 'ի բոյն իւր ուր էին սիրելի ձագք իւր : Աղուէսն էառ հուր յայրել զծառն ուր արծուին ունէր զբոյն իւր. զայս տեսեալ արծուոյն դարձոյց նմա անդրէն զկորիւնսն :

Իմաստ առակիս :

Բարոյականութի. Արծուոյն խնայեալ լինէին զօրաւոր մեծատունքն. որք միշտ զրկէին զաղքատս. բայց երբեմն աղքատքն կամեցեալ խնդրել զվրէժ, 'ի ձեռս բերեն զայն՝ որ 'ի բաց բարձեալ եղև 'ի մեծատանց :

## Ի վէ Շինականի, և Արագլի :

Շինական ոմն սփռեաց զվարմն մ͞ կռ͞նկանց, և սագից, որք ուտէին զցորեանն. կալաւ նովաւ և զարագիլ մի. որ խնդրեաց 'ի նմանէ շնորհս թոյլ տալոյ. իբրզի ոչ է ինքն, ո՛չ սագ և ո՛չ կռունկն, այլ թռչուն անմեղ, և լաւագոյն քան զամ՟ թռչունս, զի սպասաւորէ մօր իւրում. և իբրև ծերանայ՝ խնամով տածէ զնա : Ասէ շինականն. չէ ինձ այնչափ ինչ փոյթ զայսմանէ. զի որովհետև դու կալեալ եղեր ընդ

ոյց պարտաւորաց, կամիմ զի և դու ևս մեռցիս ։

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն. Որ միանգամ վարի ընդ չարաց որք գործեն զչար, թէպէտ և ինքն իցէ բարի, պատժի նովին պատժով ։

## Ի վ՟ Գառին, և Գայլոյ ։

Գառնն երթայր ընդ նոխազի. և գայլն առէ ցնա. ընդէ՞ր թողեր դու զմայր քո, և գնաս զհետ գարշահոտ նոխազի. դարձ առ մայր քո, որ ունի զստինս լցեալ կաթամբ. գայս առեր ախնաւնելով զատուցանել զնա 'ի նոխազէ, և ուտել զնա. այլ նա պատասխանի ետ. Մայր իմ ետ զիս սմա 'ի պահպանութիւն. Նմինէրէ առաւել կամիմ հնազանդիլ մօր իմում քան քեզ. որ բանիւքդ քով կամիս բառնալ զիս աստի, և ուտել ։

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն. Ոչ է պարտ հաւատալ ամ՟ ունմք, զի են բազումք, որք ցուցանեն օգտել, և վնասեն ։

## Ի վ.է Մանկան, և ոմանց Գիւղականաց :

Մանուկ ոմն յարածելն զխաշինս յարօտ ինչ՝ գոչէր բազում անգամ ընդ կատակս, գայլն եկն, գայլն եկն. յորս ձայն ընթացեալ գիւղականացն ծաղր եղեն : Իբրև եկն գայլն, և սպան զոմն խաշինսն, ձայնէր մանուկն, այլ ոչոք կամէր ընթանալ :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն. Յորժամ ոք սովորեալ է ասել սուտ, եթէ ճշմարիտն եւս ասիցէ ոչոք հաւատայ նմա :

## Ի վ.է Արծուոյ, և Ագռաւու :

Արծուէն 'ի բարձրաբերձ ժայռէ ինչ խոյացաւ 'ի վ'ր գառին : Տեսեալ զայն ագռաւուն, կամելով նմանել նմա, ընկէց զինքն 'ի վ'ր խոյի միոյ, և պատատեալ ոտիցն 'ի բուրդ նր. կալեալ եղև և տուեալ 'ի ձեռս մանկանց :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն : Մարդն պարտի ճանաչել զչափ անձին իւրոյ, և ոչ առնել

նել զոր ինչ միանգամ տեսանէ զայլս առ_
նել, այլ որչափ ինչ զօրէն կարողութիւնք
իւր :

## Ի վ՛ր Եղջերուին, և Ոչխարի :

Եղջերուն կայր 'ի վ՛ր թիկանց ոչ_
խարի, և կարկաչէր ուժգին. ասէ ցնա
ոչխարն, եթէ դու առնէիր շանն զայն
զոր ինձ առնես, վայ էր քեզ. պա_
տասխանէ նա եղջերուն և ասէ, քանզի
գիտեմ ես զայն զոր առնեմ. բա_
րեկամ եմ ես խստասրտաց. և թշնա_
մի հեզոց :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն. Խաղաղասէր, և բա_
րեսէր մարդոյ դիւրաւ արարեալ լինի
անիրաւութիւն. այլ նմ՛ որ է բուռն, չէ
մարթ առնել այսպէս, զի է միշտ ակն_
ածեալ :

## Ի վ՛ր Սիրամարգին, և Սոխակին: ( որ է պլուլպուլ :)

Սիրամարգն տրտնջէր առաջի Յունոնի,
զի սոխակն նուագէր քաղցրաձայն. իսկ
ձայն իւր էր խժական, անհեթեթ և
ամգն

ոմյն ատելի, Նա պատասխանի Յու-
նոն, և ասէ. իւրաքանչիւրոք պարտի շա-
տանալ այնուիկ, որ տուեալ է նմա 'ի
բնութէ. զի եթէ նա է հաճելի վ՛ն
ձայնի իւրոյ. դու ևս ես հաճելի վ՛ն
գեղազարդ փետրոցս զորս ունիս :

Իմաստ առակիս :

Առակս յայտ առնէ, թէ այն ինչ որ
առ յ՛յ տուեալ լինի մեզ, պարտիմք
գոհութ՛բ ընդունիլ. գիտելով, թէ ամ՛
ինչ զոր նա առնէ, է չափով, թուով
և կշռով :

## Ի վ՛ր Կզոյ և Մկանց :

Կուզն գոլով ծերացեալ. ոչ ևս կա-
րէր պնտել զհետ մկանց, ոյք սովոր էր.
վասն այնորիկ թագեաւ յամբար ինչ
ալեր. ակնունելով որսալ առանց աշ-
խատանաց : Յաջողեցաւ նմա այն. զի
մկունքն կամելով ուտել զալիւրն, մի ը
միոջէ անաշխատ կալեալ եղեն 'ի կզոյ :

Իմաստ առակիս :

Յորժամ տկարանայ կարողութ՛ին, ընդ
զտեղին հանճարն :

Ի

## Ի վ՛ր Մրջնոյ:

Մրջիւնն ծարաւեալ՝ գնաց յաղբիւրն. և ը՛ տարաբաղդութե անկաւ 'ի ջուրն: Աղաւնին որ կացեալ էր 'ի վ՛ր ծառոյ՝ եարկ զոստ մի որով զերծաւ մրջիւնն: Յետ այսորիկ Հաւորսն կամելով ունել զաղաւնին . մրջիւնն խայթեաց զոտն նր . և այսպէս զերծաւ աղաւնին:

Իմաստ առակիս:

Պարտիմք միշտ շնորհակալ լինել գնրմանէ յորմէ ընկալաք զբարին . և ո՛չ գտանի անձն ոք այնպէս անարգ , որ ո՛չ կարասցէ օգտել յիմիք դիպուածի:

## Ի վ՛ր Առիւծու, Իշոյ, և Աղուէսու:

Առիւծն , էշն , և աղուէսն գնացին յորս . և որսացան որս մեծ . զոր կամեցեալ առիւծուն զի բաժանեսցի , էշն հաւասար բաժանեաց . առիւծն ցասուցեալ՝ կալաւ զէշն և սպան զնա : Ապա յանձնեաց աղուէսուն բաժանել . աղուէսն խորագէտ գոլով՝ ետ զմեծ մասն մի առիւծուն . և զփոքրիկ ինչ մասն եառ վ՛ս իւր . զայս տեսեալ առիւծուն

ասէ

ասէ ցնա. ո՞ ուսոյց քեզ այդպէս բարւոք բաժանել. աղուէսն ցուցանելով զէշն մեռեալ՝ ասէ. Թշուառութիւն տառապեալ էշոյն ուսոյց ինձ ։

Խրատ առակիս ։

Բարոյականութիւն. Երջանիկ է նա, որ տուժիւք այլոյ ուսանի ։

### Ի վ՟ Սիրամարգի, և Կռնկան ։

Սիրամարգն և կռունկն բազմեալ էին յընթրիս 'ի միասին. սիրամարգն պարծէր վ՟ ունելոյ զգեղեցիկ տուս. ասէ կռունկն. այո՛ այդպէս է. չիք քան զքեզ գեղեցիկ թռչուն. բայց հազիւ կարես թռանել 'ի վ՟ տանեաց. իսկ ես թռանելով անցանեմ 'ի վեր քան զամպս ։

Խրատ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ո՛չ ոք պարտի արհամարհել զայլս, զի բնութիւն ետ զձիրս իւր ամենայն ումեք. և եթէ ոք չունի ըզձիրս քո, գուցէ ունի զայլ ինչ, որ չէ նուազ գեղեցիկ քան զքոյդ ։

Ի

## Ի վ՜ր Վագերի, և Որսորդի ։

Որսորդ ոմն յորսալն զերէս, վագրն ասաց ցայլ կենդանիս կալ 'ի մի կողմն. և ինքնին միայնակ կամելով զդէմ ունել, վիրաւորեցաւ. և 'ի փախչելն՝ ասէ աղուէսն, ո՞վ վիրաւորեաց զքեզ. զի այդպէս ուժգին փախչիս. ո՞ իշխեաց վիրաւորել զայդպիսի զօրաւոր կենդանի, Ետ պատասխանի վագրն և ասէ. չգիտեմ թէ ո՛վ խոցեաց զիս, բայց առ կարեվէր խոցուածոյս զոր ընկալայ, համարիմ թէ էր այր ոմն ։

Իմաստ առակիս ։

Առակս է ընդդէմ յանդուգն մարդկան ։

## Ի վ՜ր Ցլուց, և Առիւծու ։

Չորս ցուլք եդին դաշն ընդ միմեանս, և յ՛ամ վտանգի էին միացեալք ։ Առիւծն ետես զի արածէին 'ի միասին, այլ ո՛չ կամեցաւ յարձակիլ 'ի վ՛ր նց. իսկ երբև եգիտ զատուցեալ, յարեաւ 'ի վ՛ր նց, և սպան զամենեսին մի ըստ միոջէ ։

Իմաստ առակիս:

Նաբրոյականութի. Ոչինչ իր է այնպէս հաստատուն ո՛չ զմիաբանութի՛ն. իսկ անմիաբանութի՛ն զամ ինչ տկար գործէ:

## Ի Վէ Թռչնոյ, և Ձագուց Իւրոց:

Թռչունն եղեալ զձագս իւր յանդ ինչ ցորենոյ. եւ 'նց պատուէր աչալուրջ մտադրել, թէ երբ լինիցի զրոյց զհնձոց. և 'ի դառնալն առ նոսա մօրն. ձագքն պատմեն ցնա. թէ տէր անդոյն յանձն արար դրացեաց հնձել զցորեանն. եւ պատասխանի մայրն և ասէ. անհոգ լերուք՝ զի ոչինչ լինի: Յերկրորդումն աւուր պատմեն ցնա, թէ տէրն յանձնեաց սիրելեաց իւրոց քաղել զանդն. ասէ մայրն ցնոսա, ապահով լերուք. զի չէք ինչ վտանգ: Յերրորդումն ասեն ցնա. լուաք զի ասէր, թէ ես և որդին իմ եկեսցուք 'ի հնձել: Յայնժամ ասէ մայրն. այժմ է ժամանակ փախչելոյ. զի ո՛չ երկեայ ես, ո՛չ 'ի դրացեաց և ո՛չ 'ի սիրելեաց, գիտելով թէ ո՛չ գային. այլ այժմ երկնչիմ 'ի նմանէ. քանզի գիտեմ թէ նա առնէ:

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն. Որովհետև մարդիկ են դանդաղ 'ի գործս այլոց, յորժամ կամիմք զի բարիոք արարեալ լինիցի ինչ, պարտիմք անձամբ առնել զայն ։

## Ի վր Ծարաւեալ Աղջերկին ։

Աղջերուկն ծարաւեալ՝ եգիտ զանօթ ինչ ջրոյ, այլ ջուրն էր այնչափ խոր, զի ո՛չ կարէր ըմպել. բուռն արար հեղուլ, բայց և ո՛չ 'ի այսմ եհաս դիտաման իւրում ։ Յայնժամ էառ զբազում մանր խրճունս և էարկ յանօթն. և բարձրացեալ ջրոյն 'ի վեր, էարբ ։

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն. Զորինչ ո՛չ կարես դու առնել ուժգնութեամբ. արա՛ իմաստութեամբ և խորագիտութեամբ ։

## Ի վր Խոզի, և Շինականի ուրումն ։

Գեղջուկ ոմն տեսեալ զի խոզն ապականէր զգարին՝ եհատ զմի ունկն նր, յայլ անգամ ևս տեսեալ՝ եհատ և զմիւսն. և յերրորդումն կալաւ զնա և

եած առ տէրն իւր, և սպանին զնա : Ի ցաւելն նմ մծ ոչ գտանելոյն զսիրտ խոզին, ասաց գեղջուկն. տր մի՛ ինչ որոնիր թէ խոզս այս չունէր զսիրտ, և զզգայութիւն. զի եթէ ունէր զզգայութիւն, ոչ գայր միշտ ապականել զպա-

րէն մեր :

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն. Են ոմանք որք զայնչափ յիմարական գործս գործեն, մինչև մարթ է համարել թէ չունին զսիրտ :

## Ի ԼԷ Ձկնորսի ուրուսն :

Ձկնորս ոմն ոչ գիտելով բարւոք զարուեստ ձկնորսութեան, էառ զսրինգ մի և զուռկանս, և գնաց յեզր ծովուն. և նստեալ ՚ի վր քարի միոյ, սկսաւ հարկանել զսրինգն, կարծելով թէ նովին հնչմամբ կարիցէ ունել զձկունս : Տեսեալ զի ոչինչ օգտեցաւ այնու, եթող հարկանել զսրինգն, և ընկեց զուռկանս ՚ի ծով, և կալաւ քանի մի ձկունս : Ի հանելն զգործին ՚ի ցամաք, ետես զձըկունսն զի ոստոստէին. և ասէ ցնս. յորժամ հարկանէի ես զսրինգն, ոչ ոք ՚ի

ձէնջ ոստոստէր․ այժմ ոչ եւս է ժամանակ ոստոստելոյ։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ ամ՟ ինչ բարեօք լինի, յորժամ արասցի յիւրում ժամանակի։

Ի վ՛ր Մանկան միոյ, և Բաղդի։

Մանուկ ոմն ննջէր առ ջրհորով միով։ Բաղդն զարթոյց զնա և ասէ, ՚ի բաց գնա այտի, զի եթէ դիպուածով անկցիս ՚ի ջրհորն, մարդիկ ոչ բամբասեն զյիմարութ՛ի քո, այլ զբաղդն։

Իմաստ առակիս։

Առակս ազդ առնէ, թէ ՚ի մեծի մասին վտանգքն յորս անկանիմք, է վ՛ն անմտութե՛ մերոյ, և մեք բամբասեմք զբաղդն։

Ի վ՛ր Շինականի, և Հերքիւլեայ։

Սայլն շինականի ուրումն սուզաւ ՚ի տղմի․ և աղաչէր զՀերքիւլէս շուծն օգնել․ և հանել ՚ի տղմոյ անտի․ այլ լուաւ ձայն յերկնից որ ասէր։ Ո՛վ յիմար․ հա՛ր զձին,

զձին, և մղեա յառաջ զանիւսն. և յայնժամ կարդա յօգնութի զՀերքուլէս. և նա օգնեսցէ քեզ :

Իմաստ առակիս :

Նարոյականութի. Ընդունայն ուխտքն ոչինչ օգտեն. զի ած ոչ լսէ, այլ կամի զի դու անձամբ անձինդ օգնեսցես, և ապա օգնեսցէ քեզ ած :

Ի վր Շան միոյ կոչեցելոյ յընթրիս :

Մարդ ոմն կոչեաց յընթրիս զբարեկամ իւր. և շունն տանուտն կոչեաց զայլ շուն մի. որ տեսեալ զընթրիսն բարւոք ՚ի կարգի, սկսաւ զուարձանալ ձետով իւրով, և ստոստել ՚ի խոհանոցի : Խոհակերն իբրև ետես զօտար շունն, կալաւ զձետոյ և ընկէց ՚ը պատուհանն. առ որ ասացին այլ շունքն, զիա՞րդ բարւոք ընթրեցեր. և նա ասէ, այո՛ այնպէս, զի յորժամ ելի արտաքս՝ չտեսի զճանապարհն :

Իմաստ առակիս :

Առակս ուսուցանէ, թէ մարդն ոչ պարտի ուրախանալ ՚ի վր այնց իրաց, զորոց ունի ցաւել :

## Ի վր Շան, և Գայլոյ:

Շուն մի ննջէր առաջի սրահի իւրոյ. և ՚ի գալ գայլոյ առ ՚ի ուտել զնա, ասէ ցնա շունն. աղաչեմ զքեզ մի՛ սպանաներ զիս, զի եմ՛ փոքր, այլ մնա՛ զի տրն իմ արասցէ հարսանիս. և ես պարարտասցայց, և յայնժամ կերիցես զիս: Դէպ եղև զի տրն արար հարսանիս. և շունն պարարտացաւ. եկն գայլն և եգիտ զնա, և ասէ. կամիմ զխոստացեալն քո. իսկ շունն փախչելով ասէ. գայլ դու. յայսմհետէ եթէ գտցես զիս, այլ ես մի՛ մնար հարսանեաց:

Խրատ առակիս:

Բարոյականութի. Իմաստունն յորժամ զերծանի ՚ի վտանգէ. գիտէ զգուշանալ յայնմանէ:

## Ի վր Առիւծու, և Ցլու:

Առիւծն ունելով ՚ի միտ սպանանել զցուլն, կոչեաց զնա յընթրիս՝ ասելով. բարեկամ. ես զենի զոչխար մի, կամիմ՝ զի դու յայսմ երեկոյի ընթրիցես ընդ իս: Ցուլն գնաց՝ և ետես զի ոչ ինչ

էր

էր 'ի կարգի բաց յաշխարհէ, և խոկոյն փախեաւ։ Ասէ առիւծն, ընդէ՞ր գնաս դու. պատասխանի ետ ցուլն. տեսանեմ զոմն կահս խոհանոցին 'ի կարգի վ՟ն ցլու միոյ, և ո՛չ վ՟ն ոչխարի։

Իմաստ առակիս։

Բարոյականութի. Խորագէտքն դիւրաւ ճանաչեն զխորհուրդս անզգամաց։

Ի մէջ Հաւու միոյ, և Աղուեսու։

Աղուէսն եմուտ 'ի տուն հաւուց, և տեսեալ զմինն հիւանդ, եհարց թէ զի֊ ա՞րդ կեաս. պատասխանի ետ հաւն. ես բարւոք կեցից, եթէ դու գնասցես աստի։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ յանդիման լինելն թշնամւոյն միշտ տաղտկալի է. և պարտ է կալ զգոյշ. զի ո՛չ երբեք կարէ առնել ինչ, բայց եթէ վնաս, թշնամանս, և անպատուութի։

Ի մէջ Մանկան, և Կարճի։

Մանուկ ոմն երթայր ըմբռնել զթիթեռունս յանդի, և զի էր պարզամիտ, կա-

կամեցաւ ունել զկարիճ մի. որ ճանա-չելով զպարզմտութիւն նր, ասէ. Հան-դարտեա՛ց, և մեկնեա՛ զձեռն քո աստի՝ եթէ ոչ կամիս մեռանել ։

Իմաստ առակիս,

Առակս նշանակէ, թէ խորագէտն ճա-նաչէ, թէ զորո՛յ զհետ պնդիլ պարտ է, և յումմէ՛ փախչել ։

Ի վր Իշոյ, և Որթոյ ։

Յարածիլն իշոյն և որթուն յարօտ-ինչ, լուեալ թէ 'ի ձայն զանգակին գայլն զինուորքն, ասէ որթն ցէշն, փա-խիցո՛ւք աստի, զի մի՛ կալեալ լիցուք 'ի թշնամեաց. Ասէ էշն. փախի՛ր դու, որ երկնչիս 'ի մահուանէ. ինձ ոչ է պի-տոյ. զի յում ձեռն և իցեմ՝ միշտ պար-տիմ տանել զբեռն ։

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ, թէ ոչ պարտիմք երկնչիլ 'ի փոփոխելն զտեարս, եթէ չի-ցեն յոռեգոյն քան զառաջինսն ։

Ի վր Աղուեսու, և Կանանց ոմանց որս-որդէին զհաւս ։

Աղուէսն անցանէր 'ի դեղջէ ինչ. ե-տես զկանայս ոմանս՝ զի ուտէին զհաւս, և

և առէ ցնա ։ Մի՛ թշուառացելոյս․ ե-
թէ ես առնէի զայն զոր դուք առնէք,
քանի՞ շունս և շփոթս ունէի զհետ իմ ։
Պատասխանի ետ միոյն յայնց կանանց․
մեք ուտեմք զիրս մեր․ և դու գողանաս
զիրս այլոց ։

Իմաստ առակիս ։

Առակս կամի ասել, թէ մեք չունիմք
զայն գատումն զիրաց օտարի․ որպ ու-
նին տեարքն ։

Ի վր պարարտ Որձառոյն, (որ է ըզվըլըխ)
և Ձայ վարփի ։

Որձառք ինչ պահեցան առ 'ի պարա-
րել․ և տէրն հրամայեաց խահարարին
զենուլ մ՛ի ընտրեաց զպարարտոն․ և
խահարարն արար զհրամանն թողեալ
զմի վտիտն ։ Ասացին պարարտ որձառքն․
ո՜վ զիարդ լաւ եւս էր զի լինէաք նիհարք․
և ոչ պարարտք ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ կեանք աղքատաց է
առաւել ապահով քան զմեծատանց ։

Ի վր Կարապի, և Արագլի ։

Կարապն գոլով մերձ 'ի մահ՝ քաղցրա-
ձայն երգէր քան յայլ նուագս ։ Արա-

գիլն ասաց. ընդէ՞ր առնես զայդ. եւ պատասխանի. առնեմ զայս, զի ոչ ես խորհիմ զաստի կենաց. թէ զիա՞րդ կարիցեմ սնանել. եւ ոչ ունիմ ես տարժանել 'ի գտանել զկերակուր:

Իմաստ առակիս:

Առակս ուսուցանէ, թէ մեք ոչ պարտիմք երկնչել 'ի մահուանէ, որով 'ամ թշուառութիւնք եւ տառապանք աշխարհիս զրաւին:

### Ի վր Ագահէ ումեմն, եւ Խնձորոյ:

Ագահ ոմն ունէր զբազում պատուական խնձորս 'ի պարտիզի. եւ ոչ զմին ճաշակէր բայց եթէ 'ի փտելն: Մին յորդւոց իւրոց որ էր առատասիրտ ածէր զընկերս իւր 'ի պարտէզն, եւ ասէր. կերայք զայն 'ամ խնձորսն զորս եւ կամիք. բաց յապականելոց. զի զայնս կամի հայրն իմ վ՟ իւր:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ յաշխարհի չիք ինչ առաւել թշուառալի քան զլինելն ագահ. ոչ գիտելով վայելել յայն բարին զոր բնութիւն շնորհէ:

Ի

## Ի վր Արծաթոյ, Բազէի, և Ցինոյ :

Բազէն և ցինն վիճէին ընդ միմեանս առաջի արծուոյ, թէ ո՛ ՚ի նոցանէ իցէ առաւել ազնուական : Ցինն գովէր զզօրութիւն իւր և զարագընթացութիւն : Անդին վճռոյ արծուոյն՝ որ ասաց ցնա . երթայք յորս, և որն ՚ի ձեռն բերցէ զլաւագոյն որս, դատեսցից զնա առաւել ազնուական : Ցինն կալաւ զմուկն մի . և բազէն զաղաւնի մի . և արծուին ասէ : Որչափ ազնուագոյն է բազէն և գերագոյն քան զցինն . որչափ աղաւնին է ազնուագոյն և գերագոյն քան զմուկն :

Խրատ առակիս :

Առակս խրատէ, թէ մարդիկ ունին լինել մեծ համարեալ ՚ի գործոց իւրեանց . և ո՛չ դասել ՚ը մարմնոյ :

## Ի վր Ասղորօրակի :

Ասղքարակն տեսեալ սպանանել զհայրն իւր, լայր, և խանչէր ուժգին . այլ երբեմն գիտաց, թէ ՚ի մահուան հօրն, լինէր տէր խոզակաղնոյն, լռեաց . և ո՛չ ևս ելաց :

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ մեծութ՛իքն ժառանգութե՛ դադարեցուցանեն զցաւն մեռելոյ հօրն:

## Ի վ՛ր Ծերացեալ Գայլոյ:

Գայլ մի ծերացեալ էր, և ոչ ևս կարէր գտանել կերակուր. և ոչ ոք ևս տայր նմ՟. այլ մանաւանդ յամենեցուն էր հալածեալ: Գնալով ընդ անտառ ինչ՝ եգիտ զեղն մի մեռեալ ինքնին. առ որ մատեաւ իսկեիսկ սոյ թէ նկթեալ ՚ի քաղցու: Առեալ զհոտն այնր այլ գայլոց, եկին օգնել նմա յուտել, ասելով. մեք ընկեր քո եմք: Ասէ ծերացեալ գայլն. այժմ զի ունիմ ես կերակուր, դուք ամենեքեան ընկեր իմ էք. և յառաջագոյն հալածէիք զիս, և ոչ ճանաչէիք ոչ եղբ ազգակից, և ոչ եղբ բարեկամ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ մեծութ՛իքն են որք ստանան բարեկամս. մանաւանդ թէ զթշնամիս զգեցեալս զհանդերձս բարեկամութե. որք ցայնչափ տևեն, ցորչափ օգուտ ինչ զգան գալ ինքեանց:

Ի

## Ի վր Աղուեսու միոյ, և Շինականի ։

Աղուէս մի աղանեալ էր զբազում հաւս շինականի ուրումն, որ կալաւ զնա թակարդիւ. աղաչեաց զնա աղուէսն չսպանանել զինքն, խոստանալով ոչ ես առնել չար ինչ ։ Ասէ շինականն, եթէ դու էիր կենդանի հաւատարիմ՝ ներէի քեզ. այլ զի ես այնպէս նենգաւոր, ոչ կամիմ վստահանալ քեզ, այլ կամիմ զի մեռցիս ։

Իմաստ առակիս ։

Բարոյականութի. Ոչ երբէք պարտ է հաւատալ առն նենգաւորի. և ոչ ներել, յորժամ կարող եմք պատուհասել ։

## Ի վր Երկուց Խոզից ։

Գեղջուկ ոմն ունէր զերկու խոզս որք մարտնչէին ընդ միմեանս. և նա ցաւուցեալ սպան զմինն. միւսն եկաց հաճեալ՝ տեսեալ զիւր թշնամին մեռեալ. և յետ այսորիկ յածելն զնա և 'ի սպանդ. ասաց ինքն ցինքն. առ ինչ վախճան խնդացի ես ընդ մահ թշնամ_

ւոյ իմոյ՝ որովհետեւ եւ ես պարտ էի մեռանել ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ մարդն ոչ պարտի խնդալ ընդ մահ թշնամւոյ. զի այն հասարակ է ամենեցուն ։

## Ի վր Եզնավորի, և Եզանց ։

Եզնավոր ոմն եմուտ յախոռն ուր եգիտ զմի եզինս իւր զուարձացեալս. եւ եհարց զպատճառն ուրախութեն նց. նոքա ետուն ՚նմա պատասխանի, թէ յայսմ գիշերի տեսաք յերազի, զի դու ածեր զմեզ յարածել ՚ի զուարձալի իմն դաշտ. եւ նա ասէ. եւ ես տեսի յերազի, զի այսօր զօրն ողջոյն վարեցի ձեօք զերկիր. եւ երազն իմ ճշմարտեցի, եւ ձերն ստեցի ։

Իմաստ առակիս ։

Առակս կամի ցուցանել մեզ, թէ ոչ պարտիմք հաւատալ երազոց. եւ առաւել այնց իրաց որք կախեալ կան յազատ կամաց մարդոյ ։

## Ի վէ Բաղդի, և Սան Թոյ ։

Այր ոմն կամելով մեծանալ, լուա՛ւ թէ վաճառականութիւնն էր 'ի դէպ առ այս. Նախ իբրև վաճառեալ զամ հայրենիս ինչս իւր, գնեաց զնաւ մի. և զբազում վաճառս. և ելեալ զճանապարհ, շահեցաւ յոյժ, մինչև փարթամանալ ։ Նոքա որք ճանաչէին զնա, զարմանային. և հարցանէին թէ զիա՞րդ այնպէս հարստացաւ. և նա տայր պատասխանի, թէ հանճարով իմով ։ Այլ ո՛չ տալով 'ի վախճան հարստութեց իւրոց, կամեցաւ միւսանգամ գնալ ընդ ծով. և յարուցեալ մրրիկ մեծ, կորոյս զամ ինչս իւր, և հազիւ զերծաւ ինքն ։ Յետ այսորիկ իբրև հարցաւ նա, թէ ընդէ՞ր այնպէս տնանկացաւ, պատասխանեաց, թէ առ դաւաճանութե բաղդի ։ Զայս լուեալ բաղդին գժգմնեցաւ և ասէ. յորժամ դու ստացար զմեծութիւն, անձին գրաւէիր զպարծանս. իսկ այժմ զգանգատանս չարեաց ինձ գրես ։

Իմաստ առակիս ։

Ուսուցանէ, թէ մարդն որչափ յօժարեալ է 'ի գովել զանձն իւր, ջանալով

լով պարծիլ ՚ի վ՛ր բարեացն որ տու֊
եալ եղեն յ՛յ, իբրեւ թէ զիւրմէ կա֊
խելն. եւ զյանցանս չարին որոց ինքն եղեւ
պատճառ, յայլոց վ՛ր արկանել :

## Ի վ՛ր Օձաձկան. եւ Օձի :

Օձաձուկն ասաց օձին. ընդէ՞ր մեք գո֊
լով երբ համանման եւ ազգակից, մար֊
դիկ մանաւանդ ինձ զհետ լինին, քան
քեզ : Պատասխանի ետ օձն. զի որ միան֊
գամ վնասէ ինձ, վրէժ խնդրեմ ՚ի
նմանէ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ նոքա որք վրէժ֊
խնդիր լինին, նուազ վնասին յայլոց.
եւ են անխածելիք :

## Ի վ՛ր Իշոյ, Կապկի, եւ Խլրդան :

Էշն ցաւէր վ՛ն ոչ ունելոյն զեղջիւրս.
եւ կապիկն վ՛ն ոչ ունելոյ զագի. ասէ
ցնա խլուրդն. լռեա լերուք, որովհետեւ
տեսանէք զիս չունել զաչս :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ մեք համբերութ՛բ
տանիմք թշուառութեանց մերոց, յորժամ
տե֊

տեսանեմք զայլս ունել շարեաց քան զմեզ։

### Ի վերայ Ձկանց։

Ձկունքն եդեալ ՚ի մէջ ձիթոյ առ ՚ի խորովել հրով, ասացին ցմիմեանս. ուտեցո՛ւք աստի և փախիցուք, և յասանուլն անկան ՚ի հուր. և ասէին. Նո՛ւազ խիստ մահ էր մեռանել ՚ի մէջ ձիթոյ։

Իմաստ առակիս։

Առակս ուսուցանէ մեզ, թէ փախչելով յառաջիկայ ինչ վտանգէ, անկանիմք յևս մեծագոյնն։

### Ի վ͞ր Ագահի ուրումն։

Գնացեալ էր երբեմն ագահ ոմն դեսպան ՚ի քաղաք ինչ։ Իսկոյն, որպ սովորութիւն էր, փողահարքն գնային ՚ի հարկանել զփող առաջի դրան նր, որպ զի պարգևեսցէ ինչ նոցա։ Ագահն առաքեաց ասել ցն͞ս՝ զի մի՛ հարկանիցեն. քան զի էր ՚ի տրտմութեան և ՚ի սգում՝ սակս մահուան մօր իւրոյ։ Նմին երի բազումք ՚ի քաղաքացւոց գնացին այց առնել նմա. և ՚ի զբուցաքանելն ընդ

մի

միմեանս, Հարցին ցնա թէ քանի՞ ժա_
մանակք են յորմէհետէ մեռեալ իցէ
մայրն իւր. և նա ասէ. են արդեօք ամք
քառասուն. ուստի սկսան ծիծաղել ամե_
նեքեան իբրև իմացան զագահութիւնն:

Իմաստ առակիս:

Ո՛չ այս առակ արժան է ՚ի գործ ածել
ընդդէմ՝ ագահաց, որք նմ՝ պատճառա_
նօք ջանան պահել զդրամս իւրեանց:

Ի վ՛ր Ներկարարի ուրումն, և Ծերոյ:

Ներկարարդ ոմն տեսեալ զծերն գալա_
րեալ և տկարացեալ, եհարց ցնա, թէ
կամիցի՞ վաճառել զաղեղն մի. ասէ ծերն.
Մի՛ վաճառեր զդրամոդ ընդունայն. զի
յորժամ՝ ծերասցիս. տասցիս և դու
զայս աղեղն որպէս ես:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ ծերութիւն ոչ է
արհամարհելի:

Ի վ՛ր Արծուոյ, և Կաչաղակի:

Կաչաղակն աղաչէր զարծուին զի ըն_
կալցի զինքն ՚ի մերձաւոր և յընտանի
իւր. որում արժանի էր վ՟ս գեղեց_

կութիւն մարմնոյ իւրոյ. և վ՛ն քաղցութիւն բարբառոյն : Նա պատասխանի արծուին. ես կամակար առնէի զայս, այլ երկնչիմ, թէ մի՛ յայտնեսցես ամենեցուն զորինչ առնեմ ես :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ՝ թէ պարտիմք փախչել ՚ի շաղակրատից որք ոչ կարեն պահել ինչ ՚ի ծածուկ, երբեք համապաղ կարկաչեն :

## Ի Վ՛Է Տատրակի, և Ծիծառան :

Տատրակն պանծայր վ՛ն առնելոյ բարեկամութիւն ընդ ծիծառան : Մայրն ասէ ցնա. յիմար ես դու որդեակ որ արարեր զբարեկամութիւն ՚ը նմա, որ յայլում կողմանս բնակի. զի նա բնակի ՚ի ջերմ տեղիս, և դու ՚ի ցուրտ վայրս :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ ոչ պարտիմք բարեկամ լինել նց. որք օտար են ՚ի մէնջ սովորութեամբք :

## Ի Վ՛Է Շինականի սորոմն, և Սկան :

Տունն շինականին ուլունս բովանդակ այրեաց, և կացեալ նր ՚ի տեսանել

զՀրդեՀան, մուկն մի փախչէր արտաքս ՚ի տանէն ։ Իսկոյն եառ գիւղականն զգաւազան մի, և նովաւ եարկ զմուկնն ՚ի Հուրն աւելով· որովՀետև կացեր ՚ի տան ՚ի ժամանակի երջանկութեան, կա՛ց այժմ՝ ևս ՚ի ժամանակի թշուառութեան ։

Իմաստ առակիս,

Առակս նշանակէ, թէ ՚ի ժամանակի յաջողութեան ունիմք զբազումս, որք բարեկամ՝ լինին մեզ · որ երբև տեսանեն, թէ բաղդն դառնայ ՚ի մէնջ, նոքին ևս ո՛չ մնան ընկերել մեզ ։ Բայց երբեմն դէպ լինի· զի ակամայ ինքեանք ևս մնան շաղեալք ՚ի նմին ձախորդութեան ։

Ի ԿԷ Յօդուածոյ ։

Թռչունքն գժգմնեցան, զի ՚ի Հարսանիսն արծուոյ առաւել քան զնոսին պատուեցաւ յոպոպն վասն ունելոյ ՚ի գլուխ իւր զպսակ, և զգունագոյն փետուրս· զի զխարդ և իցէ ընդ աղբյածի, և ՚ի գարշելիս թարթափի ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ երբեմն առաւել նախամեծար Համարին չարագործքն քան զառաքինիս ։

## Ի Վ՛Ր Խոզի, և Ձիոյ ։

Խոզն տեսեալ զՁին զի սպառազինեալ երթայր 'ի պատերազմ, ասէ ցնա ։ Ո՛վ յիմար ո՞ւր երթաս, գուցէ սպանցիս. ասէ Ձին ջանա՛ դու պարարիլ 'ի տղմ. և 'ի գարշելիս. զի հուսկ յետոյ սպանցիս դանակաւ առանց ինչ պարծանաց։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ լաւագոյն է մեռանել փութով և փառաւորապէս, քան ապրել յերկար ամօթով, և նախատանօք ։

## Ի Վ՛Ր Շինականի ուրումն որ կամէր լինել զինուոր ։

Շինական ումն ձանձրացեալ 'ի ծանր աշխատանաց զոր ունէր 'ի վաստակելն յանդի, և տեսեալ զոմանս 'ի զինուորաց զի փարթամացեալ էին 'ի պատերազմի, կամեցաւ լինել զինուոր ։ Եւ վաճառեալ զեզինս իւր, և զկահս, գնեաց զձի, և զզէնս. և եղև զինուոր ։ Հուսկ ապա մնաց կողոպտեալ, և մերկ։

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ իւրաքանչիւրոք պարտի լինել շատացեալ արուեստիւ իւրով. զի յամենեսին գտանին տաժանմունք, և անհանգստութիւնք:

## ՚Ի վերայ Թռչնոյ:

Թռչունքն ժողովեն ՚ի միասին կամեին ընտրել զայլ թագաւոր, քանզի արծուին ոչ կարէր կառավարել զնոսա: Աղջերուկն ցրեաց զխորհուրդս նոցա ասելով. թէ առաւել դիւրաւ լնանի մի պարկն, քան երեքն կամ չորսն:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ քանի՛ բազում տեարս ունիցիմք ՚ի վ՛ր մեր, այնչափ առաւել հարկ է ունել զխոհեմութ՛ի:

## ՚Ի վ՛է Իշոյ՝ որ ոչ փոխանէր պշտխնման աղխոտանոյ իւրոյ:

Էշն ՚ի ձմեռան տառապէր ՚ի ցրտոյ. և զայլ ինչ ոչ ուտէր բայց եթէ զյարդ. նմին իրի ցանկայր յոյժ գարնան, առ ՚ի չտառապիլ այնչափ ՚ի ցրտոյ. և առ ՚ի ուտել

ուտել զխոտ դալար : Եկն գարունն , և պարտ էր տանել զկաւ ՚ի փուռն առ ՚ի շինել զաղիւս . և ասէ . ո՜հ տէր , եթէ լինէր ամառն՝ փոքր մի հանգչէի : Ա-կեալ ամարան՝ պարտաւորեցաւ տանել զցորեան , զյարդ , և զխնձորս . և ասէ . յաւագոյն է վ՛ս իմ ձմեռն , զի նորն իմ ոչ կարէ աշխատել վ՛ս ցրտութե . և փոքր մի հանգչիմ ես :

Իմաստ առակիս :

Առակս յանդիմանէ առնէ , թէ որ էջէ կեանքն աղքատաց , որոց յամ ժամանակի պարտ է տարժանել :

## Ի վ՛ր Մկանց , և կապկոյ :

Տեսեալ մկանցն զի կատուն հանգուցեալ կայր . ասացին . հաւատեաւ այս կենդանի ոչ պարտի լինել անագորոյն . որպ ասեն . զի տեսիլ նր ոչ ցուցանէ զայն : Մինն ՚ի նոցանէ ասէ . ես կամիմ խօսել ընդ նմա . և տեսանել թէ կարող եմ առնել ընդ նմա բարեկամութի . և եկեալ ՚ի բունոյ իւրմէ՝ գնաց խօսել ընդ նմա : Իբրև ետես զնա կատուն՝ յարձակեցաւ ՚ի վ՛ր նորա . և եկեր զնա . զայս իբրև տեսին այլ

մկունքն, ո՛չ կամեցան ելանել արտաքս։

Իմաստ առակիս։

Առակս ցուցանէ, թէ մարդն ո՛չ պար_տի դատիլ ՚ի երեսաց, այլ ՚ի գործոց. զի երբեմն ընդ մորթով ոչխարի թա_գուցեալ կայ գայլն։

Ի ՎՐ ԻՇՈՅ ՄԻՈՅ ՈՐ ՈՒՆԷՐ ՂԱՊԱՆՋԻՒՐՀ ՈՒԷՐ։

Էշ մի ծառայեալ էր նմին իւրում բա_զում ժամանակս. և ո՛չ երբէք յանցու_ցեալ. ՚ի տանելն զծանր բեռն ինչ ընդ քարուտ ինչ ճանապարհ, անկաւ առ ծանրութե բեռին, և տէրն իսկոյն յա_րեաւ ՚ի վ՚ր ն՚ր ցպով, և գանեաց զնա ուժգին. իսկ էշն ասէր ցանձն իւր. ո՛վ տառապելոյս, որ ունիմ զայսպիսի տէր ապաշնորհ, և այսչափ ամս ծառայեցի նմա. յորս և ո՛չ գոյզն ինչ պակասութիւն ա_րարի. և այժմ վ՚ս չնչին վրիպանացս որ չէ յինէն պատճառեալ, անողորմ հարկանէ զիս։

Իմաստ առակիս։

Առակս հայի առ ապերախտ տեարս. որք բազում ամս պահեն զծառայեալ ծառայսն. և սակս դուզնաքեայ ինչ վրի_պանաց նոյնհետայն արտաքսեն ՚ի տանէ։

Ի

## Ի վէ Գայլոյ, և Ոզնւոյ:

Գայլն քաղցեալ գոլով՝ կամեցաւ ուտել զոզնին. այլ ոչ իշխէր վ՟ փշոցն: Սկսաւ յորդորել զնա թեթեւացուցանել յիւրմէ զայն բեռն. և նա պատասխանեաց. ոչ կամիմ առնել զայդ. զի միշտ է ժամանակ մարտնչելոյ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ այր իմաստուն պարտի կալ միշտ յորդորեալ ընդդէմ թշնամեաց:

## Ի վէ Մկան, և Ճնոյ:

Մուկն ետես զճինն կալեալ յորոգայթ ինչ. և շարժեալ ՚ի գութ, կրծեաց զպարանսն թակարդին. և արձակեաց զնա թռանել: Իսկ նա զերծեալ անտի, քաղցեալ գոլով, մոռացաւ զըն‐կալեալ բարերարութիւն, և առժամայն կալեալ զմուկն՝ եկեր զնա:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ եթէ երբէք առնիցես բարիս թշնամւոյ քում, միշտ հատուսցէ քեզ զապերախտութիւն:

## Ի վ̃ր Կրիայի, և Արամազդայ։

Ի սկզբանէ աշխարհի յորժամ Արամազդ ետ 'ամ կենդանեաց զձիրսն զորս խնդրեալ էին, կրիայն ասաց. կամիմ զի շնորհեսցես ինձ տանել զտուն իմ ընդ իս։ Ասէ ցնա Արամազդ. ընդէ՞ր կամիս դու տանել զայս բեռն ընդ քեզ. և նա ասէ. առաւել ընտրեմ ես տանել զայս բեռն, քան թէ ունելով զչար ինչ մօտաւոր, ոչ եղէց կարօղ հեռանալ յայնմանէ։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ 'ի մօտաւորաց ինչ չարեաց 'ամ ձգամբք պարտ է փախչել։

## Ի վ̃ր Ողնոյ, և Օձի։

Ողնին աղաչեաց ցօձն ընդունել զինքն յորջ իւր. և նա հաւանեցաւ։ Իսկ 'ի կալնոյ 'ի միասին, կամելով օձն դառնալ յայլ կողմն որջոյն, ոչ կարէր վ̃ս փշոց ողնւոյն որք խայթէին զնա. և ասէ ցնա, արա սէր՝ և կա՛ց 'ի մի կողմն. եւ պատասխանի ողնին և ասէ. որ ոչ կարէ կալ, երթիցէ. զի ես ոչ կամիմ խախտել աստի։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ չէ պարտ քեզ առնել ընկեր զնոսա, զոր ոչ կարես ար- տաքսել ՚ի տանէ, և որք զօրաւոր ես են քան զքեզ ։

## Ի վ՛յ Նապաստակի, և Աղուեսու ։

Նապաստակն արհամարհէր զաղուէսն, ասելով, թէ ես լաւագոյն եմ քան զքեզ. և կարող եմ եւ արագութեամբ իմով փախ- չել յո՛ և իցէ քաջ որսորդէ ։ Նա աղ- ուէսն ասէ. և ես ճարտարութեամբ իմով բազում անգամ փախչիմ յորսորդաց և ՚ի շանց ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ նենգութիւն գե- րազանցէ զարագութիւն, և զկորովութիւն մարմնոյ ։

## Ի վ՛յ Շինականի ուրուք, և Բանաստեղծի ։

Շինական ոմն գնաց առ բանաստեղծ ոմն որ գործէր զանդս իւր. և գտեալ զնա ընդ գրոց, ասէ. զի՞նչ մարթի լինել՝ զի կաս միշտ միայն. որում ետ պատասխանի բանաստեղծն, և ասէ. ես այժմ

այժմ եմ միայն՝ յորժամ դու եկիր աստ ։

Խրատ առակիս ։

Առակս նշանակէ, թէ գիտնական որ է միայնակ յորժամ կայ ՚ի մէջ տգիտաց ։

## ՚Ի վր Հօր միոյ, և Որդւոյ նորա ։

Հայրն յորդորէր զորդին իւր մտադրել ուսմանց. և ՚ի բաց թողուլ զմոլութիւնս։ Ջանալով խրատմունս առնել զնա զքնաղութէ առաքինութեց, և զյոռութէ ախտից ։ Պատասխանի ետ որդին, և ասէ. Լուռ լեր հայր աղաչեմ զքեզ. զի լսելով ՚ի բազում քարոզչաց յորդորել զիս առ առաքինութիւս, ոչ կամեցայ հաւատալ. ես առաւել ոչ հաւատացից քեզ, որ չես քարոզիչ ։

Խրատ առակիս ։

Առակս նշանակէ, թէ բնութիւ չար մարդիկ ուրուրեմն կարեն ՚ի բաց կալ ՚ի մոլութեց յորդորմամբ իւիք ։

## ՚Ի վր Հովուի ուրումն, և Շան ։

Հովիւ ոմն էր զխաշինս իւր ՚ի պահպանութի շան միոյ, զոր պահէր ՚ի տան. և

և առ 'ի բարեաց կատարել զայն, կարի իմն առատութբ սնուցանէր զնա, տալով նմա ուտել լիով . և նա յաւուր աւուր սպանանէր զմին յոչխարաց, և ուտէր : Իմացեալ զայն տն կալաւ զնա. և երբև կամէր սպանանել . ասէ շունն. տր իմ մի՛ սպանաներ զիս . զի ես ընտանի եմ՛ քեզ , ասէ տրն . Ես առաւել կամիմ՛ սպանանել զքեզ . զի դու գոլով ինձ ընտանի . և ես հաւատալով քեզ , դաւաճանեցեր զիս . և յայնսակս արժանի ես մեծի պատուհասի :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ , թէ նոքա առաւել ևս պարտին պատժիլ՝ որք վնասեն ընդ պատրուակաւ բարեկամութե՝ քան ըզնոսա, որք յայտնապէս երևին թշնամի :

## Ի վերայ Խոյոյ, և Ցլոյ :

Խոյ մի գոլով 'ի մէջ ոչխարաց բարեյօգ մարմնով , 'ի սովորութե իւրում կռուէր ընդ այլ խոյոց , և էր միշտ յաղթական . և այնչափ ամբարտաւանեցաւ , մինչև կամեցաւ մաքառել ընդ ցլու ևս . և յանդիման եկեալ ճակատ առ ճակատ , ցուլն խեթկեաց զնա ուժ-

գին

զինն և եարկ յերկիր․ և ջաղջախեաց զծնկատն և զեղջիւրսն, այնպէս, զի մեռաւ․ որ հառաչելով ասէր ։ Ո՜վ թշուառացելոյս․ ես էի այնչափ ամբարտաւան, մինչև կամեցայ ձնկատել ընդ ցլու․ և բնութին այնպէս կորովին արար զնա, զի ոչ գտանի հաւասար նմա ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ոչ պարտիմք մարտնչել ընդ նոսա․ որք հզօրագոյն են քան զմեզ ։

## ՚Ի վէպ Արծուոյ, և Նապաստակաց ։

Արծուէին կալով ՚ի բոյն իւր, եանես զձագս նապաստակաց ՚ի հեռաստանէ, զի արածէին․ իսկոյն թռուցեալ կալաւ զնս և տարաւ առ ձագս իւր ։ Մայրն նապաստակաց աղաչեաց, զի յետս տացէ նմա զորդիս իւր․ և նա ոչ կամեցաւ տալ․ այլ մանաւանդ սպան զնս առաջի իւր ։ Զայս տեսեալ նա զայրացաւ, և չգտեալ զայլ ինչ որով վրէժս խնդրեսցէ, զի չէր հաւասար արծւոյ, պեղեաց զամ հողն ծառոյն, յորում էր բոյնն արծուոյն, մինչև ՚ի շնչել դոյզն ինչ հողմոյ, անկաւ ծառն, և ձագքն մեռան ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ոչոք պարտին այնպէս ապաւինել 'ի մեծութիւն իւր, մինչեւ զառնացուցանել զաղքատս, եւ հաստատել 'ի միտս, թէ չեն նոքա բաւական լինելոյ վրէժխնդիր ։

## Ի վ՜ Ոչխարի, եւ Հովուի ։

Ոչխարն տրտնջէր զհովուէն՝ ասելով, թէ չարաչար վարեալ լինէր 'ի նմանէ. զի ոչ երբէք յագէր առնլով զկաթն, եւ զասրն ։ Սա ցնա հովիւն. ոչ միայն ունիմ ես զիրաւունս բառնալոյ 'ի քէն զասրդ քո եւ զկաթն, այլ եւ ածել զորդիս քո 'ի սպանդ, եւ զենուլ զնա. եւ տալ զքեզ կերակուր գայլոց եւ շանց ։ Յայնժամ ոչխարն լռեաց կասկածելով զչարագունէն ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ պարտիմք համբերել, յորժամ 'ած բռնանայ 'ի մեզ զաւարս եւ զորդիս. զի ունի իրաւունս առնելոյ եւ եւս մեծամեծ իրս քան զայնս ։

Ի

### Ի վր Մեծատանն որ փորձեաց զԲարեկամս իւր:

Այր ոմն մեծատուն և առատ՝ յամ աւուր ածնէր կոչունս բարեկամաց իւրոց, որք ողջունէին զնա, և պատուէին: Կամեցեալ փորձել զնս, թէ առ 'ի պէտս իւր կարող իցէ վարել նոքօք. կեղծեաց թէ ունէր ինչ հակառակութիւն ընդ ոմանց թշնամեաց իւրոց, զորս կամէր սպանանել. և յայնժամ աղաչէր զնս օգնել ինքեան: Նոքա ոչ կամեցան զէն առնուլ բաց յերկուց: Զայս տեսեալ նր, զայլս ամենեսին արձակեաց. և զերկոսին զնս և եթ ընկալաւ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ տարաբաղդութիւն փորձէ զբարեկամս:

### Ի վր Աղուեսու, և Շան:

Աղուէսն լինելով հալածեալ 'ի շանէ, և տեսեալ զի ոչ կարէ փախչել. խօսեցաւ ընդ նմա և ասէ, շո՛ւն դու. ընդէր պնդիս զհետ իմ. մարմին իմ չէ բարւոք առ 'ի ուտել. ընթա՛ զհետ նապաստակին այնմիկ որոյ մարմինն լաւագոյն

գոյն է քան զիմն ։ Շունն տեսեալ զնապաստակն, պնդեցաւ ընդհետ նր. և զի երագ վազս առնոյր նապաստակն, ոչ կարաց հասանել նմա ։ Յետ ոչ բազում ժամուց եգիտ նապաստակն զաղուէսն, և ծաղրաբանեաց զնա, թէ ընդէր գովեալ էր զնա առաջի շան. իբր զի ինքն լուեալ էր զնմ ինչ ։ Ասէ աղուէսն. զինչ ասէիր դու, եթէ ես արհամարհէի զքեզ. որ տրտնջես վ՟ ասելոյ իմոյ բարի զքէն ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ երբեմն լինի գովել զոք, ոչ առ ՚ի պատուել, այլ առ ՚ի կործանել ՚ի չար ինչ ։ Եւ այսպիսի սուտ գովիչքն գտանեն միշտ զպատճառս դաւաճանութեան իւրեանց ։

## ՚Ի վր Աղուեսու, և Նապաստակի ։

Նապաստակն և աղուէսն աղաչէին զԴիոս, զի հաճեսցի առնել զաղուէսն արագ ՚ի վազս ոպ զնապաստակն ։ Պատասխանի ետ Դիոս, թէ ՚ի սկզբանէ աշխարհի տուեալ է նմ կենդանեաց զձիրս ինչ. որով պարտին ամենեքեան շատանալ ։

Իմաստ առակիս։

Իւրաքանչիւրոք պարտի շատանալ վի-ճակաւ իւրով։

## Ի վր Երիվարաց որք ընթանային յասպա-րիզին։

Բանին մի երիվարք ընթանային յաս-պարիզի զարդարեալք յոյժ. 'ի մէջ սոցա մինն էր ագապուն, և ոչ բա-րւոք զարդարեալ. և յամենեցուն էր անարգեալ։ 'ի տալ նշանին, ագապունն այն ընթացաւ առաւել քան զամենեսին, և յաղթեաց 'ի կրկէսին։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ ոչ պարտիմք դատել զմարդիկ 'ի հանդերձից այլ 'ի առաքինութ՛եց։

## Ի վր Շինականի ուրումն, և Գրաստին։

Շինական ոմն ունելով գրաստ ինչ, երթայր առ խնամակալն. որ երբեմն տե-սանէր զնա, կեղծէր ոչ տեսանել, և ունել զայլ ինչ առնել. և ոչ իսկ ունկն մատուցանէր այնմ զոր ասէր. այնպէս, զի շինականն կայր դժկամա-կեալ.

կեալ : Յաւուր միում էառ զգառն մի փափուկ և պարարտ, և ՚ի առաւօտն գնաց ՚ի տուն խնամակալին. իբրև մերձ եղև ՚ի տունն, ետ բառաչել գառին : Լուեալ զայն ծառային, եած զնա առ նրն, և ետ խօսել ընդ նմա : Յայնժամ շինականն դարձաւ առ գառնն, և ասէ. ո՜վ գառն. ես շնորհս մեծ ունիմ զքէն. զի արարեր զիս արժանի այսմ հաճոյական ունկնդրութե :

Խրատ առակիս :

Առակս ցուցանէ, թէ ո՛չ ոք է այնպէս խստասիրտ, և ապառում, որ ո՛չ հաշտեսցի պարգևօք :

## ՚Ի ՎԷ ԾԵՐՈՅ ՈՐՈՒՄՆ, և ՊԱՏԱՆՒՈՅ :

Ծեր ոմն ունէր զտունկ ինչ պատուական խնձորոյ ՚ի պարտիզի իւրում : ՚Ի միում աւուր ետես զպատանի ոմն ՚ի վր ծառոյ զի քաղէր զխնձորս իւր. և սկսաւ ամօքական բանիւք աղաչել, զի թողցէ առնել զայն, և իջցէ ՚ի ծառոյ : Պատանին ծաղր առնէր զբանիւք նր, և շարունակէր զքաղելն : Տեսեալ ծերոյն զի ոչինչ օգտէին բանք իւր, ասէր ցանձն իւր. ես հանապազ գիտէի.

թէ զօրութիւն կայանայ 'ի բանսն 'ի խօսսն, և 'ի քարինսն. արդ եթէ բանքն ոչ օգտեն, կամիմ տեսանել թէ 'ի խօսսն իցէ՞ զօրութի 'ի բաց վարելոյ. յայնսակս ժողովեաց զխոտս, սկսաւ արկանել 'ի վ'ր ն'ր. պատանին որ էր 'ի վ'ր ծառոյն, տեսեալ զայս՝ թաղանայր 'ի ծառոյն, համարելով զնա զառածեալ յոյժ: Իբրև ետես ծերն, թէ ոչ բանքն և ոչ խոտքն զօրեցին ինչ, կամեցաւ փորձել թէ քարինքն ունիցին զայնպիսի զօրութի. և հաւաքեալ զբազում քարինս, սկսաւ քարկոծել. զորս տեսեալ պատանւոյն և զգացեալ, էջ վաղվաղակի 'ի ծառոյ. և փախեաւ արտաքս 'ի պարտիզէն. և այսպ զորինչ տկարացան առնել բանքն և խոտքն, արարին քարընկեցքն, թէպէտ և ընկեցեալք 'ի տկար ձեռանէ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ. թէ այր իմաստուն պարտի փորձել զամ ճանապարհս մինչև իցէ վարեալ 'ի չէն:

## Ի Վ'ր Սոխակի, և Բազէի:

Սոխակ մի կալեալ եղև 'ի սովեալ բազէէ, որ կամէր ուտել զնա. աղաչէր

չէր զնա սոխակն շնորհել նմա զկեանս, խոստանալով նմ՛ զմեծ իմն պարգեւ: Ասէ բազէն. զինչ ինչ համոյական կարես առնել ինձ դու. ասէ սոխակն, երգեցից յամ՛ առաւօտու այնպ քաղցրաբարբառ, զի դու մեծապէս զուարճասցիս: Ասէ բազէն. ես ոչինչ հոգամ՛ զերգոց, զի առանց նր կարեմ կեալ. այլ ոչ առանց կերակրոց:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ պարտ է նախամեծար առնել զպիտանին իրս՝ զուարճալեաց:

## Ի վր Մեղուաց, եւ Լուոյ:

Ի ժամանակի ձմերան գնաց լուն առ մեղուս, եւ խնդրեաց ՚ի նոցանէ զբնակարան եւ զուտեստ, խոստանալով ուսուցանել ձագուց նց զերաժշտականութի: Պատասխանի ետուն մեղուքն, եւ ասեն. ոչ կամիմք՝ թէ ձագք մեր ուսանիցին զայն արուեստ, այլ զայն որ կարէ տալ ուտել, եւ յարուցանել յաղքատութէ վաղագոյն, քան զերաժշտութին. որ ոչինչ իմիք է պիտանացու:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ մեք պարտիմք տալ ուսուցանել որդւոց մերոց զարուեստ իմն, յորմէ կարող իցեն քաղել զպտուղ:

Ի վէր Առիւծու, Իշոյ, և Նապաստակի:

Առիւծն Թագաւոր չորքոտանի կենդանեաց, կամելով պատերազմել ընդ Թռչնոց, եդեալ էր 'ի կարգի զամ կենդանիս ընդդէմ նոցա: Իշն և Նապաստակն գոլով 'ի կարգի առ 'ի ձակառխել, հարցին եղև թէ զինչ կամիցի առնել զայն անաստունս որք անդէպ են առ 'ի պատերազմ. Եւ պատասխանի, թէ էշն զանչմամբ իւրով փողահարեսցի զինուորաց առ 'ի մարտնչել. և նապաստակն վասն զի է արագ յընթացս, առաքէ զգործ սուրհանդակի:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ ոչըք է այնչափ չնչին, որ չիցէ յարմար առ իմն:

Ի վէր Բազէից որք մարտնչէին ընդ միմեանս:

Բազէքն գոլով Թշնամի միմեանց՝ մարտնչէին ընդ միմեանս, այնպէս զի

այլ

այլ թռչունք ոչ ևս նեղէին 'ի նոցանէ : Տեսեալ միամիտ աղաւնեացն զթշնամութիւն նց անկան 'ի մէջ, և հաշտեցուցին զնս : Իսկ նոքա իսկոյն իբրև հաշտեցան՝ սկսան հալածել զայլ թռչունս, մանաւանդ զաղաւնիս. որք յետ այնորիկ ցաւեցան ընդ խաղաղութիւն նց ասելով, թէ լաւ ևս էր եթէ լեալ էր մարտ 'ի մէջ նց :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ յորժամ յոյժ քաղաքացիք ունին մարտ ընդ միմեանս, թողուն զերալիս կալ յանդորրու :

## ԻԷ Ծերոյ առական, և Մահուան :

Մահն եկեալ 'ի սպանանել զծեր ոմն, աղաչեաց զնա ծերն մնալ փոքր մի մինչև արասցէ զկտակ : Պատասխանի ետ մահն, թէ ոչ կամիմ շնորհել քեզ ժամանակ. զի բազում անգամ ազդեալ եղէր պատրաստել, և ոչ արարեր : Իսկ նա ասէ. Երբ արդեօք եղէ ազդեալ. ասէ մահն, յորժամ ես մեռուցանէի զընկերս քո, և զբազում մանկունս, և զերիտասարդս. և յորժամ դու զգայիր յանձին քում պակասիլ զօրութեանդ, յայնժամ ես ազդ-

առնէի քեզ. և յայնժամ պարտ էիր խորհել զմահն և 'ի կարգի դնել զիրս քո :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ պարտիմք միշտ կալ պատրաստ առ 'ի բարւոք մեռանել. զի ոչ գիտեմք, ոչ զօրն և ոչ զժամն մահուան մերոյ :

Ի վր Ագահի սրուածն, և Ընչից նր :

Ագահ ոմն գոլով մերձ 'ի մահ. ետ ածել առաջի իւր զամ զդրամս իւր. և սկսաւ խօսել ընդ նոսա և ասէ. ով դրամք իմ, զորս ես այնչափ աշխատանօք ստացայ, և դուք ոչ երբէք ետուք ինձ զհաճոյթիւն ինչ, այլ զվիշտս, և զտխրութիւ: Պատասխանի ետուն դրամքն. մեք հաճեցուցանեմք զժառանգս քո. որք զամն ունելն վատնել 'ի զեղխութիւս, յորս, և 'ի ձիընթացէկս. և հոգի քո գնասցէ 'ի յարկս դիւաց :

Իմաստ առակիս :

Առակս ազդ առնէ, թէ ոչ պարտիմք գանձել յերկրի աստ ուր չէն հայրենիք մեր. այլ յերկինս ուր ունիմք վայելել 'ի յաւիտեան :

## Ի վերայ Թութակի։

Թութակն եկեալ յարևելից յարևմտաս, ուր այս թռչունն ոչ կարէ ծնանել, հարցեալ յումեմնէ, թէ ընդէ՞ր առ էջէ ՚ի մեծի վարկման քան յերկրի իւրում. և թէ ընդէ՞ր ունիցի զվանդակ փղոսկրեայ հանդերձ արծաթի զարդուք. և լինիցի սնուցեալ փափուկ կերակրովք, և մեծաւ խնամով պահպանեալ, ետ պատասխանի, մի զարմանար ընդ այս, զի յերկրի իւրում ոչ ումեք տուեալ լինի պատիւ որ նմանն է։

Իմաստ առակիս։

Առակս յայտ առնէ. թէ ոչ ոք իմաստուն է ընդունելի յերկրի իւրում։

## Ի վ՛ր Արծուոյ, և Սիրամարգի։

Արծուէին կալով ՚ի մէջ այլոց թռչնոց, ասէր. ես ո՛չ հաւատամ թէ ՚ի ձեզ իցէ ոք առաւել գեղեցիկ քան զիս. զոր ես ճանաչեմ ՚ի բազում նշանաց. և բովանդակ զանձն գովէր. և ամենայն թռչունքն հաստատէին թէ ճշմարիտ է։ Սիրամարգն լռելեայն ասաց. կտուցդ և

և ձիրանիքդ առնեն զքեզ գեղեցիկ. և ե-
թէ ոչ լինէին սոքա, գտանէր ոք ատ,
որ ցուցանէր քեզ, թէ ոչ ես դու ա-
ռաւել գեղեցիկ, այլ յաւէտ ագեղ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ երբ հզօրաց ոչ գովլին ըստ ճշմարտութեան, այլ վասն երկիւղի:

## Ի վր Շան. և Խոզ:

Շունն ընկերէր էշոյ որ տանէր զպարկ ինչ՝ հացի 'ի տեղի ինչ ուր էին բազում աղքատք. 'ի ճանապարհին քաղցեան երկոքեան ևս. էշն գնաց ճարակել զխոտ. և շունն խնդրեաց յիշոյն զի տացէ նմա սակաւ ինչ հաց. էշն ծաղր առնէր զնա, և ասէր՝ զի կերիցէ խոտ ընդ նմա: Յայսմ՝ վայրի եկն գայլ մի, և էշն ասէ. ով շուն ընկեր իմ՝, օգնեա ինձ աղաչեմ՝ զքեզ, զի գայլն մի՛ ապանցէ զիս. եթէ դու դարձցիս ընդդէմ՝ նմա, գիտեմ՝ հաւաստեաւ զի փախիցէ նա: Եւ պատասխանի շունն. այժմ՝ դու կոչես զիս քեզ յօգնութիւն. որ ոչ բնաւ կամեցար տալ ինձ սակաւ ինչ հաց. երթ 'ի կորուստ քո.

քո, զի ոչ ես կամիմ զայսպիսի ընկեր. և եթող գայլոյն ուտել զնա:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ մեզ, թէ ոչ պարտիմք արհամարհել զոք. զի ոչ ոք է այնչափ անպիտան և ընդունայն. որ յերբեք հարկաւորութեան մերում ոչ կարասցէ օգնել մեզ:

## Ի ՃԼԲ Աղքատի [illegible] որ եգիտ պղինձս:

Աղքատ ոմն ունէր տուն մի՝ որ մերձ էր 'ի կործանումն. որոյ վասն ցաւէր յոյժ. և հայելով 'ի ճեղքուած իւր տան, ետես զանօթ ինչ պղնձի. և հանեալ յորմոյ, եգիտ զայն լի դրամովք. այնպէս՝ զի ցաւն փոխեցաւ 'ի խնդութիւն:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ երբեմն այն զոր կարծեմք թէ է չար. բերէ զմեծամեծ օգուտս. և յայնմանէ ոչ պարտիմք մեծացաւել 'ի վերայ այնորիկ որ հանդիպի, որչափ և ահարկու երևիցի:

Ի

## Ի վերայ Առաքինութեան, և Դրամոյ։

Առաքինութիւն ասաց ցդրամն, թէ ընդէ՞ր գնան արագագոյնս ՚ի ձեռս չարաց, քան բարեաց։ Նորա ետուն պատասխանի. թէ աշակերտքն մեր վաշխս առնուն. սուտ երդնուն, և այլ տարադէպ, և գարշ գործս գործեն. և այսուիկ տանան զմեզ, իսկ աշակերտք քո զհակառակն գործեն, որով բռնադատիմք փախչել յառաքինեաց, և գնալ առ վատթարս։ Ասէ առաքինութիւնն, որովհետև այսպէս է, առաւել կամիմ, թէ աշակերտք իմ լինիցին աղքատք քան փարթամք։

Խրատ առակիս։

Առակս կամի նշանակել, թէ հարստութիւնքն ըստ մեծի մասին ստացեալ լինին կորստեամբ հոգւոյ, և տառապանօք մարմնոյ։

## Ի վերայ Իշոյ, և Խոզի։

Էշն նախանձէր ընդ խոզն. զի ինքն յամ աւուր տանէր զբեռն իւր. իսկ խոզն ամենևին ոչինչ գործէր. այլ

գորն

զօրն ողջոյն ուտէր առ 'ի պարարտա-
նալ ։ Դէպ եղև զի տ՛րն կամեցաւ սպա-
նանել զխոզն ․ և էշն պշուցեալ հայէր
յորժամ տանէին 'ի սպանդ ․ և յորժամ
ետես սպանեալ և յօշոտեալ , ասէ ցանձն
իւր ․ տես թէ զինչ վախճան ունէին
գգուանքն արարեալք 'ի նմէ , ապա լաւ
եւս է լինել էշ քան խոզ ․ և մնաց գոհ
զվիճակէ իւրմէ ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ ․ թէ ոչ պարտիմք
նախանձիլ ն՛ց , որք երևին մեզ երջա-
նիկք ․ զի երբեմն երջանկութիւն է լի
թշուառութեամբ ։

## 'Ի ՂԷ Աքաղաղի որ կալեալ էր յԱղ-ուէսու ։

Աքաղաղ մի կալեալ յաղուէսու , մե-
ծաւ աշխատութեամբ զերծաւ 'ի ձեռաց
ն՛ր ։ Ապա ետես սա զմօրթ մի աղուէ-
սու , և առ երկիւղի սկսաւ փախչել ․
մ՛ն այսօրինակ այլ հաւասարքն իւր ծի-
ծաղեցան ․ և աքաղաղն ասէ ․ եթէ դուք
ըմբռնեալ էիք 'ի ձիրան աղուէսու որպ
ես , ոչ միայն երկնչէիք 'ի մորթոյ ն՛ր ,
այլ և 'ի հետոց ոտից ն՛ր ։

Խրատ առակին ։

Ասի հասարակօրէն, թէ որ միանգամ խայթեցաւ յօձէ, երկնչի եւ 'ի մո_ղէսէ ։

Ի կէ Ազրակէ, Ն Խըղյ ։

Վարազն կամեցաւ մարտնչիլ ընդ իշոյ, ապաստանեալ 'ի ժանիս իւր, որք էին կարի իմն սրինդք, և երկայնք քան զգե_շոյն ։ Էշն մերձեցեալ առ նա աքացի եհար ընդ ճակատն նր․ այնպէս զի վա_րազն կիսամահ անկաւ յերկիր, և ասէ ինքն ցինքն․ ես ոչ կարծէի թէ դու ունէիր վնասել ինձ ոտիւքդ ։

Խրատ առակին ։

Առակս ցուցանէ, թէ մարդն պարտի մտածել հանապազ թէ ուստի կարէ վնասել 'ի թշնամւոյն ։

Ի կէ Քեերթողի ուրանն, Ն Խըղյ ։

Քերթող ոմն պանծայր յանձն իւր, ասելով, թէ այնպէս ճարտար է, և այնչափ ընտիր կերպս ունի ուսուցանելոյ, մինչզի ոչ միայն կարէ ուսուցանել մարդ_կան զքերթողութի, այլ և իշոյ ։ Լու_

եալ

եալ զայս իշխան անձ, կոչեաց զնա և ասէ. եթէ կարող իցես ուսուցանել իշոյ գրերթողութի, տաց քեզ ժամանակ տասն ամաց: Բերթօղն խոստացաւ թէ յայնչափ ամս կամէր առնել զայն. ապաթէ ոչ. կամէր կորուսանել զայն նա զոր ստացեալ էր յամ կեանս իւր. վ՟ն այսր դաշինն զոր արարին ՚ի մէջ իւրեանց, բազումք ստգտանէին զնա, վ՟ն պարտաւորելոյ զանձն առ այս որ էր անկարելի. և նա ասէ ցն՟ս: Մ՛ի յիմարք. ՚ի միջոցի տասն ամաց կա՛մ իշխանն, կամ էշն մեռանի և կամ ես:

Իմաստ առակիս:

Նոքա որք են յաշխատանս և ՚ի վտանգի, յապաղումն օգնէ:

## ՃԼԷ Առն ուրումն, և Օձն:

Օձ մի ճնշեալ ընդ ծանր վիմաւ, խնդրեաց յառնէ միոյ որ անցանէր ընդ այն, զի բարձցէ զայն յիւրմէ. որում ունէր տալ մեծ իմն պարգև: Եւ նա ՚ի վեր առեալ զվէմն, ազատեաց զնա. իսկ օձն զլացաւ տալ նմա ինչ. և մինչդեռ զայրանային ընդ միմեանս, էանց

ընդ

ընդ այն դիպուածով կապիկ մի. որ ընտրեցաւ 'ի Նոյանէ դատաւոր այսր վիճի: Նա ո՛չ պատասխանի և ասէ. ո՛չ կարեմ բարւոք դատել, մինչև ո՛չ տեսից զկեանս ով էրն. զայս իբրև արարին. կապիկն դատեցաւ, թէ ո՛չ ես է պարտ 'ի վեր առնուլ զկեանս. և այնպէս սատակեցաւ օձն:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազում անգամ ապերախտութիւն զոր առնէ ոք մ՚ն ընկալեալ բարերարութե՛ն իւրէ, արկանէ 'ի նոյն տառապանս, յորմէ ցանկայր զերծանել:

Դ ԼԷ Աքաղաղի, և Աղուէսու:

Աղուէս մի սպաննեալ զբազում հաւս գիւղականի միոյ, ուրուրեան ըմբռնեալ եղև 'ի թակարդի. և աղաչեաց զաքաղաղն զի բերցէ զդանակ մի առ 'ի հատանել զպարանն. կամ չասել ինչ ամենևին տ՛ն իւրում. և կամ լաւ ևս, հատանել զպարանն ատամամբք: Աքաղաղն խոստացաւ առնել զերկոսին և. այլ իսկոյն գնաց առ տէրն, և ասաց նմա թէ կալեալ եղև աղուէսն. ընթացաւ

իսկոյն

խոկոյն նորին մահակաւ, և սպան զնա. որ 'ի մեռանելն իւրում ասէր. ո՜վ յիմար. որ հաւատացեր զանձնդ աքաղաղի, զորոյ զայնչափ հաւան սպաներ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ ոչ երբէք պարտիմք վստահել 'ի նա, որոյ արարաք զվնաս:

## Ի վեր Հաւուս, և Ձագոյս:

Հաւն ունելով զբազում ձագս, գնայր ընդ հրապարակս յարածել որպ է սովորութիւն նց. իբրև ետես հաւն ցցինն, ձայնեաց և ծածկեաց ընդ թևովք իւրովք և այսու հնարիւք պահեաց 'ի ցնոյ: Մինչդամ ցինն 'ի թռանիլն ընդ օդս, հաւն կոչեաց զձագս իւր, առ 'ի գալ և ծածկիլ ընդ թևովք. նոքա որք հնազանդեցան, ապրեցան. իսկ նոքա որք ոչ կամեցան գալ, կալեալ եղեն 'ի ցնոյ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ նոքա որք ոչ հնազանդին ծնողաց իւրեանց, հանդիպին չարեաց:

## Ի վ̃ր Գայլոյ, և Աղուեսու:

Գայլն անկեալ էր 'ի խորխորատ ինչ, տե-
սեալ զնա աղուէսուն, ծաղր առնէր զնա
առ խորխորատաւ. և այնպէս կալով,
ինքն ևս անկաւ 'ի նոյն. և ասէ գայլն. ես
մեռանիմ հաճեալ, որովհետև նա ևս որ
ծիծաղէր զմահուամբ իմով, մեռանի ըն-
րև զիս:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ որ խնդայ ընդ
չարն այլոց, երբեմն կրէ զնոյնն:

## Ի վ̃ր Պարտիզպանի, և Մկան:

Պարտիզպանն կալաւ յայգւոջ իւրում ե-
տես զմուկն մի. և կամելով սպանանել զնա.
ասէ մուկն. մի' սպանաներ զիս, զի ես
եմ ծառայ քո, և պեղեմ զպարտէզ քո
առանց դրամոյ, և ոչինչ հող առնեմ,
արտաքս 'ի պարտիզէ քումմէ: Պա-
տասխանի ետ պարտիզպանն և ասէ.
զորինչ առնես վ̃ն շահու քո առնես,
նմին իրի կամիմ, զի դու մեռցիս ան-
պատճառ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ պարտ է նկա-

տեղ 'ի գիտաւորութ'ի անձին ուրուք, և
ոչ 'ի գործս :

Ի վՐ Աղուէսուն, որ կալեալ եղեւ 'ի շանէ:

Աղուէսն կեղծեաց թէ իցէ անկեալ 'ի մէջ դաշտի մեռեալ, որպ զի թռչունքն մերձեսցին առ նա, և ինքն կարող լիցի ունել զնոսին և ուտել: Յանց ընդ այն շունն, և տեսեալ զնա զայնօրինակ տարածեալ յերկիր, ընթացաւ ևկոյն և սպան զնա. և տառապեալն ասէ, կամելով իմ խաբել զայլս, ես ինքն խաբեցայ, և վ'ս այնորիկ մեռանիմ :

Խրատ առակիս :

Առակս նշանակէ, թէ նոքա որք զհետ լինին խաբել զայլս, ոչ պարտին այլքն ցաւիլ 'ի վ'ր նց. եթէ ինքեանք խաբեսցին :

Ի վՐ Տեառն, և Շան նր :

Այր ոմն ունէր զվանդակ մի լի հաւուք. 'ի գիշերի միում մոռացաւ փակել զդուրս վանդակին : Եկն աղուէսն, և սպան զոմն հաւսն : Յառաւօտուն տէրն զայրացեալ վ'ս վնասուն որ եղև,

 բա_

բազում հարուածս ետ շանն, զի եղև անփոյթ 'ի պահպանել, և շունն ասէ: Տէր իմ դու անպատճառ հարկանես զիս, զի եթէ դու անփոյթ եղեր 'ի պահպանել զհաւսն, յորոց ունէիր զբազում հաւս, թողլով բաց զդուռնն. զինչ կարող էի ես առնել:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ եթէ տէրն է անփոյթ 'ի պահպանել զիրս իւր, ոչ պարտի յուսալ, թէ ընտանիք իւր պահպանեսցեն:

## Ի վ՟ Աղուէսու. և Թխսամօր:

Աղուէսն եգիտ զթխսամայր մի 'ի տան շինականի ուրումն. և 'ի կամիլն ուտել զայն, ասէ հաւն. մի՛ սպանաներ զիս, զի ես ազազուն եմ, այլ մնա՛ զի ծնցին ձագք իմ, որք իցեն փափուկք. և կարող լինիցիս լաւ ևս վայելել: Նա պատասխանի աղուէսն. ես լինէի արդեօք յիմար, եթէ յուսով ձագուց քոց, թողուի զքեզ, որ ունիմ 'ի ձեռին իմում:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ յոյժ յիմար է նա, որ թողու զստոյգ իրս վ՟ անստուգից:

Ի

## Ի վ՛ր Շան և Իշոյ:

Շունն տեսեալ զի ոչ կարէ զդէմունել գայլոյ, կամեցաւ գտանել զընկեր մի, առ ՛ի օգնել ինքեան. և ՛ի տեսանել զէշն զի բարձեալ էր զմեծ համետն, համարեցաւ, թէ այն էր սպառազինութիւն իմն զինաւոր. և լուեալ ևս, զի նա ունէր զձայն զօրաւոր, վարկաւ թէ իցէ կարի իմն կորովի. նմին իրի առեալ յընկեր իւր, գնաց ճակատիլ ընդ գայլոյ: Այլ իբրև ետես զգայլն՝ իսկ և իսկ փախեաւ, և եթող զշունն միայնակ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ ոչ պարտիմք գտանել զառաքինութիւն ուրուք, ոչ ՛ի մեծամեծս խօսելոյ, և ոչ ՛ի մեծութենէ մարմնոյ:

## Ի վ՛ր Գայլոյ, և Երկու Շանց:

Գայլն կացեալ ՛ի վ՛ր բլրոյ միոյ՝ ետես երկուս շունս, որք պահպանելով զհօտ մի ոչխարաց, մարտնչէին ընդ միմեանս. և համարելով թէ ժամ է յարձակիլ ՛ի վ՛ր ոչխարաց, իսկոյն ընթացաւ առ հօտն, և տարաւ ՛ի բաց զմինն: Զայս տե-

սեալ շանցն՝ նոյնհետայն թողին զմորթն իւրեանց, և ընթացան առ գայլն, թափեցին զաշխարն ՚ի ձեռաց, և բազում հարուածս եասուն նմա, մինչև հազիւ դիմանան զերծուցանել: Աչխա գնա այլին գայլ, և յանդիմանեաց ասելով, թէ յիմար գտար, զի յարձակեցար ՚ի մի հօտին ուր երկու շունք զօրաւորք էին պահապան. և նա ասէ: Ես եղէ խաբեալ, զի տեսի զնա մօրանչել ՚ը միմեանս. և նա ասէ. յորժամ՝ երկուք մօրանչին ընդ միմեանս, և անասնեն զոմն թշնամի հասարակաց՝, առ ժամայն հաշտին ՚ի մէջ իւրեանց:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ որչափ շարժէ թշնամութիւն զոր ունի որ ընտանեբար առ այլ ումն:

## Ի վր̃ Խոզի. և Ոչխարի:

Յանդիմանէին ոչխարքն զխոզն, երբ զի գոլով սուցեն՝ և գզուեալ ՚ի նմանէ, ոչինչ պաղատէր, որպէս ինքեանք առնէին. քանզի ասէին հանապազ զկաթն, և զասր. Պատասխանի ետ խոզն. ահա ես ոչ առնէ ինձ զայս գզուածս առանց վախճանի.

նի, զի յորժամ մեռանիցիմ, ընկալցի յինէն զպտուղ :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ ոչ ոք տակայ աշխատութե առանց ինչ յուսոյ վարձուց :

## Ի Վր Մորեխի. և Տատրակի :

Մորեխն տեսեալ զցինն, զի թռանէր զարկանելով, և ձախերբ, որպէս է սովորութի իւր, առէ ցտատրակն. Հայեաց ի ցինն, թէ զինչ զնայ ուժգին սպառնալով. երկնչիմ ես յոյժ 'ի ցասմանէ նր: Նա պատասխանի տատրակն : Մի երկնչիր 'ի կառաչմանէ սորա. զի այս սպառնալիք յանգին 'ի մուկն ինչ, կամ 'ի ձագ ինչ հաւու. պարտիմք մանաւանդ երկնչել 'ի բազէէ, զորոյ զձիրանն կանխաւ զգամք քան զձայնն :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ առաւել երկնչել պարտիմք 'ի նոցանէ որք կան հանդարտ և լռեալ, քան 'ի շաղակրատից. որք բանիւք և եթ սպառնան :

## Ի վր՛ Առն ուրուք որ Թագուցեալ էր զգանձս:

Այր ոմն Թագուցեալ էր զգանձս իւր յանտառի միում, և ոչ ոք գիտէր զայն բայց միայն կնքահայրն իւր, որ զամենայն գանձսն գողացաւ: Իբր ձ արարեալ ոմն. և ոչ գտեալ զգանձն՝ ՚ի կասկածի եղև թէ կնքահայրն իւր գողացեալ իցէ. և գնացեալ եգիտ զնա, և ասէ. վաղիւն կամիմ, զի երթիցուք Թաղեսցուք և զայլ հազար դահեկանս, անդ ուր է գանձն իմ: Կնքահայրն գնաց գիշերայն ՚ի տեղին, և եդ դարձեալ զգանձն զայն զոր բարձեալ էր. որպէս զի նա դիցէ և զայն հազար դահեկանսն, և ինքն զբովանդակն ես բարձցէ: Գնաց այրն, և գտեն զգանձն, տարաւ ՚ի տուն: Յետ այնորիկ եգիտ զկնքահայրն, և ասէ ցնա. մատնի՛չ դու և անհաւատարիմ. առ հեձուկս քո ստացայ ես զգանձն իմ: Իսկ կնքահայրն յանդիմանեալ ոչ կարաց զլանալ զայն, այլ խոստովան եղև:

Իմաստ առակիս:

Նմին իրի ասի հասարակօրէն, որ զբովանդակն կամի, զբովանդակն կորուսանէ:

Ի

## Ի ՎՐ ԹՈՒԹԱԿԻ :

Թութակն 'ի յարգի էր համարեալ 'ի տան նախարարի ուրումն, և այլ թռչունքն զքանչացեալ՝ առէին ցնա. թէ ընդէ՞ր առնէր նմա զայն պատիւ. նա ետ պատասխանի, զի ես նկրտիմ նմանեցուցանել զբարբառ իմ բարբառոյ մարդոյ. և խօսիմ իբրև զմարդ:

### ԻՄԱՍՏ ԱՌԱԿԻՍ :

Առակս նշանակէ, թէ պարտիմք ուսանել զազատական արուեստս, որպէս զի 'ի վարկման լինիցիմք:

## Ի ՎՐ ՀԱՐՈՒԱԾԵԱԼ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ :

Իմաստասէր ոմն հարուածեալ բռնցով յումեքէ. ոչ միայն ոչ զայրացաւ, այլ և ետ նմա դրամս. յորոյ վր ամենեքեան զքանչանային տեսլով, թէ արժանի էր փոխել յոյժ ումեքէ: Նա ետ պատասխանի. յիմար էք դուք, այսու օրինակաւ խնդրեցից ես զվրէժ իմ: Նա որ ընկալաւ զդրամսն, եհար և զայլ ոք ևս, կարծելով ընդունել և զայլ դրամսն. և սպանաւ 'ի նմանէ: Աւստի առէ իմաստասէրն: Տեսէք բարեկամք իմ. զի նե-

ընկլով անհրաւութեանց, խստագոյն վրէժ
առեալ լինի առանց աշխատութեան։

Իմաստ առակիս։

Առակս ցուցանէ, թէ բազում անգամ ներելն առաւել վնասէ չարարարին, քան զվրէժխնդրութիւն զոր ընդդէմ նր խորհի առնել։

### Ի վր̃ Հօր ուրումն ծերոյ, և Որդւոյ Նորա։

Որդի մի արտաքսեաց 'ի տանէ զհայրն իւր. և նա գնաց 'ի հիւանդանոց ինչ։ Յաւուր միում յանցանելն անտի որդւոյն. ասէ հայրն. աղաչեմ զքեզ որդեակ առաքեա ինձ զոյգ մի սաւանի յընչից իմոց, զորս մեծաւ աշխատութ̃ ստացայ։ Եւ նորա շարժեալ 'ի գութ, առաքեաց զայնս 'ի ձեռն որդւոյ իւրոյ. ասելով նմա տանել առ պապն իւր։ Եւ նա զմինն միայն տարաւ։ Իմացեալ զայս հօրն, եհարց զնա, թէ ընդէ՞ր զմինն միայն տարեալ էր, և նա ասէ. կամիմ ես պահել զմիւսն վասն քո, յորժամ. ընթիցես 'ի հիւանդանոցն. զոր օրինակ է նա այժմ։

Ի-

Իմաստ առակիս:

Առակս խրատէ զամ որդիս պատուել զհայր և զմայր. զի անկարելի իմն է, թէ այն զոր առնէ որդին ծնողաց, ոչ փոխարինեսցի նմա յորդւոց իւրոց, եթէ բարի, և եթէ չար:

Ի Վէ Ոչխարի ըմբռնելոյ ՚ի գայլոյ:

Ոչխար մի ըմբռնեալ ՚ի գայլոյ, ոչինչ իւիք շարժեցաւ. և ըստ բարեբախտութեան իւրոյ զերծաւ: Յետ այսորիկ ըմբռնեալ ՚ի շանէ, այնչափ ուժգին բառաչեաց, մինչև հովիւն լուաւ և ընթացեալ թափեաց ՚ի բերանոյ շան: Ապա եհարց հովիւն, թէ առ ինչ յորժամ կալեալ եղև ՚ի գայլոյ, ոչ բառաչեաց, և յորժամ կալեալ եղև ՚ի շանէ այնպէս զօրութբ բառաչեաց: Նա պատասխանի ետ և ասէ. ես առաւել դժուարեցայ ՚ի վնասելն ՚ի շանէ, քան ՚ի գայլոյ. զի գայլն ՚ի բնէ է թշնամի մեր. և շունն պահապան տան. և վասն այն բռնադատեցայ ցաւել յոյժ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ թէ որչափ դառն են վնասքն ընկալեալք ՚ի նմանէ, որ պարտէր ՚ի ձեռաց այլոց ազատել զմեզ:

Ի

## Ի վր Ագռաւու, և Օձի:

Ագռաւ մի քաղցեալ՝ ետես զօձ մի զի ննջէր յարեւու. և թռուցեալ կալաւ զնա ՚ի ուտել. և օձն դարձեալ խայթեաց զնա. Իսկ ագռաւն ՚ի մեռանելն իւրում՝ ասէ. բարէ եղկելույս. զի վասն այսր գտայ կերակրոյ կորուսանեմ զկեանս իմ:

Իմաստ առակիս:

Առակս յանդիման առնէ զմարդն որ սակս յանկութե շահու դնէ զանձն ՚ի վտանգի կենաց:

## Ի վր Ճնճղկի միոյ, և Աղաւնեաց:

Ճնճղուկ մի տեսեալ զընտանի աղաւնիս էին յաղաւնոցի միում բարւոք սնուցեալ, սպիտակացաւ՝ և գնաց յաղաւնոցն յայն առ ՚ի կեալ ՚ը այնց աղաւնեաց: Աղաւնիքն ցորչափ լռեալ կայր ճնճղուկն համարեցան զնա աղաւնի. և թողին զնա կալ. բայց յորժամ սկսաւ կարկաչել, ծանեան թէ չէ ՚ի տեսակէ իւրեանց. և արտաքսեցին յընկերութէ իւրեանց հարուածելով: Եւ նա դարձաւ առ այլ ճնճղուկս, որք ո՛չ ճանաչելով զնա, զի փոխեալ էր զգոյնն, վարեցին յինքեանց.

քեանց. և այսպէս կամելով լինել յեր-կուց երամոց, կորոյս զմինն, և զմիւսն :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ զնս, որք ըստ սովորէն բուռն առնեն զնել զմի տան յերկուս աս-պանդակս (փ. եօդէնկի) և հուսկ յե-տոյ, ոչ 'ի մինն և ոչ 'ի միւսն կարեն կալ :

## Դ ՂԷ Եղջերուի միոյ :

Եղջերուին կալեալ եղև յաւնէ միոյ. որ կապեաց զնա 'ի միոյ տանէ. և պա-հէր 'ի տան սնուցանելով : Դժուա-րացեալ եղջերուին կալ ընդ մարդկան. փախեաւ չուանաւն որ յոտին. և դար-ձաւ 'ի բոյն իւր. և կառուեալ չուանին 'ի ճիւղ ինչ ծառոյ, ոչ կարելով մեկ-նել անտի առ 'ի գտանել զկերակուր. մե-ռաւ 'ի քաղցոյ. և մինչդեռ մեռանէր, ա-սէ ցանձն իւր : Աւաղ Թշուառացելոյս, որ ոչ հանդուրժելով կալ 'ի ծառայութեան առ մարդկան, անզգուշութեամբ զրկիմ 'ի կենաց :

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ են ոմանք որք կամելով զերծանել ՚ի միջասահման ինչ վտանգէ, անկանին ՚ի մեծագոյնն ։

### ՚Ի վր. Մշկյո, և Աղուեսու ։

Անձն գոլով քաղցեալ, և չունելով ինչ ուտելի, ետես ՚ի վր ծառոյ միոյ գդոնի մի կաղնիս, և ոչ կարելով ելանել ՚ի վեր, կեղծեաց զինքն մեռեալ ։ Ագապինքն իբրև տեսին զայս, իջին ՚ի ծառոյ, և սկսան շուրջ զնովաւ պարառնուլ. և նա արագութեամբ կալաւ զմին և եկեր ։

Իմաստ առակիս ։

Օ՜յն զոր զօրութիւն մարմնոյ անկարանամք առնել, առակս նշանակէ առնել հանճարով ։

### ՚Ի վր. Արեւոյ, և Գործոյն ։

Արեայն տեսանելով զգործունն արագ արագ ստոստել, տրտնջեաց զբնութէ, զի տանելոյ զգործունն այնպէս արագաշարժս, և զինքն այնպէս դանդաղ, և ծանրացեալ բեռամբք յոյժ ։ Բայց յետոյ տեսանելով զգործունն լինել կերեալ

բեալ յարագիլ մի առ մի, փոքր մի մխի_
թարեալ ասէր: Այժմ չեմ ես յիմար,
զի մեղադիր եղէց բնութեան, որ զիս
ղոյսօրինակ քաջ սպառազինեաց, որով
չեմ ենթարկեալ այսց վտանգաց:

Իմաստ առակիս:

Առակս ուսուցանէ մեզ շատանալ պար-
գեւօքն զոր ընկալեալ եմք առ յոյս, և 'ի
բնութենէ:

Ի Վը Առնէտից:

Առնէտքն խորհուրդ 'ի մէջ առին տա_
պալել յերկիր զկաղնին մի կրծելով զամ
արմատոն ատամամբք, որպէս զի միա_
նիցեն պատճառս ելանելոյ և իջանելոյ դիւ-
րաւ, և մնանելոյ կաղնեօք. այլ խոհե_
մագոյնն 'ի նոցա ասէ. Եթէ մեք այժմ
հատցուք յարմատոյ զծնուցիչն մեր, 'ի
գալ ամին ո՞ տացէ մեզ ուտել:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ այր խոհեմ պար-
տի խորհիլ ոչ միայն զառաջիկայն, այլ
և զապագայն:

## Ի վր՚ Շան, և Տեառն իւրոյ։

Սեպուհ ոմն ունէր շուն մի, զոր ոչ զի զինքն սիրէր, մնուցանէր ձեռօք իւրովք, և ձեռօք իւրովք արձակէր 'ի կապանաց. և յորժամ կամէր, տայր կապել զնա, և գանել 'ի ձեռն միոյ 'ի ծառայից իւրոց, առ 'ի տալ նմա համարել, թէ զբարին ընդունի 'ի տնէ իւրմէ, և զչարն 'ի ծառայէն։ Շունն դժկամակեալ վասն լինելոյն յոմ՛ հողի կապեալ և գանեալ, փախեաւ. և 'ի կշտամբելն 'ի տնէ իբր ապերախտ, սակս փախչելոյ յիւրմէ որ սիրէր զնա, և մնուցանէր այնպէս սիրողաբար, և ոչ երբէք գանէր զնա, կամ կապէր. ետ պատասխանի շունն և ասէ. ես համարիմ 'ի քէն ընդունել զչարիսն, զոր ծառայն քո առնէր հրամանաւ քով։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ զչարիսն պարտ է գրել նմա, որ է պատճառ այնմ։

## Ի վր՚ Արջոյ, և Մեղուաց։

Արջն գնացեալ 'ի փեթակ մեղուաց, եղև խայթեալ 'ի մեղուէ միոյ. և այնպէս կատաղեցաւ, մինչև ճիրանօք իւրովք աւե-

րեաց

րեաց զամենայն փետրակս նորա. և ետ_սեալ մեղուաց քանդեալ զտունս իւրեանց, բարձեալ զկերակուրս իւրեանց. և սպա_նեալ զձագս իւրեանց, յարձակեցան առ համարակ 'ի վ՛ր նորա, և փոքր մնաց ես սպանանէին զնա. իսկ նա հազիւ զեր_ծեալ 'ի ձեռաց նց, ասէ: Լաւ ես էր ինձ տանել խայթուածոյ միոյ մեղուի. քան գրգռել զամենեսեան 'ընդդէմ' ինձ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ մեզ, թէ փոքր չար է տանել անիրաւութե միոյ ուրուք. քան կամելով պատուհասել զնա, թշնամի առ_նել ինքեան զբազումս:

Ի վ՛ր Հաւորսի ուրումն, և Թռչնոց.

Հաւորս ոմն տարածեաց զվարմն իւր առ 'ի ըմբռնել զթռչունս. և սփռեալ յերկիր գոլով խայծս, առ 'ի ձգել 'ի վարմն, եկին թռչունք ինչ առ 'ի ու_տել զայնս, իսկ հաւորսն՝ վ՛ն զի ե_րեւէին նմա սակաւք, ոչ կամեցաւ ձգել զվարմն մնալով գալստեան բազմաց. նո_քա իբրև կերան որչափ և կամեցան, թռ_եան 'ի բաց: Եկին և այլ թռչունքն առ 'ի ուտել, և հաւորսն նոյնպէս ոչ կա_

մե_

մեցաւ ըմբռնել զնոսա զի էին սակաւք. և նոքա ևս կերեալ թռեան 'ի բաց: Այսպէս արար զօրն ողջոյն, գնոյին և գոյին թռչունքն հանապազ. և հաւորսն մնայր մեծագոյն ևս որսոյ: Յուսկ յետոյ բերէ եղև գիշեր, և հաւորսն եհատ 'ի յոյս իւր ըմբռնելոյ զբազում թռչունս, ժողովեաց զվարմն. և կալաւ զմինն միայն՝ որ մնա_ ցեալ էր 'ի ճանապարհի:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ նոքա որք կամին ունել զա՛մ իրս, բազում անգամ հա_ զիւ 'ի ձեռս բերեն զսակաւն:

## Ի վ՞ր Երկուց Ձիոց:

Օրինակ ումն ունէր զօրաւոր երիվար մի. և գնեաց զայլ իմն անհաւասար նմա 'ի լաւութեան. և մնուցանէր զնա առա_ ւել փափկութ՞ և մեծաւ խնամով քան զա_ ռաջինն: Յետինն այս ասէ առ առա_ ջինն. վ՞ս ո՞ր պատճառի տ՞րն առաւել խնամ տանի ինձ՝ քան քեզ, որովհետև դու ես առաւել զօրաւոր, և յաւէտ որ_ բնթաց քան զիս: Նա ետ պատասխա_ նի. սովորութի մարդկան է լինել առաւել բարեսէր առ նոր հիւրս քան առ հինս:

Իմաստ առակիս ։

Առակս ցուցանէ զանհաստատուն մարդկան, որք սովոր են նախադասել զնորս, թէպէտ և իցեն յոռեգոյն, հնոց ։

## Ի վ՛ր Սոզէ, և Շան ։

Սոզն զարմանայր, զի շունն շողոքորդէր զտէրն, յորմէ ուսեալ էր զարուեստ հաւորսութե․ առ որ ասաց շունն․ վ՛ այն գանակոծութեց ուտեմ ես զնապաստակս, և զկաքաւս ։

Իմաստ առակիս ։

Առակս ուսուցանէ մեզ, թէ պարտիմք համբերութիւն տանել գանից ուսուցչաց․ զի սովոր են լինել պատճառ բազում բարեաց ։

## Ի վ՛ր Գետոյ, և Աղբեր նր ։

Գետն առէր ցաղբիւրն իւր ։ Ո՛վ դու հեղգ․ ընդէ՛ր կաս անշարժ․ և չունիս զձուկն ինչ ։ Ես հանապազ յառաջ ածեմ զբազում պատուական և ընտիր ձկունս, և գնամ 'ի ծործորս, ուր զուարճացուցանեմ զմարդիկ, և զանդս․ իսկ դու համարիս միշտ որպէս թէ իցես մեռեալ ։

ռեալ։ Աղբիւրն զայրացեալ ընդ բանսն գետոյն, դադարեաց ՚ի բղխելոյ. և ոչ արձակէր ջուր ՚ի գետն. և զրկեցաւ ՚ի ձկանց, ՚ի ջրոյ. և ՚ի չէք դարձաւ։

Իմաստ առակիս։

Առակս է ընդդէմ նոցա, որ անձանց գրեն զբարիսն զոր ունին, և ոչ ՚նմա. որ է աղբիւր ամ՚ բրաց։

## Ի վր Գայլոյ միոյ որ պճնեցեալ էր ոչխարէնի։

Գայլն արկեալ զիւրև զմորթ ոչխարի միոյ, գնաց ՚ի հօտ խնչ ընդ ոչխարաց. և յումեմն աւուր սպանանէր զոչխար մի և ուտէր։ Իմացեալ զայն տն սպան զգայլն և այնպէս ընդ ոչխարենեաւն ծածկեալ՝ կախեաց զծառոյ միոյ. և ՚ի հարցանել հովուաց, թէ ընդէ՞ր կախեալ էր զոչխարն զծառոյ, տայր պատասխանի. Մորթն զոր տեսանէք՝ է արդարև ոչխարի. այլ գործք իւր էին գայլոյ։

Իմաստ առակիս։

Առակս նշանակէ, թէ չէ պարտ դատել զմարդն ՚ի զգեստուց. այլ ՚ի գործոց զի բազումք ՚ը ոչխարենեաւն են գայլք յափշտակօղք։

Ի

## Ի ՎՐ ՍԱՅԼՈՐԴԻ:

Սայլորդն եհարց սայլն, թէ ընդէր յուի անիւն բազում գղրդիւնս առնէ, քան զայլ անիւսն. Նա պատասխանի ետ և ասէ. վն զի հիւանդքն են միշտ տաղտկացուցիչ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ հիւանդութիւն առնէ զմարդն տաղտկացուցիչ:

## Ի ՎՐ ԱՂՈՒԷՍՈՒ:

Աղուէսն կամելով մտանել 'ի տուն ինչ. յորում գիտէր թէ էին հաւք, բաղձայր զի մուտն ընդ որ ունէր անցանել՝ ընդլայնեսցի. և մտեալ 'ի ներքս, բերեալ արտաքս զմի 'ի հաւուց, ըղձայր զի մուտն անձկասցի, որպէս զի շունն մի կարասցէ զհետ պնդիլ, որ զայրագին ընթանայր զկնի:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ մահկանացուք 'ի իւրեանց դիւրութեան փոփոխեն զկամս և զխիղճս իւրեանց:

## Ի վր Ձիթենւոյ, և Դդմոյ:

Ձիթենին զարմանայր յոյժ, զի մի դդում, որ բուսեալ էր առ նա, յերկս ամիս այնչափ աճեցեալ էր, զի էր զանցեալ զիւրև, որ քսան ամաւ յառաջ էր անկեալ. Այլ գալստեամբ ձմերան չորանալով դդմոյն, ասաց ձիթենին. Արդար և չէ 'ի դէպ նախանձել ինձ, որք աճեն վաղվաղակի. գոլով ևս վաղ պատրաստեալք առ 'ի մահ:

Իմաստ առակիս:

Առակս յայտ առնէ, թէ գործք կարի շտապաւ եղեալք, ոչ են տեւական:

## Ի վր Աղուեսու միոյ որ անկեալ էր 'ի ջրհոր:

Աղուէս մի անկեալ 'ի ջրհոր ինչ, և մերձ յընկղմել, աղաչէր զայծն որ կայր 'ի վերայ առ եզերբ ջրհորոյն, զի արձակեսցէ զշուան մի, և հանցէ զինքն անտի: Ասէ այծն. զիարդ անկար 'ի վայր. և աղուէսն ասէ. այժմ չէ ժամ պատմելոյ քեզ զայս. յորժամ հանցես զիս աստի 'ի վեր, ասացից քեզ. զի յայնժամ անցեալ է իրն:

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ յորժամ է ոք 'ի վտանգի կենաց, ոչ պարտի ծաղրել ըզժամանակն 'ի շաղփաղփուխս. այլ պարտի գտանել զօգնութիւն որչափ փութով մարթ իցէ ։

'Ի վ՛ր Ագռաւու, և Պանրոյ ։

Այր ոմն ունէր զկտոր մի պանրոյ յարկեղ ուրեք. և գոլով յարկեղ մուկն մի որ կրծէր զպանիրն, եդ յարկղն զկատու մի, զի կալցի զմուկնն. կատուն կալեալ և կերեալ զմուկնն, եկեր և ըզպանիրն ողջոյն ։

Իմաստ առակիս ։

Առակս յանդիմանէ զանմտագրութիւն բազմաց, որք առ 'ի դարմանել իրէք փոքու, հանդիպին այլում որ է կարի մեծ քան զայն ։

'Ի վ՛ր Շան միոյ որ երկնչէր յանձրևոյ ։

Էր շուն մի, որ յետ նուաճագի յորժամ անձրևէր, ոչ երբէք ելանէր արտաքս 'ի տանէ. և հարցեալ յայլմէ շանէ, թէ ընդէր ոչ ելանէր, ետ պատասխանի. ես միան-

գամ մերձեցայ 'ի ջուր եռացեալ, որ եզերծ զմորթ թիկանց իմոց, և վասն այն երկնչիմ ես 'ի ցուրտ ջրոյ:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ որ կրեաց զծանր չարիս, երկնչի ես 'ի թեթև չարեաց:

## Ի ՎՐ ԲԺՇԿԻ ՈՒՐՈՒՄՆ, ԵՒ ՀԻՒԱՆԴԻ:

Հիւանդ ոմն հարցեալ եղև 'ի բժշկէ, թէ զիա՞րդ կեայ. Նա ետ պատասխանի, թէ անդր քան զչափն քրտնիմ ես գլխովին. ասէ բժիշկն. բարի է այդ նշան: Յայլում աւուր դարձեալ հարցաւ, թէ ո՞րպէս կեայ. ետ պատասխանի. թէ ցրտանամ ես. ասէ բժիշկն. բարի նշան է այդ: Յերրորդում նուագի հարցեալ. ետ պատասխանի, թէ 'ի լուծելոյ որովայնի նուաղիմ. ասէ բժիշկն. բարի է այդ նշան: 'Ի վերջոյ հարցաւ յումեքէ 'ի բարեկամաց իւրոց, թէ զիարդ կեայր. Նա ետ պատասխանի. բարեոք կեամ, այլ մեռանիմ:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ, թէ բազում անգամ վնասն, է ուսուցիչ մարդոյ:

## Ի ՎՐ Ապողոնի, և Առն միոյ :

Այր ոմն չարաբարոյ գնաց առ Ապողոն առ 'ի փորձել թէ ճշմարիտ խօսիցի, և ունելով ընդ վերարկուաւ զճնճղուկ մի, եհարց, թէ այն զոր ունի 'ի ձեռին կենդանի՞ իցէ եթէ մեռեալ. դնելով 'ի մտի, թէ եթէ ասիցէ մեռեալ, արձակեսցէ զճնճղուկն կենդանի. իսկ եթէ ասիցէ կենդանի. իսկոյն սպանցէ զճնճղուկն 'ը վերարկուաւ, մինչչև հանեալ իցէ արտաքս : Այլ չածն իմացեալ զխորագիտութիւն առնն, ետ պատասխանի : Այր դու ընդէ՞ր հարցանես զիս. զոր ինչ կամիս առնել արա, զի է յիշխանութեն քում. հան արտաքս զոր ունիս 'ի ձեռին. կամ կենդանի կամ մեռեալ, որպէս զիարդ հաճոյ է քեզ :

Իմաստ առակիս :

Առակաւս ուսանիմք, թէ առ 'Այ ոչինչ է ծածկեալ. և ոչ նա ինքն խաբէ զմեզ :

## Ի ՎՐ Արբեցողի ուրումն, և Կնոջ նր :

Կին ոմն ունէր զայր մի արբեցող. և կամելով ազատել զնա յարբեցութենէ. արար զայս ինչ : Գտեալ զնա յաւուր միում

արբեալ, տարաւ և եդ 'ի գերեզմանի մնում իբր մեռեալ: Իբրև համբերեցաւ թէ այն ինչ սթափեալ իցէ, գնաց բաղխեաց զդուռն գերեզմանին. և այրն ասէ, ո՞վ ես դու որ բաղխես զդուռն. ասէ կինն, ես բերեմ կերակուր մեռելոց: Նա ետ պատասխանի, մի՛ բերեր ինձ կերակուր, այլ ըմպելի. զի դու տաս ինձ գոյժ 'ի բերելդ կերակուր, և ո՛չ ըմպելի: Ասէ կինն լալով. ո՛վ տարաբախտիկ. զի ո՛չ օգտեցի քեզ հնարիւք. զի դու ո՛չ միայն ո՛չ ուղղեցար, այլ յոռի ևս եղեր:

Իմաստ առակիս:

Առակս ուսուցանէ մեզ, թէ չէ պարտ յարատևել 'ի չարն. զի սովորութիւն կարի իմն թերի բէ զմարդն առ 'ի գործել չար, թէպէտ և ո՛չ կամիցի:

Ի ՀԷ Գուսանի ուրուսն:

Այն ոմն գուսան խոստանայր ցածուցանել զցասումն չաստուծոց առ 'ի շահել այնու: Ոմանք ամբաստան եղեն զնմանէ լինել ամբարիշտ, և ետուն դատապարտել առ 'ի մահ: Այր ոմն տեսեալ զի տանէին զնա սպանանել. ասաց. դու որ

որ սովոր էին ցածուցանել զդատաւորն չաստուծոյ. զի արդ տկարացոյց փոխել ըզխորհուրդս մարդկան :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ բազումք խոստանան զմեծամեծս, և ոչ կարեն տանել զփորձունս :

Ի վ՛ր Շան միոյ ծերոյ անարգելոյ 'ի տնէ իւրմէ :

Ծերացեալ շուն մի վայրապար անխայէն լինէր 'ի տնէ յորսորդութե. զի առ ծերութե ոչ ևս կարէր ընթանալ : Կալեալ էր նա զերէ մի, և այն զերծաւ 'ի ժանեաց իւրոց. և 'ի կշտամբելն զնա տն իւրոյ բանիւք, և 'ի սպառնալն զանի. ասէ շունն, պարտ էր քեզ ներել ինձ. զի եմ ծերացեալ. և պարտ էիր յիշել. զի 'ի մատաղութե իմում էի քաջ. այլ ոչ ևս տեսանեմ. ոչինչ իր է համայ առանց արգասեաց : Կալար զիս բարեկամ 'ի մատաղութե. և այժմ ատես զիս 'ի ծերութե :

Իմաստ առակիս :

Առակս ցուցանէ, թէ միշտ սիրելի է առաջիկայ օգուտն :

Ի

## Ի վր Ձիոյ. և Առիւծու:

Առիւծն գնաց պատառել զձին. և զի ծեր էր. և ոչ կարէր յաղթել նմա առ նուաղեալ լինելոյ զօրութե իւրոյ. սկսաւ առնել ցնա նենգութեամբ. թէ ինքն իցէ բժիշկ: Ծանուցեալ ձիոյն զխաբէութի նր. կեղծեաց թէ վիրաւորեալ իցէ զմի ոտն իւր ՚ի փշոյից ինչ վայրի. և աղաչեաց զնա հայել և հանել զայն փուշ: Առիւծն արար այնպէս. յայնժամ ձին ամ զօրութբ իւրով աքացի եհար նմա. և ապա սկսաւ փախչել. և առիւծն բզկտեալ. զի առ ցաւոյն էր կիսամահ եղեալ. ասէ. վայ ինձ անմտութեան յիրաւի եղև ինձ այս. և նա խնդրեաց զվրէժ զանմտութեան որում արժանի էի:

Իմաստ առակիս:

Խորամանկանց [illegible]. Պարտ է երկնչել ՚ի թշնամեաց, եւ առաւել ՚ի նմանէ, որ է թշնամի, և կեղծէ լինել բարեկամ:

## Ի վր Կապկի. և Աղուէսու:

Կապիկն աղաչեաց զաղուէսն պարգևել իւրեան զմասն ինչ ձետոյ իւրոյ առ ՚ի ծածկել զյետոյս իւր. քանզի ունէր ինքն զչափ այնմ, որ աւելորդ էր նմա: Ապա_

պատասխանի աղուէսն. Թէ առաւել կամիմ ընդ քարշ ածել յերկիր՝ քան ծածկել զյետոյսն կապկի։

Իմաստ առակիս։

Բարոյականութի. Են բազումք որք պէտս ունին, և բազմաց առաւելեալ են փարթամութք. բայց ոչ ոք փարթամ կամի տալ աղքատաց զայն որ աւելորդ է ինքեան։

## Ի վէ Գառին, և Գայլոյ։

Գառն տեսեալ զգայլն 'ի յուսումնէ թշնամանեաց զնա։ Ասէ գայլն. ով թշնամական, դու ո՛չ թշնամանես զիս, զի ոչինչ հոգամ զքէն, այլ երկնչիմ 'ի տեղւոյ յորում կաս դու։

Իմաստ առակիս։

Ժամանակն, և տեղին բազում անգամ համարձակեցուցանեն զանարգն։

## Ի վէ Իշոյ։

Իշն պարտիզպանի ուրումն աղաչէր ըզԴիոս զի տացէ նմա զայլ ոմն տէր, զի նա զոր ունէր՝ էր կարի իմն անգութ։ Զիջեալ Դիոս աղաչանաց նր, ետ նմա զոմն որ շինէր զանօթս կաւոյ. որ բառնայր զառաւել ծանր բեռինս քան զպարտիզպանն։

պանն ։ Պարձեալ աղաչեաց զՊիոս, զի տացէ նմա զայլ ոմն տէր ։ Պիոս ծեծաղելով, ետ նմա զոմն, որ էր մորթեգործ ։ Ի վերջոյ երբև ծանեաւ էշն, ասէ. ով տարաբախտս, որ փոփոխելով զտեարս, գտի զոմն, որ ոչ միայն ոչ խնայէ ինձ, այլ և ոչ մորթոյ իմում ։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ ծառայքն յայնժամ զհետ լինին առաջին տեառն, յորժամ զփորձ առնուն զյետագունից ։

## Ի ԿԷ Իշոյ. և Ձիոյ ։

Էշն խորհէր, թէ ձին երջանիկ իցէ, զի էր զերացեալ, և կայր պարարտ. և ինքն թշուառ, զի էր ազազուն, և հանապազ տանէր զծանր բեռինս ։ Մարդիկ ապստամբեցան. և ձին սանձ՛ի բերան առեալ գնաց պատերազմիլ ունելով զտէրն ՛ի վերայ իւր. և վիրաւորեցաւ ։ Զայս տեսեալ էշոյն, շնորհ մեծ մատոյց Պիոսի զի զինքն էշ արարեալ է, և ոչ ձի ։

Ի-

Իմաստ առակիս ։

Բարոյականութիւն. Նոքա զորս ամբոխն համարի երջանիկս, են թշուառք առաւել քան զայլս ։

Ի վր Առիւծու, և Այծու ։

Առիւծն տեսեալ զայծն զի արածէր ՚ի վր վիթխարի ժայռի միոյ. որում ազդ արար գալ արածել վաղվաղակի յընդարձակ և ՚ի մեծ դաշտի ։ Եւ պատասխանի այծն ։ Ես յօժարութեամբ առնէի զայդ, եթէ դու ոչ էիր. զի ոչ ասես զայդ վասն բարւոյ իմոյ. այլ զի կամիս ուտել զիս ։

Իմաստ առակիս ։

Քանիցս անգամ եղեր խրատեն ՚ը պատրուակաւ բարւոյ. և խրատն այն ունէր ըղ-չար վախճան ։

Ի վր Անգեղու, և այլ Թռչնոց ։

Անգղն կեղծելով մեծարել զօր ծննդոց իւրոց. կոչեաց զամենայն թռչունս, առ որ եկին մեծագոյն մասամբ. և նա մեծաւ ցնծութեամբ և բարի օճանաւ ընկալաւ զնոսա, և ապա եկեր զամենեսեան ։

Ի-

Իմաստ առակիս :

Բարոյականութիւն : Չեն բարեկամք ամենեքին նոքա, որք խօսին զբանս բարիս. զի ընդ նոքօք բազում անգամ կայ թագուցեալ թոյն :

'Ի վր̃ Դիոսի, և Կապկի :

Դիոս կամելով իմանալ թէ 'ի մէջ ամ̃ կենդանեաց, որն ունիցի զեւս գեղեցիկ կորիւնս. և ամենեքեան յանդիման եղեն նմա, ընդ որս գնաց և կապիկն ածեալ ընդ իւր զկորիւնս իւր : Տեսեալ զնոսա Դիոսի, սկսաւ ծիծաղել : Յայնժամ ասէ կապիկն. Դիոս ծիծաղի, զի յայնչափ կորեանց միջի զորս եսես, առաւել գեղեցիկ դատեցաւ զկորիւնս իմ :

Իմաստ առակիս.

Բարոյականութիւն : Ամենեցուն գեղեցիկ երեւի իւրն :

'Ի վր̃ Մրջնոյ, և Ճպռան :

'Ի գալ ձմերան մրջիւնն տանէր զցորեանն առ արեգակն. զայս տեսեալ Ճպռան ընթացաւ, և խնդրեաց 'ի նմանէ ըշհատ մի ցորենոյ : Պատասխանի ետ մրջիւնն, ընդէր ոչ առնես դու երբեւ զիս, որ յա-

մա-

մարան ժողովեմ՝ զայն զոր կարեմ վասն ձմերան։ Ասէ ճպուռն. զժամանակն ամարան ծախեմ ես երգելով։ Եւ մրջիւնն ասէ. 'ի միտ քո, եթէ դու մեռացիս 'ի սովոյ 'ի ձմեռան, որովհետև յամարան ոչ յայլ ինչ պարապիս, բայց եթէ յերգս։

Իմաստ առակիս։

Առակաւս խրատիմք, թէ յորժամ ունիմք զոյժ, պարտիմք զհետ լինել շահել ինչ մի ծերութեան, որ է տկար։

'Ի վր՛ Նոխազի, և Գայլոյ։

Գայլն փախչելով յառիւծու, դիպաւ նոխազի միոյ, որ հայէր առ նա սպառնացեալ աչօք։ Զայս տեսեալ գայլն՝ լի ցասմամբ ասէ ցնա. ես ոչ երկնչիմ 'ի դժնեայ դիմաց քոց, այլ երկնչիմ յառիւծու, որ եթէ ոչ ընթանայր զհետ իմ, գիտէիր արդեօք թէ զի՞նչ էցէ ճակատել ընդ ցլու։

Իմաստ առակիս։

Բարոյականութի. Վշտագնեալ անձին ումեք չէ պարտ տալ վնաս. զի յաւէտ տառապեալ է նա որ է վշտագնեալ։

## Ի վր Խաչափառի, Մօր, և Որդւոյ:

Մայրն խաչափառին խրատէր զորդին զի մի ընթասցի յետս յետս այլ յառաջ կոյս. առ որ ասէ որդին. սկիզբն արա դու, և ես գնացից զկնի քո:

Իմաստ առակիս:

Բարոյականութի. Մի՛ և մի իւիք յան-դիմաներ զոք վն ախտին որ քեզ է սեփա-կան:

## Ի վր Խածանող շան:

Տէրն եդ զնշան ինչ խածանող շան, ոյ զի նովաւ իւրաքանչիւրոք զգոյշ լիցի: Շունն համարէր թէ այն եղեալ է վն պա-տուոյ. և սակս այսորիկ արհամարհէր զայլ շունս. առ որ ասաց ծեր շուն մի, թէ մի պանծայր, զի այն զոր դու համարիս պա-տիւ՝ է անարգութի:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ երբեմն ոք մեծամր-տէն՝ համարի թէ պատիւ իցէ նմա այն, որ է անարգութիւն և ամօթ:

## Ի վր Երկուց Պտուց:

Երկու պտոյք կային առ ափն գետոյ ինչ. մինն էր ի կաւոյ, և միւսն պղնձի. զերկոսին ևս տարաւ ի բաց գետն: Այն որ էր պղնձի ասէ ցայն որ ի կաւոյ. Թէ երկնչիմ ի բեկանելոյ զքեզ: Պատասխանի ետ կաւեղէնն և ասէ, Թոյլ արա ինձ հոգալ զի այնպէս արարից, առ ի չբեկանել զիս: Աղէ պղնձին ի բաց կաց յինէն. զի երկնչիմ թէ դու ընդ հարցես ընդ իս, քան ես ընդ քեզ:

Իմաստ առակիս:

Նորոյականութի. Լաւագոյն է կեալ ի հաւասար ընկերի ումեք անվտանգ, քան ընդ հզօրագունի հանդերձ վտանգաւ:

## Ի վր Մայր ծառոյ, և Փշոյ:

Մայրն կամ եղևնափայտն արհամարհէր զփուշն, թէ ինքն եգեալ լինէր ի պալատս, և թէ ունէր զառաջատուս նաւուց. իսկ ինքեանք էին ցածունք, և ոչինինչ պիտանացու: Փուշքն ետուն պատասխանի: Դու պարծիս ի մի պարգեւաց քոց, և ծիծաղիս զմեզ, բայց յորժամ հատցես դու տապարաւ, և մեզ

ոչինչ վնաս պատահեսցի, յայնժամ կամիս դու լինել նման մեզ։

Խրատ առակիս։

Նարօյականութիւն ՚ի մեծ ինչ բաղդի առաւել չարիք գտանին քան ՚ի փոքր բաղդի։

## Ի վէպ Առիւծու, և Մարդոյ։

Առիւծն վիճէր ընդ որսորդի և ասէր, թէ զօրութիւն իւր էր առաւել քան զզօրութիւն մարդոյ։ Եւ նա զլանայր զայն։ Յետ բազում խօսից մարդն եած զառիւծն ՚ի պիրամիդես ինչ, ուր եցոյց նմա զառիւծ մի քանդակեալ. որ եդեալ էր զգլուխ իւր ՚ի գոգ ուրուեմն մարդոյ։ Յայնժամ ասէ ցնա առիւծն. մարդն կարէ քանդակել զոր ինչ կամի. այլ եթէ առիւծն լեալ էր քանդակագործ ոչ մարդն, տեսանէիր զմարդն ընդ ոտիւք առիւծու։

Խրատ առակիս։

Առակս նշանակէ, թէ ամենայն ոք պարտի առնել զայն զոր կարէ. առ ՚ի նպաստ վիճին իւրոյ։

## Ի վէպ Շինականի ուրումն, և Զուարակի։

Շինական ոմն ունէր զզուարակ մի ամեհի. և առ ՚ի սանձել զնա ըստ կարի, զի խեթ_

խճճկէր եղջերօքն, կորզեաց զնա. և զի ոտիւքն աքացէր և մեռանէր յոյժ. ոչ եղգնա 'ի ձգել զայլն, այլ զխոփին. և ինքն ունէր զմահն. և զուարճանայր, թէ աբարեալ իցէ զայնչափ հնարս ճարտարութեամբ իւրով. և այնու հետև ապահով իցէ յեղջերացն և յոտից: Այլ անրնդել անասունն եգիտ զնոր եղանակ մեռանելոյ. զի ոտիւքն ցնդելով զաւազն, նոքօք ելից զաչս և զգլուխ նորա:

Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ ոմանք են այնպէս անհամբոյրք. զորս ոչ հնարիւք կամ ճարտարութեամբ մարթ է հանդարտել:

Դ Ճ Ցլու, և Մկան:

Մուկն եկեալ զմի օտն ցլու, և փախեաւ. ցուլն սպառնայր եղջերօքն. իսկ մուկն ծերծապելով զնովաւ, ասէր. Դու զօրաւոր ես և կորովի. այլ ոչ զի զոռոնի չնչին մուկն ինչ, որ մեռան քեզ:

Իմաստ առակիս:

Նախայականութի. Ոչ ումէք արժան է արհամարհել զթշնամի իւր, թէպէտ և փոքրիկ իցէ:

## Ի վր Կապկի, և Երկու Կորեանց Իւրոց։

Կապիկն յորժամ ծնանի, երկու կորիւնս ծնանի յորոց զմինն սիրէ, և զմիւսն ա-տեայ։ Դիպուածով իմն ի ծնանելն զեր-կու կորիւնս պատահեաց մեծ իմն վտանգ. և եառ զմինն ՚ի գիրկս, և զմիւսն ՚ի վե-րայ թիկանց իւրոց. ըստ պատահման սիրե-ցեալ կորիւնն իւր վիրաւորեցաւ ՚ի քա-րէ ինչ. և միւսն զերծաւ առանց ինչ արգելման։

Իմաստ առակիս։

Առակս ցուցանէ թէ բազում անգամ հանդիպի զի նուազ սիրեցեալ որդին ՚ի ծնողաց լաւագոյն լինի քան զնա որ է յոյժ սիրեցեալ։

## Ի վր Եզին, և Արջառոյ։

Ծերացեալ եզն մի հանապազ վարէր զերկիր. և արջառ մի որ տակաւին յոչ-ինչ աշխատանս մտեալ էր, ծաղր առ-նէր զնա ասելով։ Ես արածիմ ՚ի խո-տաւէտ դաշտս և եմ ազատ. և ոչ եր-բէք ընդ լծով անկեալ եմ. և կամ պա-րապորդ հանապազ. և դու հաշեցուցեր զպարանոց քո աշխատութեամբ. և մի՞ այնո-

րիկ

րէկ ես տգեղացեալ իսկ ես եմ գեղե-ցիկ։ Նզն ծերացեալ ոչինչ ետ պատաս-խանի։ Յետ սակաւուց եկես զարջառն ածեալ ՚ի սպանդ, և ասէ ցնա։ Պարա-պորդ կեանքդ քո այդ ո՞ւր եած զքեզ. ո՛չ ահա ՚ի սպանդ։ Այժմ հաւատամ թէ առաւել գովես զաշխատութիւնս իմ, քան զդատարկապորտութիւն քո։

Իմաստ առակիս։

Բարոյականութիւն. Ա՛ռ ՚ի բարւոք կեալ պարտ է աշխատել. զի այր դատարկա-պորտ է գլխովին տառապեալ աղքատուէ։ և ուրուրեմն ո՞ւնիցի զբարի վախճան։

## Ի վէ Շան, և Առիւծու։

Շունն ասաց ցառիւծն. ընդէ՞ր գնաս դու՝ ընդ անտառս մոլորեալ, և կրես ըզ-քաղց, զցուրտ, և զտապ. և ընդէ՞ր ո՛չ առնես իբրև զիս, որ առանց աշխատութե կեամ Հաճեյ։ Պատասխանի ետ առիւծն. դու ունիս զուտեստ քո, և ո՛չ տակաւ աշխատութեց. այլ ես Հպատակեալ, և ծառայ. իսկ ես եմ ազատ. և ո՛չ կա-միմ ծառայել։

Իմաստ առակիս։

Առակս ցուցանէ, թէ քանի՜ լաւագոյն իցէ ազատութիւն և ազնիւ։

## Ի վերայ Ձիոյն։

Ձուկն գետոյն ըստ պատահման ածաւ 'ի ծովն. ուր կարի յոյժ գովելով զազնուականութիւն իւր, արհամարհէր զամ՛ձկունս ծովու։ Սակայն ծովու ոչ կարացեալ հանդուրժել բանից նր, ասէ։ Կամիս զի զայդ զատումն քո արասցես, յորժամ՛ դու կալեալ լիցիս երբեք զիս, և ածցես 'ի ռամկաց. իսկ էս յաղթուականաց։

Իմաստ առակիս։

Նարոյականութիւն. Նոքա որք գովեն զանձինս՝ անարգեալ են. և երբեմն լսեն ինչ, 'զ որ դժուարին. և ատելին լսել։

## Ի վր Արծուոյ, և Աղուեսու։

Արծուին և աղուէսն արարին բարեկամութիւն ընդ միմեանս. և որպէս զի առաւել ևս սերտ լինիցի բարեկամութիւն, բնակէին մերձ միմեանց։ Արծուին կազմեաց զբոյն իւր 'ի վ՛ր ծառոյ միոյ. և աղուէսն զետեղեաց զկորիւնս իւր ընդ ծառովն 'ի մէջ փշոց։ Յաւուր միում՛ յելանելն աղուէսուն արտաքս առ 'ի գտանել կերակուր, ար-

ծուին

ծուլին եւ վա՛ զի ունէր զնոյն պիտոյս՛ի սակս ձագուց իւրոց, ոչինչ յիշատակելով զբարեկամութեն, տարաւ ՚ի բաց զկորիւնսն աղուեսուն. որ երբ եւ դարձաւ եւ ոչ ետես զկորիւնս իւր, տրտմեցաւ յոյժ. եւ ծանուցեալ թէ ՚ի բաց բարձեալ էին յարծուոյ. եւ ինքն ոչ կարէր խնդրել զվրէժ ՚ի նմանէ, սկսաւ անարգել զնա. եւ զնախ՝ բարեկամութիւն դարձոյց ՚ի թշնամութի: Դէպ եղեւ, զի ՚ի շէնս ինչ զոհէին զայծս: Արծուին յափշտակեաց զմասն ինչ հանդերձ բոցեալ ածխովք. եւ եբեր ՚ի բոյն իւր. որ էր կազմեալ ՚ի խոտոյ, եւ ՚ի կրկանց. եւ ձագքն զգացին զհուրն, եւ ակարանալով թռանել, անկան յերկիր. եւ աղուեսն յանդիման արծուոյ եկեր զամենեսեան:

### Իմաստ առակիս:

Առակս ցուցանէ, թէ նոքա որք խզեն զբարեկամութիւնն, թէպէտեւ զրկեալքն ակարացեն խնդրել զվրէժ, ոչ երբէք զերծանին ՚ի վրէժխնդրութեն նոյ:

### ՚Ի վ՛ր անձետ Աղուեսու մ՛ոյ:

Աղուէս մի կորուսեալ զձետ իւր ՚ի թակարդի ինչ, յուսահատեալ կամէր սպա-

նանել զինքն. ապա յետայնորէն խորհե-ցաւ խաբէութիւն առնել, զի և այլ ա-ղուէսքն հատցեն զձետս իւրեանց. և կո-չեցեալ զամենեսեան յորդորեաց հատանել բոլորովին զձետս իւրեանց. զի ոչ միայն ամօթ էր ունել զայն այնչափ երկայն. այլ ևս ազդմանաւոր 'ի վտանգս: Ասէ մինն 'ի նոցանէ. խորհուրդն զոր դու տաս մեզ ըստ այնորէն է, զի չունիս դու զձետ:

Իմաստ առակիս:

Առակս հայի առ նա, որք 'ի պատրուա-կաւ սիրոյ խորհուրդ տան այլոց սակս դիւրութեան իւրեանց:

## Ի ՎՐ ԱՂՈՒԷՍՈՒ, ԵՒ ՓՇՈՅ:

Աղուէսն իմացեալ զյարձակումն որսոր-դաց, եմուտ 'ի ցանգ ինչ. և փուշ ինչ մխեցաւ յոտն նր. և 'ի ցաւ իւն ասէ. ես եկի առ քեզ սակս օգնութեան, և դու վիրաւորեցեր զիս: Պատասխանի ետ փուշն: Դու վրիպեցար 'ի խորհելդ ունել զիս այնու խորագիտութեամբ, որով 'ի ձեռս բերես զայլս:

Իմաստ առակիս:

Նարօյականութի. Յիմարութի է խնդրել զօգնութի 'ի նոցանէ, որք վնասեն յա-ւէտ, քան օգնեն:

Ի

## Ի վր Առն ուրումն, և ձուածնայ Բադին :

Այր ոմն ունէր 'ի տան իւրում զխայ-տեայ բադին մի. և հանապազ աղաչէր զնա ածել նմա բարի ինչ. այլ միշտ հակառակն դիպէր նմա. զի 'ի վր այսր ամի էր աղքատ : Յաւուր միում կալաւ զնա, և ջաղխեաց զոտս բադնին. և զգլուխն հարաւ յորմն. յորմէ ել ոսկի բազում : Յայնժամ ասէ այրն. տես զբադինս զայս. զի ցորչափ պատուէի ես զնա, ոչինչ ետ ինձ. և այժմ ետ ինձ զոսկիս զայսոսիկ :

Խրատ առակիս :

Առակս հայի առ նս, որք եթէ երբեմն արասցեն զբարի, առնեն զայն բռնի :

## Ի վր Շինականի ուրումն :

Շինական ոմն գոլով մերձ 'ի մահ . ցան-կայր, զի որդիք իւր հանապազորդես-ցեն 'ի գործել զերկիր . Կոչեաց զնոսա և ասէ . որդեակք իմ . ես չուեմ յաստեացս, և զոր ինչս իմ թողում ձեզ, որք են յայգւոջ : Յետ մահուան հօրն խորհե-լով նց, թէ յայգւոջն իցէ գանձ ինչ թաքուցեալ, պեղեցին զայգին բովանդակ. և ոչինչ գտին անդ : Յետ այսորիկ այ-

գին

գէն այսպէս բարերք պեղեալ . տայր զպրտուղ տասել քան զառաջինն . և այն եղև զանձն զոր գտին :

Իմաստ առակիս .

Նարդյախանութիւն . Հանապազօր վաստակն յառաջ ածէ զմեծ գանձ :

## Ի վերայ ոմանց Ձկնորսաց :

Ձկնորսք ոմանք զօրն ողջոյն որսալով , կալան և ոչինչ . և պարտասեալք յաշխատանաց՝ չուեցին 'ի բաց . յայնժամ ձուկն մի մեծ փախչելով 'ի ձեռաց այլում ձկան , ընկեց զինքն 'ի նաւակն : Նոքին երբ զուարճացեալք դարձան 'ի քաղաքն , և վաճառեցին մեծագնի :

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ , թէ այն ինչ զոր տկարանայ առնել արուեստն , երբեմն տանէ բաղդն :

## Ի վ՛ր Ծերոյ ուրուք որ կարդայր զմահն :

Ծեր ոմն բարձեալ զբեռն մի փայտի յանտառէ , և վաստակեալ 'ի ծանր բեռանց , կարդայր զմահն , որ եկեալ յանկիման եղև նմա , և ասէ . Ահաւասիկ եմ .

ես. զինչ կամիս. Նա ետ պատասխա_
նի. ես կոչեցի զքեզ, որպես զի օգնեսցես
ինձ 'ի բառնալ զայս բեռն:

Իմաստ առակիս:

Առակս այս մեզ գիտել, թէ թէպէտև
իցէ ոք 'ի մեծ ինչ վտանգի, ոչ երբեք
կամի մեռանել:

## Ի վն՛ կնոջ աչացաւի, և բժշկի:

Կին ոմն ունէր ախտ յաչս իւր. և դաշն եդ ընդ ուրումն բժշկի. զի եթէ առողջացուսցէ զինքն, տացէ նմա այսչափ ինչ. իսկ եթէ ոչ առողջացուսցէ, տացէ նմա և ոչինչ: Յամ՛ նուագի յորում՛ երթայր բժիշկն այց առնել նմա, հանապազ զողանայր ինչ 'ի տանէն: Ի վերջոյ առողջացաւ կինն. և բժիշկն պահանջեաց 'ի նմանէ զվարձ իւր. իսկ կինն ոչ կամէր տալ նմա ինչ: Նմին իրի կոչեցաւ 'ի դատաստան. և ոչ զլացաւ զդաշնն. և խոստովան եղև թէ է առողջացեալ 'ի հիւանդութէ իւրմէ. այլ ասէր, թէ յորժամ կոյր էր ինքն, լի էր տուն իւր կահիւք և կարասիօք. և այժմ 'ի բառնալ աչացն ոչինչ տեսանէր 'ի տան:

Իմաստ առակիս :

Առակս նշանակէ, թէ նոքա որք են կարի ագահ, բազում անգամ վնասեն անձանց իւրեանց :

## Ի ՃԷ Կապկի, և Աղուեսու :

Կենդանիքն արարին խորհուրդ կացուցանել ինքեանց թագաւոր, և ընտրեցին զկապիկն սակս իւրոյ բարւոք կաքաւմանն : Նախանձոտ աղուէսն տեսեալ 'ի թակարդի միում զկտոր ինչ մսոյ. ասէ ցկապիկն. տէր իմ եկ ընդ իս, զի 'ի տեղւոջ ուրեք է գանձ ինչ. եւ ած զնա ուր էր թակարդն. և կապիկն անկաւ ինքնին 'ի նոյն. առ որ ասաց աղուէսն: Ով յիմար. կարծեցեր դու թէ բաղդի դիպար գոլով ընտրեալ առ 'ի տիրել ամ' կենդանեաց, այլ անձամբ զանձնդ խաբեցեր :

Իմաստ առակիս :

Աստանօր յանդիմանին նոքա, որք յիմարաբար ընթանան 'ի սարաբաղդութիս. և ծաղր լինին յամենեցուն :

### Ի վ՛ր Դարբնի ուրուք, և Շան նորա:

Դարբին ոմն ունէր զշուն մի, որ յորժամ ինքն աշխատէր, նա ննջէր հանապազ, և յերթալն առ ի ուտել սթափէր ՚ի քնոյ, և ուտէր զայն որ անկանէր ընդ սեղանով: Զայրացեալ ընդ այն տէրն՝ ասէ: Զիա՞րդ է այդ. յորժամ ես աշխատիմ, դու ննջես. և յորժամ ուտեմ ես՝ զարթնուս ՚ի քնոյ:

Իմաստ առակիս:

Առակս հայի առ նոսա, որք վաստակովք այլոց կեան:

### Ի վ՛ր Արիոնի, և Դելփինի Ձկան:

Արիոն անուանական երաժիշտն էր Մեթիմնացի, և եղև սիրեցեալ ՚ի Պերիանդրոսէ արքայէն Կորնթոսի: Նա արուեստիւ քնարահարութեան շրջեցաւ ընդ աշխարհս, և ստացաւ բազում ինչս. և յետ քանի մի ամաց հաստատեաց ՚ի միտ դառնալ ՚ի Կորնթոս: Եգիտ զնաւորդս ոմանս յերկիրն յայն, և եմուտ ընդ նոսա ՚ի նաւ: Իբրև տեսին նոքա թէ է կարի փարթամ ոսկւով և արծաթով, խորհեցան սպանանել զնա. Իբրև իմացաւ

նա

նա զայս, աղաչեաց զնոսա թոյլ տալ ին-
քեան փոքր մի նուագել. և նոքա արա-
րին նմա զայն շնորհս յառաջքան զըն-
կենուլն 'ի ծով: Արիոն զգեցեալ 'ի խելս
նաւին, քնարաւն նուագեաց կարի իմն
քաղցրաձայն իբր զկարապ զանողորմ գի-
ղուածն իւր. ակնունելով ածել 'ի գութ
զնաւորդսն. այլ տեսեալ զնոսա խստասիրտս,
ընկէց զինքն 'ի ծով: Նաւորդքն գնացին
զճանապարհ իւրեանց: Դելփին մի եբարձ
զԱրիոն 'ի վ՛ր իւր. և յապահովս եած
զնա 'ի Լակոնիա. և ապա նա ինքն գնաց
'ի Կորնթոս, և պատմեաց արքային զանցսն
որք անցեալ էին ընդ նա, և թէ զիարդ
ածեալ եղև 'ի գլինէ. այլ արքայն ոչ
հաւատաց այսմ: Զկնի սակաւուց ժա-
մանեալ նաւորդացն 'ի Կորնթոս, հար-
ցեալ եղեն, թէ իմացեա՞ց իցեն ինչ զԱ-
րիոնէ: Նոքա ետուն պատասխանի, թէ
էր յԻտալիայ. և էր մեծահամբաւ, և մե-
ծայարգ առ մարդկան: Յայսմ վայրի
յայտնեցաւ նոցա Արիոն նոյնին հանդեր-
ձիւք և քնարաւ որպէս էր յայնժամ յորժամ
ընկէց զինքն 'ի ծով: Նաւորդքն ապ-
շեալ, տխարուցան զլանալ զիրսն. և ըն-
կալան զպատուհասն ըստ իւրեանց յան-
ցանաց:

Իմաստ առակիս :

Ծառայականութիւն . Երբեմն գտանի առա_ւել գթութիւն յանասունս, քան ՚ի մէջ մարդ_կան . որք անուամբ միայն են մարդիկ :

## Ի ՃԷ Սարդի, և Ծիծառան :

Սարդն գործեալ էր զոստայն իւր առ ճա_նապարհաւ ուստի ստէպ էր անցանել ծի_ծառն յերթալ իւրում՝ յորսալ զճանճս : Յանցանելն ծիծառն պնդելով զՀետ ճան_ճի միոյ, տարաւ ընդ իւր զոստայնն, բզ_ճանճն, և զսարդն . և սարդն կախեալ գոլով ընդ օդն, ասաց : Ո՜վ ինձ յի_մարիս, որ Հազիւ կարեմ որսալ զնչին կենդանիս զայսոսիկ, և կարծէի որսալ զծիծառն, որ է այնչափ արագ, և կորովի :

Իմաստ առակիս :

Առակս ուսուցանէ, թէ ո՛չ պարտիմք առ_նել ինչ որ ՚ի վեր է քան զկար մեր :

## Ի ՃԸ Գեղջկին և [illegible] Ծառոց :

Բուսեալ էին ծառք ինչ ՚ի մի և ՚ի նոյն անդուոջ, յորոց մէջի ոմանք էին բարձունք, և գեղեցիկք, և առանց ոստոց . և ո_մանք թփուրք . փշրիկք, և ոստախիտք .

և

և սոքա էին արհամարհեալք ՚ի գեղեցկաց. դէպ եղև, զի տէրն կամելով կառուցանել զտուն մի, եւ հատանել զգեղեցիկս. իսկ տգեղք թողեալ եղեն կանգուն. և ասացին ցգեղեցիկսն. ո՜վ որչափ լաւագոյն են տգեղութիւնք մեր քան զգեղեցկութիւնս ձեր:

Իմաստ առակիս:

Առակս այս առնէ մեզ, թէ չէ պարտ տխրել վ̄ս լինելոյ ծնեալ տգեղ. քանզի գեղեցկութիւն բազում՝ անգամ՝ վնասէ:

## Ի Վր Մկան, և Ցնոյ:

Մուկն ետես զցինն ըմբռնեալ ՚ի վարմ ինչ, և գթացեալ ՚ի նա կրծեաց զլարն վարմին, և տեղի ետ ցնոյն թռանել: Նա երբեմն ազատեցաւ, գոլով քաղցեալ, մոռացաւ զբարերարութիւն ընկալեալ. և իսկոյն կալեալ զմուկնն եկեր զնա:

Իմաստ առակիս:

Առակս նշանակէ. թէ միշտ յորժամ առնես զհաճութիւն ինչ թշնամւոյ քում. փոխատրեսցէ քեզ հանապազ զապերախտութիւն:

---

## Դ ՃԷ Մեծատան աղքատին, և Բաղդի ։

Մեծատուն մին ասաց ցաղքատ մին՝ զի երթիցէ և խօսեսցի ընդ բաղդին, և աղաչեսցէ ՚ի դիմաց իւրոց, զի այլ մի ևս տայցէ նմա զհարստութիւն, զի ոչ ևս կամի. և կամէր տալ նմա վ͞ս այսր աշխատանաց հարիւր ոսկուս ։ Ասէ աղքատն. կարի շատ է այդ գին սակս այսչափ փոքր ճանապարհի. մեծատունն մատոյց նմա իննսուն. և աղքատն ասէ, տակաւին շատ է. մատոյց նմա ութսուն. և այսպէս եհաս մինչև ցտասն ։ Աղքատն եառ զտասն ոսկուսն. և գնաց գտանել ըզբաղդն. և ասաց ՚ի դիմաց մեծատանն, թէ ոչ ևս կամէր աւելի հարստութիւն. այլ մանաւանդ տայցէ ինքեան. որ էր աղքատ ։ Առ որ ասաց բաղդն, թէ կամէր կրկնապատիկ, ևս և եռապատիկ տալ մեծատան զհարստութիւնս. այլ ոչինչ կամէր տալ աղքատին. և կամէր՝ զի միշտ մնասցէ աղքատ, և թէ զայն տասն ոսկուսն ևս չէր ստացել, եթէ բաղդն չէր ննջել յայնժամ՝ յորժամ նա զայնս ստացաւ ։

Խրատ առակիս ։

Առակս նշանակէ, թէ բաղդն միշտ է բարեկամ՝ նմա որ է ՚ի յաջողութ͞ն. և

թեպէտ նա ինքն ոչ կամեսցի, տայ նմա զհարստութիւն, և զայլ բարիս. և հանապազ թշնամի է աղքատին:

Ի վ՛ր Հաւորսի ուրումն, և Մանկան նր:

Հաւորս ոմն եհար տասն թռչունս 'ի շամփուրն առ 'ի խորովել, և եդեալ զայնս առ հրով, պատուիրեաց միում 'ի մանկ-անց շրջշրջել զայն մինչև ինքն երթիցէ արտաքս առնել պիտոյից ինչ տանն. և յե-րանելն 'ի տանէ՝ առէ ցնա. զգո՛յշ լեր զի մի աղտեղեսցես զթռչունսդ. զի եթէ թողցես անկանել 'ի վերայ մոխրոյ, ես տաց ուտել քեզ զնա: Այն ինչ զրեթէ խո-րովեալ էին թռչունքն, մանուկն առ սա-կաւ աչալրջուե՛ թոյլ ետ անկանել 'ի վ՛ր մոխրոյ. և յիշեալ զայն՝ զոր ասացեալ էր նմա տէրն իւր, որ զեռևս չէր դար-ձեալ 'ի տուն, սկսաւ ուտել զթռչունսն. և եկեր զինունսն. այլ գոլով յափրա-ցեալ՝ ոչ կարաց ուտել զտասներորդն, նմին իրի սկսաւ լալ. և յայսմ վայրի դար-ձաւ տէրն. և տեսեալ զնա զի լայր, ե-հարց զպատճառ լալոյն. և նա առէ. յան-կարծակի անկան թռչունքն 'ի վ՛ր մոխ-րոյ. և կերայ զինունսն, այլ ներեա ինձ,

զի

զի այնպէս յագեալ եմ, մինչեւ ոչ կարեմ ուտել զատամնեբորդն։ Իսկ Հաւորսն զարձեալ 'ի տուն սովեալ՝ բռնադատեցաւ հացիւ՛ բժշկել զքաղցն իւր։

Իմաստ առակիս ։

Առակս նշանակէ, թէ որչափ իցէ պարզամիտ բնութիւնն տղայոց. եւ օտար յամենայն խաբէութեանց։

## ՎԵՐՋ։

# ՑՈՒՑԱԿ
## ԱՌԱԿԱՑՍ ԵԶՈՎԲՈՍԻ
### ԸՍՏ ԿԱՐԳԻ ԱՅԲՈՒԲԵ-ՆԻՑ։

---

## Ա.


Ագահի. 76։

Ագահի ուրումն. 143։

ագահի ուրումն, և Ընչից նորա. 166։

ագահի ուրումն, և Ունձորոց. 136։

ագռաւու. 35։

ագռաւու և Աղուէսու. 109։

ագռաւու, և Օձի. 186։

ածխագործի, և Թափչի. 61։

աղաւնոյ. 103։

աղաւնեաց և Բազէի. 31։

աղաւնոյ, և Մըջերկի. 104։

աղուէսու. 46. և 195։

անձեռ Աղուէսու միոյ. 215։

աղուէսու, որ անկեալ էր ՚ի ջրհոր. 196։

աղուէսու, և Այծու. 47։


աղ-

աղուեսու, և Առիւծու. 59:
աղուեսու, և Արագլի. 113:
աղուեսու, և Արծուոյ. 118:
աղուեսու, և Ինձու. 53:
աղուեսու, և Խախամոր. 178:
աղուեսու, և Կանանց ամանց որք ուտէին զհաւս. 134:
աղուեսու, և Կզի. 43:
աղուեսու, և մարմարեայ գլխոյ գայլոյ. 60:
աղուեսու, և Կապատակի. 159:
աղուեսու միոյ, և Շնականի. 139:
աղուեսու, և Շան. 158:
աղուեսու՝ որ կալեալ եղև ՚ի շանէ. 177:
աղուեսու, և Սրսորդաց. 44:
աղուեսու, և Փշոյ. 216:
աղքատի ուրումն որ եգիտ զգանձս. 169:
այծամարդի ուրումն, և Առն միոյ. 63:
առն ուրումն որ Թագուցեալ ըզգանձս. 182:
անապարծ Առն միոյ. 61:
առն միոյ խածելոյ ՚ի շանէ. 65:
առն ուրումն, և Օձի. 173:
առն ուրումն, և փայտեայ Ճագնի. 217:
այրի կնոջ ուրումն, և Աղախնայց նորա. 85:
անգեղ, և այլ Թռչնոց. 205:

| | |
|---|---|
| անդամոց մարմնոյ, և Որովայնի. | 42: |
| անտառի, և Շինականի. | 116: |
| ապողոնի, և Առն միոյ. | 199: |
| առաքինութե, և Դրամոյ. | 170: |
| ծերացեալ Առիւծու. | 27: |
| առիւծու, և Աղուեսու. | 44: |
| առիւծու, և այլոց կենդանեաց. | 23: |
| առիւծու, և Այծու. | 205: |
| առիւծու, և Գայլոյ. | 82: |
| առիւծու, Իշոյ, և Աղուեսու. | 125: |
| առիւծու, Իշոյ, և Նապաստակի. | 169: |
| առիւծու, և Լուոյ. | 108: |
| առիւծու, և Մկան. | 28: |
| առիւծու, և Որսորդի. | 210: |
| առիւծու, և Ցլու. | 132: |
| առնետից. | 189: |
| արբեցողի ուրումն, և Կնոջ Նր. | 199: |
| արիոնի, և Դելփինի միոյ. | 221: |
| արծուոյ. | 106: |
| արծուոյ, և Ագռաւու. | 121: |
| արծուոյ, և Աղուեսու. | 214: |
| արծուոյ, Բազէի, և Ձնոյ. | 137: |
| արծուոյ, և Խղջերկի. | 109: |
| արծուոյ, և Կաչաղակի. | 144: |
| արծուոյ, և Նապաստակաց. | 156: |
| արծուոյ, և Սիրամարգի. | 167: |
| արջոյ միոյ, և Առիւծու. | 73: |

արջոյ, և Մեղուաց. 190:
արտուտի. 75:
աքաղաղի. 21:
աքաղաղի, և Աղուէսու. 174:
աքաղաղի որ կալեալ եղև յԱղուէսու. 171:
աքաղաղի, և Կաքաւու. 59:

## Բ

Բազէից՝ որք մարտնչէին ընդ մի-
մեանս : 164:
բաղդի, և Առն միոյ. 141:
երկուց Բարեկամաց, և Արջոյ միոյ. 52:
բժշկի ուրումն, և Հիւանդի. 198:
բուոյ, և Ջղջիկան. 84:

## Գ

Գայլոյ միոյ որ զգեցեալ էր զոչ-
խարենի. 194:
գայլոյ և Աղուէսու. 114. և 176:
գայլոյ, և Գառին. 22:
գայլոյ, և Խոզի. 32:
գայլոյ, և Կռնկան. 26:
ծերացեալ Գայլոյ. 138:
գայլոյ, և Շան. 41:
գայլոյ, և երկուց Շանց. 179:
գայլոյ, և Ոզնւոյ. 151:

գայլոյ, և Ոչխարի. 96:
գայլոյ, և Պառաւոյ ուրումն: 107:
գառին, և Գայլոյ. 93. 120. և 203:
գետոյ, և Եղեբր նր. 193:
գողոյ, և Շան. 112:
գողոց. 94:
գորտոյ, և Թագաւորի իւրեանց. 30:
գորտոյ, և Եզին. 37:
Երկուց Գորտանց. 71. և 87:
գուշակի ուրումն. 67:
գուսանի ուրումն. 200:

## Դ

Դարբնի ուրումն, և Շան նր. 221:
դիոսի, և Կապկի. 206:
դիոսի, և Կենդանեաց. 96:
դիոսի, և Ճանապարհորդի ուրումն: 68:
դոն, և Դելփին ձկանց. 66:

## Ե

Եզին, և Երջառոյ. 212:
եզնավարի, և Եզանց. 140:
եղեգան, և Ձիթենւոյ. 56:
եղջերւի միոյ. 187:
Ծարաւեալ Եղջերւի. 128:
եղջերւի միոյ, և Եղանեաց. 186:
եղջերւի, և Ոչխարի. 122:

ե

եղին միոյ. 78:
եղին, և Առիւծու. 79:
եղին, և Որթոյ. 79:
եղջերուին, Գայլոյ, և Ոչխարի. 32:
եղջերուին. 115:
եղջերուին, և Եզանց. 117:
մարին Եղջերուին. 76:
երիվարաց՝ որք ընթանային յասպարեզի 160:
երիտասարդի ուրումն, և Ծերոյ. 144:

## Ի

Իշոյ. 203:
իշոյ միոյ, որ ունէր զապաշնորհ տէր: 150:
իշոյ, որ ոչ գտանէր զվախճան աշխատանաց իւրոց. 148:
իշոյ, և Ագռաւու. 101:
իշոյ, և Աղուէսու. 100. և 101:
իշոյ, Առիւծու, և Աքաղաղի. 80:
իշոյ, և Գայլոց. 45:
իշոյ, և Գայլոյ. 57:
իշոյ, և Գորտանց. 100:
իշոյ, և Խոզի. 170:
իշոյ, Կապկի, և Խլրդան. 142:
իշոյ, և Ձիոյ. 204:
իշոյ, և Որթու. 134:

Թու_

## Թ

Թութակին. 167. և 183:
Թռչնոց: 148:
Թռչնոց, և Ձագուց իւրոց. 127:
Թռչնոց, և Չորքոտանեաց. 38:

## Ի

Իտրուածեղ Իմաստասէրն. 183:
Ինձու, և Կապկաց. 188:
Իշոյ են. տես Էշ.

## Խ

Խեչափառն մօր, և Որդւոյ. 208:
Խեչափառն, և Աղուէսու. 94:
Երկուց Խոզից. 139:
Խոզն, և Ձիոյ. 147:
Խոզն, և Շան. 193:
Խոզն, և Շինականն ուրումն. 128:
Խոզն, և Ոչխարն. 180:
Խոզաքորակն. 137:
Խոյոյ, և Ցլու. 155:

## Ծ

Գեղեցիկ և տգեղ Ծառոց. 223:
Ծերոյ ուրումն, և Մահուան. 165:
Ծերոյ ուրումն որ կարդայր զմահն. 218:
Ծերոյ ուրումն, և Պատանւոյ. 161:
Ծիծառան, և Նղջերկին. 84:
Ծիծառան, և այլ Թռչնոց. 29:

Ծո_

Ծովածի. ընդ Ձկնկլի. 89:
Ծովու, և Հովուին ուրումն. 58:

Կ

Կապկի, և Աղուեսու. 202. և 220:
Կապկի, և Դելփինի. 90:
Կապկի, և երկու Կորեանց խերոց. 212:
Կատուի, և Պանրոյ. 197:
Կարապոյ, և Արագլի. 135:
Կարապոյ, և Սագի. 83:
Կնոջ ուրումն, և Բժշկի. 219:
Կնոջ միոյ, և Հաւու. 54:
Կնտակի ուրումն. 70:
Կողընջոց. 85:
Կզոյ. և Մ՚կանց. 123:
Կրիայի, և Արամազդայ. 152:
Կրայի, և Արծուոյ. 78:
Կրիայի, և Գորտանց. 188:

Հ

Հոր ուրումն ծերոյ, և Որդւոյ նր. 184:
Հօր միոյ, և Որդւոյ նր. 154:
Հաւու, և Ձագուց. 175:
Հաւու՝ որ ածէր զձու ոսկի. 107:
Հաւու միոյ, և Աղուեսու. 133:
Ընտանի Հաւու, և Ծ՚իծառան. 102:
Հաւորսի ուրումն, և վայրի Աղաւնոյ. 66
Հաւորսի ուրումն, և Թռչնոց. 191

Հաւորսի ուրուամն, և Մանկան Նր. 226:
Հաւորսի ուրուամն, և Սարեկի. 68:
Հերմեսի, և Անդրիագործի. 92:
Հերմեսի, և Պերձակի. 95:
սեաւ Հնդկի. 83:
Հովուի ուրուամն. 105:
Հովուի, և Գայլոյ. 81:
Հովուի ուրուամն, և Շան. 154:

Ձ

Ձիթենւոյ, և Գդմոյ. 196:
Երկուց Ձիոց. 192:
Ձիոյ, և Առիւծու. 202:
Ձիոյ, և Եղջերուի. 118:
Ձիոյ, և Իշոյ. 39. և 63:
Ձկանց. 143. և 214:
Ձկնորսի ուրուամն. 89. և 129:
Ձկնորսի ուրուամն, և փոքրիկ Ձկան. 62:
ոմանց Ձկնորսաց. 218:

Ճ

Ճանճի. 35:
Ճանճից. 91:
Ճանճի, և Մրջնոյ. 36:

Մ

Մայր ծառոյ, և Փշոյ. 209:
Մանկան միոյ, և Աւազակի. 37:
Մանկան միոյ, և Բաղդի. 130:

Ման_

Մանկան, և ոմանց Գիւղականաց. 121։
Մանկան, և կարճի. 133։
Մահ ուրումն Մեծատան. 104։
Մեծատան ուրումն, և Բաղդի. 225։
Մեղուաց. 88։
Մեղուաց, և Լուոյ. 163։
Խորհրդոյ Մկանց. 48։
Մկանց, և Կատուոյ. 149։
Ընտանի, և վայրենի Մկան. 24։
Մկան, և Չնոյ. 151. և 227։
Մրջնոյ. 97. և 124։
Մրջնոյ, և Ճպռան. 206։

Յ

Յոպոպոյ. 176։

Ն

Նապաստակաց. 97։
Նապաստակաց որք երկնչէին անպատ_
ճառ. 34։
Նապաստակի, և Աղուեսու. 153։
Նոխազի, և Ձիու. 207։

Շ

Շինականի ուրումն. 217։
Շինականի ուրումն, որ կամէր լինել
զինուոր. 147։
Շինականի, և Արագլի. 119։
Շինականի ուրումն, և Բաղդի. 86։

շինականի ուրումն, և Բանաստեղ–
ծի. 153:
շինականի ուրումն, և Գառին. 160:
շինականի, և Հերքուլեայ. 130:
շինականի ուրումն. և Մկան: 145:
շինականի, և Շանց նր. 64:
շինականի, և Որդւոց իւրոց. 53:
շինականի, և Օձի: 26:
շինականի ուրումն, և Զուարա–
կի. 210:
Խածանող Շան. 208:
շան միոյ՝ որ երկնչէր յանձրեւոյ. 197:
շան միոյ ծերոյ անարգելոյ՚ի տնէ
իւրմէ. 201:
շան, և Եզին. 46:
շան, և Իշոյ. 111. 168. և 179:
շան, և Ստուերի իւրոյ. 23:
շան, և Ոչխարի. 34:
շան, և Գայլոյ. 132:
շան, և Աքաղաղի. 72:
շան միոյ կոչեցելոյ յընթրիս. 131:
շան, և Պարտիզպանի. 81:
երկուց Շանց. 92:
շան, և Տեառն իւրոյ. 190:
շան, և Ախծու. 213:

Ո

Ոզնւոյ, և Օձի. 152:


ոչ–

ոչխարի ընկեռնելոյ 'ի գայլոյ · 185:
ոչխարի, և Խոլուկի · 157:
որդւոյ, և Հօր · 69:
որդւոյ, և Մօր · 51:
որդան, և Աղուեսու · 106:
պարարտ Արջառոց, և միոյ վառի, 135:
ուլու, և Գայլոյ · 113:
ուղտու · 49:
ուրուին որ խոստանայր ածոյ զան-
կարելիս · 71:
ուրուին, որ փորձեաց զբարեկամս
իւր · 158:

Չ

Չղջիկանէ, և Կզի · 98:
չղջիկան, փշոյ, և Ձկնկլի · 73:

Պ

Պանդխտաց · 99:
Երկուց Պանդխտաց · 86:
երկուց Պատանեաց · 55:
պարտեզպանէ, և Մկան · 176:
երկուց Պուտանց · 209·

Ս

Սագից և Կռնկանց · 77:
սայլորդէ, 195:
սարդի, և Ծիծառան · 223:
սարեկի, և Տատրակի · 181:
սերամորդի, և Կաչաղակի · 74:

սե-

սիրամարգի, և Կռնկան. 125:
սիրամարգի, և Սոխակի. 122:
սոխակի, և Բազէի: 162:

Վ

Վագեր և Որսորդի. 126:
վարազի և Աղուեսու. 75:
վարազի, և Իշոյ. 172:

Տ

Տատրակի, և Մրջիւան. 145:
տեառն, և Շան նորա. 177:

Ց

Ցնոյ. 112:
ցլոյ. 99:
ցլուց, և Առիւծու. 126:
ցլու, և Մկան. 211:

Փ

Փայտագործի, և Հերմեսի. 49:
փողահարի ուրումն. 56:

Ք

Քներթողի ուրումն, և Իշոյ. 172:

Օ

Օձաձկան, և Օձի. 142:
օձի. 103:
օձի, և Հողագործի. 39:
օձի, և Կարատոցի. 41: